



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material










233 464 D 1792a

ՇԻՐՎԱՆՁԱԴԵ



ՀԱՎԱՔԱԾՈՒ  
ՓՈՒՐԻԻԿ ՅԵՐԿԵՐԻ


17 25 2



ՀԵՐՄԵՍ = 1930 = ՅԵՐԵՎԱՆ








ՇԻՐՎԱՆՁԱԴԵ

Հ Ա Վ Ա Ք Ա Ծ Ո Ւ  
Փ Ո Ք Ր Ի Կ Յ Ե Ր Կ Ե Ր Ի

A I  
8525




„ՀԵՐՄԵՍ“ — ՅԵՐԵՎԱՆ — 1930.





John F. Kennedy



## ՍՐՃԱՐԱՆԻ ՀԱՃԱԽՈՐԴԸ

Նա ամեն որ դալիս եր այն սրճարանը, ուր սովորաբար լինում էյի յես:

Ներս եր մտնում ահագին անձրևնոցը կոնատակին, արագ քայլերով, վորպես անչափ դրազված մեկը, և իբր թե հոգնած նստում եր կլորիկ սեղաններէց մեկի քով: Խորշոմած ճակատը մեծ թաշկինակով սզրբելով, նայում եր աջ ու ձախ, հստարտ, բայց անհանդիստ նայվածքով:

Ծանոթներ շատ ունեի: Յերբ տեսնում եր նրանց, ներվային շարժումով վեր եր ցատկում աեղից ու մոտենում: Նստում եր նրանց մոտ առանց կանխապես թույլտվութուն խնդրելու, յերբեմն առանց բարեկիտ անգամ: Սակայն, յերբ բարևում եր, վոչ վոք չեր պատասխանում նրա բարեին և վսչ վոք աթողը չեր շարժում՝ սեղանի քով նրա համար տեղ բանալու: Բայց նա անվրդով՝ միշտ տեղ եր դանում, թեկուզ շրջանից դուրս:

Թվում եր, վոր այդ մարդն իր ծանոթների աչքում այնքան արժեք ունե, վորքան մի ավելորդ աթոռ: Յեվ նա բնավ չեր շփոթվում մարդկանց անուշադիր վարմունքից: Արտաքուստ ինքն ել արհամարհանքով եր վերաբերում նրանց:

Անուշադիր էյին դեպի նա և սրճարանի սպա-

առհինները: Յերբ ներս եր մտնում, նրանք նայում էյին միմյանց յերեսին և հեզնորեն ժպտում: Յերբեմն նուշնիսկ ծիծաղում էյին այն անպատկառ ծիծաղով, վոր հատուկ և հասարակական վայրերի ծառայողներին, յերբ գիտեն, վոր հաճախորդը լավ վարձատրողներից չե: Յերկար ժամանակ չէյին մտանում մարդու պատվերն ընդունելու կամ մտանում էյին դժկամակությամբ, գանդազ քայլերով, կարծես, մի ծանր, անախորժ պարտք էյին կատարում:

Ինձ շատ եր հետաքրքրում այդ մարդը: Նրա վրա անողոք ժամանակը վաղաժամ սփռել եր ծերության առաջին փոշին: Իր կարմիր-կապտադուշն յերեսով, իր ուռած ու մսալի քթով, վոր ծածկված եր բշտիկներով, իր հիվանդոտ ու միշտ ջրակալ աչքերով նա նմանվում եր անուղղելի ալքոհոլիկի: Սակայն, յես յերբեք նրան հարբած չէյի տեսնում: Նրա տձև ու հնամաշ սյուլրտուկը, վորի կուրծքն ու արմուճկները փայլում էյին պողպատի պես, մատնում էյին նրա սրտանի գաղանիքը: Բայց նա սշխատում եր իր չքավորությունը շղարշել շինծու արտաքին հրպարտությամբ: Իս դժայուն և ինքնասեր չքավորների հաշիտահանական ղենքն և: Պարզ եր ինձ համար, վոր այդ մարդը մի ժամանակ վայելել և կյանքի բարիքները և այժմ անցյալի սնտախի հիշողություններից չի կարողանում ազատվել:

Թոսում եր նա բարձր, խրոխտ ձայնով, միշտ տալով այդ ձայնին մի տեսակ հրամայողական շեշտ: Մտեալ-ստեալ արտասանում եր տեղական իշխանավորների ու հարուստների անունները կես-մտերմական,

կես-արհամարհական յեղանակով, ընդգծելով իր բարեկամությունը կամ ծանոթությունը նրանց հետ:

Մերթ ընդ մերթ, իբր թե մի կարևոր բան մը տարբերելով, ձևը դարկում էր ճակատին ու գոչում:

— Ա՛հ, քիչ էր մնում մոռանայի:

Յեզ արագությամբ վոտքի յելնելով, մոտենում էր տելեֆոնին, յերեք կունատակից բաց չթողնելով անձրևանոցը:

— «Կենտրոնակմնն ե»,—լսվում էր նրա հրամայողական ձայնը,—տվեք համար 9—11: Շնորհակալ եմ: Ո՞վ է ապարատի մոտ: Ամ, այդ դմբ եք, իշխան: Խորին հարգանքներս ձերդ պայծառափայլության: Ուզում էյի խոսել կալվածքի մասին: Յեթե գինը միքիչ պակասեցնեք, կարող եմ գործը գլուխ բերել: Ի՞նչպես: Այսոր գալ ձեզ մտ: Յավում եմ, վոր չեմ կարող, ժամանակ չունեմ: Վաղը կգամ: Յերեխան առողջացավ: Շատ ուրախ եմ: Խորին հարգանքներիս հավաստին նորին պայծառափայլություն իշխանուհուն: Վոչ, վեչ, այսոր զբաղված եմ: Թեյի գալ չեմ կարող, թող իշխանուհին ներե: Վաղը ուղիղ տասնումեկ ժամին: Յահուություն:

Յեզ այսպես, նա միշտ խոսում էր մերթ իշխանների, մերթ նշանավոր հարուստների կամ պաշտոնյաների հետ, յերբեմն մի ժամվա մեջ հինգ-վեց անգամ: Յերբ մոտենում էր տելեֆոնին, սպասուհիները նայում էին իրար ու ժպտում: Իսկ նա, տելեֆոնի խոսակցությունից կազդուրված, հալարտ քայլերով նորեն մոտենում էր իր սեղանակիցներին, նորեն նստում, վորպեսզի մի քանի բոպե անցած, նորեն մոտենա տելեֆոնին: Յերբեմն նա հանդիմանում էր

անլեֆոնի աղջիկներին: Անիրադները շատ չեն պատասխանում նրան:

Առհասարակ նրա քայլվածքը, նրա բոլոր ձևերն ու շարժումները, խոսելու յեղանակը, ամեն ինչ արատհայտում ելին վերին աստիճանի գործնական, ըզրազված անհամբերություն ու ներվայնություն: Այսպես եր թվում ինձ այն ժամանակ:

Մի անգամ յես սպասուհիներեց մեկին հարցրի.

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է այդ յեռանդուն մարդը:

— Ասաված դիտե, չեմ ճանաչում,—պատասխանեց սպասուհին,—հարցրեք Նադյային, նա ամենքին ճանաչում է:

Նադյան սրճարանի ամենակին սպասուհին եր է իրավ ճանաչում եր բոլոր հաճախորդներին:

— Ախ, դուք չեք ճանաչում Պյոտր Պետրովիչ Փեպինյանցին,—գոչեց նա զարմացած,—այդ զարմանալի յե: Պյոտր Պետրովիչը ամենքի խնամին է: Ասաված ինքն է ուղարկել մեր գլխին փորձանքի համար:

— Փորձանքի՞:

— Այո, այդ մարդը պատիժ է մեզ համար, կատարյալ պատիժ:

— Բայց ո՞վ է, ի՞նչ գործի մարդ է:

— Միջնորդ է կամ, ինչպես ինքն է ասում, կոմիսիոներ: Իբր թե ուրիշների համար տներ է գնում կամ վաճառում, բնակարաններ է վարձում, ով գիտե հազար ու մի այդպիսի բաներ: Յես միայն զարմանում եմ, զոր մեր սրճարանի տերը, այդ կոպիտ ուսմիկը, մինչև այժմ նրան չի արտաքսել: Ամեն որ դա-

լիս է, սուրճ խմում, նազուքները խփշտում ու հայ-  
դա... Ահա դարձյալ...

Յեվ, խոսքը չավարտած, սպասուհին հեռացավ  
շատապ քայլերով: Այդ միջոցին Պյոտր Պետրովիչ Փե-  
փինյանցը, վոր մենակ էր նստած սեղանի քով, շատապ  
կերել խմել ու հեռանում էր սովորական արագ  
քայլերով:

— Պյոտր Պետրովիչ, — գոչեց Նազիան, վազելով  
նրա յետևից, — կացե՛ք, Պյոտր Պետրովիչ, վճարեցե՛ք  
հետո...

— Լավ, լավ, հետո, ժամանակ չունեմ, — ասաց  
Պյոտր Պետրովիչն առանց յետ նայելու:

Յեվ վազեց փողոց այնպես արագ, վոր նրա անձ-  
րենոցի ձողերից մեկը, դիպչելով դռների շրջանակին,  
կոտրվեց:

— Անիծվի քեզ նման հաճախորդը, — արտասա-  
նեց սպասուհին, կատաղելով, — ելի՛ր փախավ գող կատ-  
վի պես: Յեվ ինչպես չի ամաչում իր սյուրտուկից ու  
գլխարկից:

Բոլոր սպասուհիները միաձայն ծիծաղեցին: Բա-  
րերախտաբար, սրճարանում, բացի ինձնից, հաճա-  
խորդներ չկային:

Յես հեռաքրքրվեցի այդ տեսարանով:

— Տեսմք ինչ արավ անիրավը, — նորին մտա-  
ցավ ինձ Նազիան, — քանի յերբորդ անգամն է այս:  
Ամեն որ գալիս է, նստում է պատվաձոր պարոններ  
հետ, պահանջում է, լազում, լափում ու ծլկվում: Ու-  
րիշներն են վճարում նրա համար: Իսկ յերբ ծանոթ-  
ներ չկան, ելի՛ պահանջում է: Յերկու անգամ էլ յես

եմ վճարել նրա համար: Վոչ, այլևս նրան վոչինչ չեմ մատուցանելու: Անամնթ, սրիկն, թյճ... .

— Ինչպես եք համարձակվում սրիկա անվանել մի այդպիսի պատվավոր պարոնի,—ասացի յես դիտմամբ, վորպեսզի ավելի խոսեցնեմ սպասուհուն:

— Պատվավոր,—կրկնեց Նազիան հեզնորեն,— չսեցիք, Մաշա, Ժենյա, պարոնը Պյոտր Պետրովիչին պատվավոր մարդ անվանեց: Պարոն, միթե պատվավոր մարդը թույլ կտա, վոր ինձ նման մի խեղճ սպասուհի իր փոխարեն վճարե սուրճի փողը:

— Իհարկե Պյոտր Պետրովիչը պատվավոր մարդ է,—աչնպեցի յես,—չէք լսում, ինչպես նա ամեն որ մի քանի անգամ տելեֆոնով գրույց ե անում քաղաքի իշխանների ու միլիտանտերի հետ, իսկ յերեկ նա խոսեց նահանգապետի հետ:

Սպասուհին ըարձրաձայն ծիծաղեց:

— «Նահանգապետի հետ», նահանգապետի հետ,—կրկնեց նա ձեռները զարկելով ծնկներին:

— Պարոն, այս քաղաքում չկան վոչ այնպիսի իշխաններ ու մեծամեծներ և վոչ ել այնպիսի նահանգապետներ, վորոնք բարեհաճելին Պյոտր Պետրովիչի հետ տելեֆոնով խոսելու:

— Իսկ նա խոսում ե. յես ամեն որ լսում եմ:

— Թող խոսե ինքն իր հետ, ինչ կա, գրա համար հո փող չի վճարում:

— Ինչպես թե՞ ինքն իր հետ:

— Այսինքն այնպես ելի, ինքն իրան տելեֆոնի հետ:

— Զեմ հասկանում:

— Զհասկանալու վոչինչ չկա: Դա ռեկլամ է, ուրիշ վոչինչ:

— Ռեկլամ:

— Այո, պարոն, ինքը Պյոտր Պետրովիչն է հընարել, ցույց տալու համար, թե տեսե՞ք յես ինչ մեծամեծների հետ գործ ունեմ: Դիտե՞ք, թեև նա կոմիսիոներ է և այնքան իրան գրադված մարդ է ցույց տալիս, բայց մեղ հայտնի չի, վոր նա անգործ է և վոչ վոք նրան գործեր չի հանձնում: Հապա, վորովհեաև յիթե գործ ունենար, փող ել կուեննար ու իր սուրճի համար ել ինքը կվճավեր: Այնպես չէ:

Յես հասկացա Պյոտր Պետրովիչի պարզ խորամանկութունը: Խեղճ մարդ, այդ անմեղ կեղծիքով նա աշխատում էր սրճարանի հաճախորդների հավատը գրավել:

— Մենք ամենքս գիտենք Պյոտր Պետրովիչի ոյխները, — ավարտեց Նադիան իր խոսքը, — բայց այնքան ընտելացել ենք, վոր այլևս ուշագրություն չենք դարձնում: Ի՞նչ կա, թող ինքն իր հետ խոսե տեղեֆոնով, դրանից վոչ վոք վրաս չունի:

Այդ պահին Պյոտր Պետրովիչը նորեն ներս մտավ, այս անգամ չորս պարոնների հետ տաք-տաք խոսակցելով:

Յես կարծեցի, վոր Նադիան կպահանջե նրանից սուրճի փողը, պատրաստ էյի ինքս վճարել միայն թե նա ուրիշների առջև չամաչեցներ այդ մարդուն: Բայց Նադիան չմոտեցավ նրան:

— Անհարմար է, — ասաց նա, — պարոններն անծանոթ են: Ելի ինչ վոր լիսի, մեր Պյոտր Պետրովիչն է, յես նրան ուրիշների մոտ չեմ խայտառակի:

Այդ որից իմ մեջ ծագեց մի տեսակ կարեկցություն դեպի այդ մարդը: Յես ցավեցի մինչև անգամ, վոր դարձեր չունեմ նրան հանձնելու: Պատրաստ եյի հաժառալ նրան ամենախոշոր հանձնարարություններ յեթե ունենայի: Յերևի նա ինքն ել զգում եր, վոր չունեմ, վորովհետև ինձ վրա բնավ ուշադրություն չեր դարձնում, այնինչ՝ ամբողջ սրճարանում նա յեր միայն վոր ինձ հետաքրքրում եր: Առանց անձնապես հետք ծանոթանալու ու հետք խոսելու, զգում եյի պարզորեն, վոր որ-որի վրա նրա հոգին ընկճվում է ձախորդ կյանքի լծի տակ և տեսնում եյի, վորքան նա շատ է ճգնում մարդկանց խափել իր կողմ հպարտությամբ ու մտացածին կապերով, այնքան քիչ է հաջողվում խափել, վորքան հաճախ է մտնեսում տելեֆոնին, այնքան ավելի յե գրգռում իր ծանոթներին ծաղրը: Իսկ այդ ծաղրը յերբեմն հասնում եր բացարձակ ցինիլության:

— Պյոտր Պետրովիչ, — լսեցի յես մի օր, — վաղը յես ձեզ պիտի հանձնարարեմ գնել ինձ համար հագար տակառ լուծողական:

— Պյոտր Պետրովիչ, — լսեցի մի ուրիշ անգամ, — չե՞ք կարող արդյոք, փոխարքայի պալատն ինձ համար կապալով վերցնել:

— Պյոտր Պետրովիչ, — ծաղրեց մի յերբորդը, — գնեցեք ինձ համար հինգ հարյուր ուղտ, Հնդկաստան ապրանք եմ ուղարկելու:

Յե՛վ այդպես, մեկը մյուսից ախմար կատակներ:

Յես դայրանում եյի մինչև հոգուս խորքը: Յերբեմն պատրաստ եյի բարձրաձայն բողոքել մարդկային այդ դաժանության դեմ: Նույնիսկ սրճարանի

սպասուհիները ավելի բարի և մարդասեր ու կիրթ  
եյին, քան այդ սեզիսկոդ ու սմոկինգ հագած պա-  
րոնները: Իսկ Նազիայից յես հաճախ լսում եյի ան-  
կեղծ կարեկցութեան խոսքեր Պյոտր Պետրովիչի վե-  
րաբերմամբ:

— Ա՛խ, պարոն,—ասում էր նա,— ինչո՞ւ այդ  
մարդիկ չեն հասկանում, վոր ամոթ է ծաղրել ան-  
բախտներին:

Յե՛վ չափազանց զղջում էր, վոր մի ոք ինքը  
Պյոտր Պետրովիչին իմ ներկայութեամբ անվանել և  
անամոթ, սրիկա:

Ամառվա սկզբին յես գնացի ամառանոց: Այն-  
տեղ ևս չմոռացա Պյոտր Պետրովիչին: Հիշում եյի  
նրա օր-որի վրա կորացող մեջքը և ճերմակող մազերն  
ու միբուքը: Շարունակ իմ ականջներում հնչում էր  
նրա խրոխտ ձայնը, վոր քանի գնում այնքան թու-  
լանում էր: Արդո՞ք ամռւրի յես նա,—մտածում եյի  
յես,— թե՞ ծանրաբեռնված է ընտանիքով, չքավորի՞  
այդ դաժան լուծով...

Աշնան սկզբին, քաղաք վերադառնալով, յես նո-  
րեն սկսեցի այցելել նույն սրճարանը:

Պյոտր Պետրովիչը չկար:

— Ո՞ւր է նա,—հարցրի յես Նազիային:

— Չգիտեմ:

— Մի գուցե խեղճը մեռել է:

— Վոչ, ծանոթներն ասում են, թե դեռ ապրում է:

— Բայց ինչո՞ւ չի գալիս սրճարան:

— Ա՛խ, պարոն, չեք կարող յիրևակայել, թե  
այժմ յես վորքան եմ խղճում Պյոտր Պետրովիչին,—  
արտասանեց Նազիան ձայնի անկեղծ հնչյունով,—ա-

հա մոտ յերկու ամիս և նա վրաք չի դրել մեր սրճա-  
րանը:

— Ինչո՞ւ:

Յե՛ղ սպասուհին պատմեց յեղելությունը: Յեր-  
կու ամիս առաջ մի որ սրճարանի տերը, վոր «ան-  
սլիտաններից անպիտանն էր» հանկարծ Պյոտր Պետ-  
րովիչի ձեռից խլում և տեղեֆոնի փողը, դռալով,  
«Բավական և վորքան մաշիցիր իմ ապարաքը», Պյո-  
տրը Պետրովիչը, հարկավ, վերավորվում և և սրճա-  
րանի տիրոջն անվանում և անկիրթ: Տեղի յի ունե-  
նում խոշոր ընդհարում: Սրճարանատերը հրամայում  
և Պյոտր Պետրովիչին դադարել իր սրճարանն հաճա-  
խելուց, ասելով «բավական և վորքան ձրիաբար լա-  
փեցիր իմ նազուքն ու սուրճը»: Այն ժամանակ Պյո-  
տրը Պետրովիչը, ինքն իրան կարցնելով, դռում և  
«Քոստա շուն, դու ս՛ղ ես, վոր ինձ անառատում ես:  
Յես քեզ նման շատերին եմ կերակրել, կզա ժամա-  
նակ ելի կըկերակրեմ»: Այդ խոսքերի վրա սրճարա-  
նի տերը բռնում և Պյոտր Պետրովիչի թևը և դուրս  
և անում նրան հաճախորդների ներկայությամբ:

— Այն որից խեղճ մարդը, իհարկե, այլևս չի  
դալիս մեզ մոտ, — շարունակեց սպասուհին: — Յերևա-  
կայում եմ նրա դրությունը: Հավատացե՛ք, պարոն,  
այժմ մենք, սպասուհիներս, տխրում ենք առանց  
Պյոտր Պետրովիչի: Սովորել եյինք ամեն որ նրան  
տեսնել ու հետը դրույց անել: Յերբեմն նա մեզ հա-  
մար հետաքրքրական բաներ եր պատմում իր յերի-  
տասարդությունից: Գիտե՛ք, նա հարուստ մարդու  
վորդի յի յեղել, բոլոր փողերը վասնել և ու թղթախա-  
ղում տանուլ տվել: Նա այնպես լավ դիտե պատմել

իր արած քեֆերի մասին, վոր մարդ ուզում է ան-  
վերջ լսել ու լսել:

— Ընտանիքավոր ե Պյոտր Պետրովիչը, — հար-  
ցրի յես:

— Ի հարկե:


— Զավակներ ունի:

— Յերկու աղջիկ, մեկը յոթ, մյուսը՝ ութ տա-  
րեկան: Յերևակայեցեք, քանի վոր հարուստ է յե-  
ղիլ, չի ամուսնացել, հենց վոր աղքատացել է, դնա-  
ցել է վիզը լծի տակ դրել: Արի ու հասկացիր այդ  
տեսակ տղամարդկանց: Ա՛հ, յերանի թե Պյոտր Պետ-  
րովիչը մի ուրիշ ավելի բարի սրճարանատեր գտներ,  
մերը շատ վատ մարդ է, շատ: Միայն տելեֆոն էլ  
ունենար ձեռքի տակ. յես գիտեմ, Պյոտր Պետրովի-  
չի համար տելեֆոնը նույնն է, ինչ վոր ծխախոտը  
ձեզ համար: Այո, այո, առանց տելեֆոնի Պյոտր  
Պետրովիչը չի կարող ապրել...

Անցան դարձյալ մի քանի ամիսներ, յես տա-  
կավիճ չեյի հանդիպում Պյոտր Պետրովիչին, նույն  
խոհ փողոցներում:

Արդեն սկսել էյի մոռանալ նրան, յերբ մի որ  
անսպասելի հանդիպեցի... Ահա թե՛ ինչպես...

Իմ բնակած տան ստորին հարկը մի գրեթե գետ-  
նափոր խոնավ նիւղի յեր: Ժլատ տան տերը նրան  
վարձով էր տալիս, վորպես բնակարան: Վոչ վոք չեր  
վարձում նրան, չնայելով եծանությանը: Վաղուց ար-  
դեն դարբասի վրա կայրած հայտարարությունն անձ-  
րկներից ու արևից խուճացել էր, այնպես, վոր  
բառերը ղժվարությամբ էյին կարդացվում: Ով գալիս  
նայում էր այդ յերկու ղժվարությունները, իսկույն է



յեթ հեռանում եր առանց գինը հարցնելու: Բանն աշխտեղ եր հասել, վոր գավթապահը շատերին բախկեց եր ճանապարհ դնում, ասելով.

— Չեք հավանիլ, խողարուն ե:

Մի յերեկո, յերբ յիս նստած էյի իմ ընակարանի պասաշգամրի վրա, դզրդալով բախը մասով մի մեծ սայլ՝ տնային կահկարասիով բնոնավորված:

Սայլի առջևից գալիս եր մի հաղթանդամ կին յերկու մանկահասակ աղջիկների հետ. յերեքն էլ աղքատ էյին հազնված: Սայլի յեակից քայլում եր մի տղամարդ, լայնեզր պիսարկը աչքերին քաշած, վերարկույի ոճիքը բարձրացրած աշխպիս, վոր նրա յերեսը չեր կարելի տեսնել: Նա գալիս եր համբաքայլ գլուխը կրճքին թեքած, կորամեղք:

Սայլը կանգ առավ դատարկ կացարանի առջև: Կինը բարձրաձայն կանչեց գավթապահին: Վոչ վոք չնկավ: Հետո իմացա, վոր գավթապահը թազնվել եր, աղքատ վարձվորներին ոգնելուց փախչելով:

— Պետրոս, շուտ յեկ, ինչ ես դանդաղում,— գարձավ կինը սայլի յեակից քայլողին:

— Իալիս եմ, դալիս,— կրկնեց մարդը գրգռված ձայնով:

Յես իսկույն ճանաչեցի այդ ձայնը և նրա ախրոջ մեծ անձրևնոցը: Իս ինքը Պյոտր Պետրովիչ Փեփինյանցն եր իր ընտանիքով:

Նա սկսեց սայլապանի ոգնուլթյամբ իրերը սայլից տեղափոխել ընակարան: Կինն ու աղջիկներն ոգնում էյին նրան:

Յես զգացի, վոր Պյոտր Պետրովիչը, ծանոթ գեմք անսնելով, կարող և շփոթվել, ուստի քաշվեցի

ալաաշխատքի խորքը, վորպեսզի չերեամ: Արդարեւ ցա-  
վալի յեր ինձ համար տեսնել նրա հալարտ ուսերը  
ծանր սնդուկների ու պահարանների տակ: Բայց և  
այնպես ինձ հետաքրքրում եր Պյոտր Պետրովիչի  
ներկա վիճակը: Յես ուզում եյի լսել ինչ և կատար-  
վում ներքեում:

Տնքալով, արանջալով չդիտեմ ում և ինչու հա-  
մար հայնոյելով, նա իրերը տեղափոխում եր նոր կա-  
ցարանը: Պարզ եր, վոր նա անիծում եր իր վիճակը,  
ինչպես կարող և անիծել մեկը, վորին բանտ են ու-  
ղարկում իրերը վրեն բարձամ:

Կարգադրում եր նրա կինը, բարձր ձայնով հը-  
քամաններ արձակելով և գոռալով ամենքի վրա, վոր-  
պես բանտապետ: Այս ձայնն ինձ թվաց շատ անա-  
խորժ, շատ շար: Յես կրկնակի խղճացի Պյոտր Պե-  
տրովիչին:

Վերջապես, սայլը դատարկվեց, սայլապանը հե-  
ռացավ գոռալով ու հայնոյելով: Նա իր ստացած վար-  
ձով գոհ չե, ուստի սրտի մազձը մարակի գորեղ հար-  
վածներով թափում եր ձիերի վրա: Վարձ տվողը  
Պյոտր Պետրովիչը չեր, այլ նրա ամուսինը:

Բնակարանի դռներն ու լուսամուտները բաց  
եյին: Վոչ միայն յես, այլ և բոլոր հարևանները կա-  
րող եյին լսել ինչ և կատարվում Պյոտր Պետրովիչի  
ընտանիքում, մանավանդ վոր նրա հաղթանդամ կո-  
ղակիցը չեր քաշվում իր կոկորդին ուժ տալու:

Յես լսեցի.

— Դու սսում ես ինչպես պիտի ապրես այս հո-  
տաժ փոսում: Հն, իհարկե, քո ախմար հոլարսու-  
թյունը վնեց կարող և դիմանալ: Բայց վոչինչ, կըստ-

վորհա: Վազուց եր հարկավոր մի այսպիսի անկյունը  
ընարել քեզ համար, վոր մի քիչ քիթդ քաշանա:

— Չե, Նատաշ, դու շատ անհամբեր կին ես:  
Չեյթր կարող մի քիչ ել սպասել մինչև վոր գործերս  
դրոսովես:

— Գործերս, գործերս: Հարցնող լինի, այդ ի՞նչ  
գործեր են: Տասը տարի յե քեզ հետ ամուսնացել եմ,  
շարունակ դաստարկ հուշներով ես կերակրում ինձ:  
«Սպասիր՝ այսինչի կալվածքը ծախեմ, սպասիր՝ այս-  
ինչի հանքը ծախեմ, կոմիտիոն կատանամ, կհարըս-  
տանանք»: Բայց մինչև այսոր վոչ մի հասիկ գործ ել  
չկարողացար դու ի բերել: Որք մինչև յերեկո կամ  
վազվազում ես փողոցներում, կամ նստած ես սրճա-  
բաններում, սրտ-նրտ հետ տաք-տաք վիճարանում,  
իսկ տուն վերադառնում ես դատարկ ձեռներով: Դու  
ի՞նչ կոմիտիոններ ես, դու ի՞նչ գործ կատարող ես: Վո-  
չինչ, վոչինչ: Դու միայն գիտես մեծ-մեծ մարդկանց  
անուններ տրատասանել ու մեծ մեծ խոսել քո անցյա-  
լի մասին:

— Բայց հասկացիր, կին, միլիոններ արժեցող  
կալվածք կամ հանք ծախելը մի դուրս գուլպա ծա-  
խել չե: Ժամանակ ե հարկավոր, համբերություն:

— Համբերություն, համբերություն, ասան խըն-  
դրեմ մինչև յերբ: Աղջիկներդ վատարորիկ են շրջում,  
յես վերջին շապիկս եմ մաշում, դու ինքդ հնավաճա-  
ռի խանութ ես դարձել, իսկ տարում ես իշխաններին  
ու միլիոնատերերի անուններով: Հիմա յել ասում ես,  
թե ինչ վոր անգլիացիների թե քելգիացիների՝ հա-  
մար պետք ե նավթահանքեր գնես: Վոչ, ել յես քեզ  
չեմ հավատում, դու գործ կատարող չես: Թեթե դու

խելք ունենայիր, հորդ հարստությունը քամուն չնյիր տալ կամ գոնն քամուն տալուց հետո հիմարաբար չնյիր ամուսնանալ:

— Ի՞նչ անեմ, սիրահարվեցի քեզ վրա, ամուսնացա:

— Լսիր, աստված սիրես, դու ի՞նչ ես, վոր սիրահարվես կամ սիրես:

— Ուրեմն դու սիրահարվեցիր ինձ վրա,— փորձեց Պյոտր Պետրովիչը վիճաբանությունը կատակել վերածել:

— Հապա, ի՞նչպես չե, խելքս կորցրի քեզ համար,— հեղնեց հաղթանդամ կինը,— լավ, կարճ կապիր. քաղաքում մարդ չի մնացել, վորից ձեռապարտ չըլինես վերցրած: Մասվածառններին պարտական, հացթուխներին պարտական, քնակարանատերերին պարտական: Բավական ե, դու խայտառակեցիր քեզ ել, ինձ ել:

— Ուրեմն ի՞նչ ես ուզում ինձնից, այն ասա:

— Յես պահանջում եմ, վոր թողնես գոռոզությունդ ու գնաս մեկին ծառայես ինչպես հասարակ գործակատար:

— Ի՞նչ,— կատաղեց Պյոտր Պետրովիչը,— Փեփինյանցը գործակատար: Բարերը կբողոքեն դրա դեմ: Իսկ ի՞նչ կասեն իմ անցյալը ճանաչողները, գիտե՞ս...

— Ի՞նչ ուզում են թող ասեն, միայն թե ընտանիքդ մի կտոր հաց ունենա:

— Վճի, յես ծառայել չեմ կարող, այն ել գործակատար:

— Դե, լավ, մի ծառայի: Այն ժամախակ յես ինքըս կանեմ իմ ուզածը:

— Ի՞նչ կանեա:

— Այ, վաղն և յեթ մեր նոր հարեաններին կանեմ, վոր յես լվացարարուելի յեմ ու կսկսեմ ուրիշներին կեղտոտ շորերը լվանալ:

— Դու այդ չես անիր:

— Կանեմ:

— Դու չես լսայտառակիլ Պյոտր Պետրովիչ Փեփինյանցին:

— Կխայտառակեմ, այ այս խեղճ յերեխաներին պահելու համար:

Վիճարանությունը քանի գնում, այնքան սաստկանում եր և քանի գնում այնքան Պյոտր Պետրովիչի ձայնը մեղմանում եր: Ընդհակառակը, քանի գնում, այնքան պորեղանում եր նրա կողակցի ձայնը: Զորահեմ ինչ պատահեց, հանկարծ մանկահասակ աղջիկները սկսեցին ազաղակել ու հետո հեղեղալ:

Լսվեցին հոտ ու կտոր հայնոյանքներ. կնոջ կողմից՝ «աղքատ ու հոգարտ, սուտ արխատկրատ ծուլը ձրիակեր, խարերտ» Պյոտր Պետրովիչի կողմից՝ «անամոթ, անպատկառ, շան ծնունդ» և այլն, և այլն: Լսվեցին կան ու կարասու ուժդին զղբուց և ինչ վոր խուլ թնայուն:

Այնուհետև տիրեց լուռութուն:

Փոքր անցած՝ յես դուրս յեկտ վողոց իմ իրիկնային սովորական գրասանքը կատարելու:

Դարբասի տաշև, դավթապաի նստարանի վրա նստած եր մի մուլթ պատկեր: Նա հանդարտ լալիս եր:

Պյոտր Պետրովիչն եր:

Ինձ տեսնելով, նա խելուշն վաքի յելավ, ձեռները դրեց մեջքին, բարձրից հպարտ նայեց ինձ վրա ու սկսեց ինչ վոր օսերեսից շվացնել ինչ վոր ուրախ մի յեղանակ...

1916 թ. մայիս

Թիֆլիս.

## Գ Ր Ա Ձ

Նրանք վեց ընկերներ էյին գրեթե հասակակիցներ: Յուրաքանչյուրն ուներ վորեւ աճհաստ, վորով և ազրում էր: Ինչ վոր վաստակում էյին — անմիջապես վտանում էյին: Ի՞նչ կարիք կար վաղվա մասին մտածելու, քանի վոր յերիտասարդներ էյին և ամուրի: Հավատարիմ ընկերներ էյին, սիրում էյին իրարու նամանավանդ քեֆերի ժամանակ, խկ քեֆեր անում էյին շատ հաճախ:

Պատահեց այնպես, վոր վեց ընկերներից մեկը հիվանդացավ ու մեռավ: Մահվան դեմ խոչընդոտներ չկան, բոլոր դռները բաց են նրա համար: Այսպես փիլիսոփայեցին հինգ ընկերները և վեցերորդի մահն ընդունեցին վորպես մի բնական տուրք հավիտենականությանը: Շատ տխրեցին, բայց բոլորովին առանց ազմկելու մանավանդ արտասովիտու «Արատաւու» քը աղամարդին չի սազում», ասացին:

Այն քաղաքում գերեզմանատունը գտնվում էր հեռավոր քուրի վրա: Սովորաբար գերեզմանները վորիլ էյին տալիս թաղումից մի որ առաջ, վորպեսզի թաղման որը հողարկավորները շատ չհապաղեն գերեզմանատանը:

Հինգ ընկերները վեցերորդի դիակն ըստ սովորության մի որ առաջ յեկեղեցի տանելով, գնացին

մերձակա գինետուն հանգուցյալի հոգեթասը խմելու: Աշուն էր, ցուրտ ու խոնավ յերեկու: Չափաթ գափաթի յիակից դասարկելով, գլուխները աաքացան: Թոսք բացվեց առհասարակ մեռելները, ուրվականները, գերեզմանատները և այնտեղ թափառող վոզիները մասին: Բոլորն էլ առոքրված էյին իրենց միջավայրի նախապաշարմունքներով և սնտախապաշտությամբ: Վիճաբանում էյին, բայց ամենքն էլ նույն հավատի էյին, թե հոգիները չեն մեռնում, և վոչ միայն այդ, այլ և յերկար փամանակ թափառում են յերկրի վրա մինչև դեպի հավիտենականություն անցնելը:

Սեղանի ամենատաք միջոցին ընկերներեից մեկը, վորի անունն Ադասի յեր, ասաց.

— Տղերք, յես ուղում եմ մի գրագ առաջարկել ձեզ, կընդունե՞ք:

— Ասա, տեանենք,— գոչեցին ամենքը միաձայն:

— Ո՞վ կարող է ձեզնից այս բոպելիս գնալ գերեզմանատուն և վերադառնալ:

Ընկերները նայեցին իրարու յերեսին: Հարցը բավական անսպասելի յեր: Պնալ այս անձրեային ցուրտ գիշերին՝ ուր կամենաք կարելի յի, բայց գերեզմանատուն— այդ դյուրին բան չի: Չե՞ վոր խոսվեց, թե գերեզմանատները գիշերները լեցուն են թափառող վոզիներով, վորոնց հանդիպելու համար հարկավոր է բացառիկ քաջություն: Բացի դրանից, չե՞ վոր հայերի գերեզմանատուն հասնելու միակ ճանապարհը թուրքերի գերեզմանատան քով է: Մինչև այսոր դեռ վոչ վոք այդ ճանապարհը գիշերով չի անցել:

— Յես կարող եմ գնալ,— ընդհատեց ընդհանուր

լուռթյունը մեկն ընկերներից, վոր ամենից շատ եր  
խմել և ամենից քիչ հարբել:—Ինչո՞վ ես պրազ դալիս:

— Հինգ թունգի գինով և մի լավ ճաշ:

— Գալիս ե:

— Տղերք, վկա յիղեք:

— Թո՞ղ, Սարգիս, հիմարություն մի արա,—գո-  
չեցին մյուս ընկերները միաձայն: Աղասին կատակ է  
անում:

— Ամենեին,—ասաց Աղասին,—յես կատակ չեմ  
անում, կարող եմ յերդվել մեր ընկերոջ գիակով:

Ապա, դառնալով Սարգսին, ավելացրեց.

— Ահա քեզ, վերցրու այս չախուն, տար և գցի՛ր  
մեր ընկերոջ գերեզմանի մեջ: Յեթե վաղը, թաղմանը  
գնալով, այդ դանակն այնտեղ տեսնենք, գրազը տա-  
րած ես, և մենք կասենք, վոր աղա յես, իսկ յեթե  
վոչ—աղջիկ ես, և մենք մի լավ կըծիծաղենք քեզ  
վրա:

Մյուս ընկերները շատ աշխատեցին յերկու կող-  
մերին համոզելու՝ թողնել անիմաստ գրազը, չկարո-  
ղացան:

Կես գիշեր եր արդեն, յերբ խումբը, գինու վեր-  
ջին դավաթները պարպելով, դուրս յեկավ գինեանից:  
Յեղանակն ավելի ցրտել եր, բայց անձրևը դադարել եր:

— Դե, տղերք, բարի գիշեր,—ասաց Սարգիսը,  
Աղասու դանակը գրպանը դնելով,—յես մտնեմ տուն,  
յապուռնջիս վերցնեմ և հայդա: Վաղը պատարագին  
կտեսնովենք:

Ասաց և չքացավ թանձր խավարի մեջ:

— Բարի գիշեր,—ասաց Աղասին,—վաղը դուք  
լսեք մի նոր բան... Իսկ առայժմ գնանք քնելու:

\* \* \*

Մարգինն արագ քայլերով անցավ քրիստոնեա-  
րնակ արվարձանը, մտավ Թուրքերի նեղ ու ծուռ  
փողոցները և քառորդ ժամուս գուրս յեկավ քաղաքի  
սահմաններից: Յերբ մտանցավ Թուրքերի դերեզմա-  
նատանը, տեսավ զիք-դիք դրված տապանաքարերը.  
նրանք հեռվից ժարդերի էյին նմանվում: Մարտուսի  
պես մի բան անցավ նրա մարմնով: Մի առ մի պատ-  
կերացան նրա աչքերի առջև այն բոլոր առասպելները,  
վոր լսել էր շատ անգամ և վորոնց հավատում էր:  
Բայց աշխատեց ամրապնդվել, յերեակայելով, թե Ա-  
ղասին վորքան պիտի ծաղրահոծի իրեն յեթի քա-  
ջութջուն չունենա դրազը տանելու: Նա դնում էր ար-  
ագ քայլերով, կարծես, իրավ, վողիները հալածում  
էյին նրան և ուրիշ փրկություն չուներ ըսցի փախ-  
չնլուց: Յեվ սկսեց վազել, մերթ ընդ մերթ վարկենա-  
բար կանգ առնելով և հետ նայելով: Վերջապես, բա-  
վական հեռանալով Թուրքերի դերեզմանատանից, հա-  
մողվեց, վոր վոչ մի վողի չի հետևում իրեն, քաջա-  
լերվեց և, քայլվածքը դանդաղեցնելով, բարձրացավ  
ըլուրը:

Նա մտավորապես գիտեր վորտեղ և վորված  
հանգուցյալ ընկերոջ դերեզմանը և, կես ժամ փընտ-  
ռելուց հետո, գտավ: Յերբ մտանցավ դերեզմանին, գըր-  
պանից դուրս բերեց Աղասու դանակը: Գերեզմանա-  
փորը չէր մոռացել հողաթմբի վրա դնել յերեք խոշոր  
քարեր, վորոնց սովորաբար ցցում են հանգուցյալի

Թարմ շիրիմի վրա, ասելով «յեւ յեղիցի անշարժ տա-  
պանս այս» և այլն...

Նա կանգ առավ գերեզմանի յիզրին և պատ-  
րաստվում էր դանակը նետել այնտեղ, յերբ ակտավ  
մի ճերմակ բան, նա նման էր սավանի մեջ փաթաթ-  
ված մարդու։ Թվաց, վոր սավանը շարժվում է, կար-  
ծես, ուզում է վտառի յիջնել։ Առանց մի վարկյան հա-  
պաղելու, վերցրեց յերեք քարերից մեկը և ամբողջ  
ուժով ձգեց ուրվականի վրա։ Լսվեց ինչ-վոր խոււ  
ձայն, նման մարդկային ձիչի։ Նա ձգեց յերկրորդ  
քարը, ապա դանակը բաց թողեց գերեզմանի մեջ և  
շտապեց փախչել։

Նա վազում էր բլուրից վար առանց յեա նայե-  
լու։ Վախենում էր նայել...

Հետևյալ որը բոլոր ընկերները յեկեղեցու մեջ յին։  
Չկար միայն Աղասին։ Սարգիսը գրազը տարել էր,  
փափազում էր վորքան կարելի յե շուտ տեսնել նրան  
և պարծենալ։ Նա պատմեց բոլորը, ինչ վոր զգացել  
էր ու խորհել գիշերը, բայց գերեզմանի մեջ տեսած ան-  
հասկանալի յերևույթի մասին լռեց։ Նա վախենում  
էր, վոր յեթե տախ, վոչ վոք չի հավատալ և ընդհա-  
կառակը ինքը կարող է ծաղրի յենթարկվել վորպես  
յերկչոտ յերևակայող։

Աղասին չկար, և չերևաց մինչև պատարաքի  
վերջը։ Ընկերները հետաքրքրվեցին գիտենալ՝ միգու-  
ցե հիվանդացել է։ Մեկը գնաց և տանից լուր բերեց,  
թե Աղասին մինչև լույս տուն չի վերադարձել և թե  
այժմ էլ հայտնի չէ, ուր է նա։

Անձրե չկար, յեղանակը սիրուն էր, պայծառ տ-  
րեգականային։ Այդպիսի որին քաղաքից դուրս գալը

մի տեսակ զբոսանք եր թեկուզ մեռել թաղելու հա-  
մար:

Հանգուցյալի դագաղը մինչև գերեզմանատուն  
տարվեց ձեռքով: Այդպես կամեցան նրա ընկերները,  
հուզարկավորները և ոգնեցին նրանց: Գիտեյին, վոր  
գերեզմանատանը վարձատրվելու յեն աստ հացկե-  
րույթով:

Գերեզմանին մոտենալիս, ուղեկցող քահանան  
ու տիրացուները զգեստավորվեցին: Առջևից ընդհա-  
նում եր քահանան ավետարանը ձեռքին, յետևից տի-  
րացուները, այնուհետև դագաղը և հուղարկավորները:

Յերբ քահանան մոտեցավ գերեզմանի յեզրին,  
հանկարծ յերգը ընդհատեց, արձակելով մի բարձր ճիչ  
և յետ ցատկելով:

Այնտեղ, գերեզմանի հատակում ընկած եր Աղա-  
սու դիակը, ջարդված գլխով: Ճիւրմակ սավանը ներկե-  
վել եր արյունով:

Գիշերը նա մի ուրիշ ճամբով յեկել եր և սավա-  
նի մեջ պարկել ընկերոջ գերեզմանի մեջ Սարգիսին  
սարսափեցնելու համար: Այս յեղով նրա ընկերներէ  
յեն թաղբուծյունը...

## ԱՄԵՆԱԶՈՐԸ

Ճաշարանը, ուր նրանք զվարճանում էին, ստոր-  
յերկրյա խոնավ ու կիսախավար մի նկուղ եր: Ու-  
նևորնեք էյին, կարող էին մի ավելի վայելուչ տեղ  
գնալ, բայց վարնոց զինհասան մթնոլորտը նրանց հա-  
մար ավելի հաճելի չիր: Այստեղ նրանք ազատ էին  
իրենց ուզածի չափ զորգտալ և հարբելիս ասրճանակ  
պարպել դեպի հատակը կամ առաստաղը—մի բան,  
վոր նրանց սիրեցյալ զվարճութունն էր և վորի հա-  
մար վեչ մի որինք չեր կարողացել նրանց պատժի-  
յենթարկել:

Պուժըն արդեն կերել կշտացել էր, բայց շարու-  
նակում էր խմել ու վիճաբանել, յերբեմն այնքան աղ-  
մկալի, վոր խլացնում էին թառի ու քեմանի հնչյուն-  
ները:

Չորս հոգի էին: Յերկուսը սպա, մեկը խմբա-  
պետ, չորրորդը անգործի մեկը, վոր շոսյլում էր հայ-  
բական հարստությունը անիմաստ և աննպատակ: Սո-  
վորաբար նա յեր հյուրասիրում իր ընկերներին, ուս-  
տի և վայելում էր նրանց շողոքորդ հարգանքը:

Պուժըրը շատ բաների մասին էր խոսել ու վիճա-  
բանել, այժմ նորեն դարձել էր իրենց սիրած նյու-  
թին—անհատական քաջագործություններին ու հերո-  
սություններին: Պատմում էին իրենց կյանքից կամ

տեսածներից ու լսածներից պես պես արկածներ: Յեր-  
բեմն իրողութիւններով չեյին բավականանում և պա-  
կերները ներկում էյին թանձր դուշներով, ավելի զար-  
հուրելի դարձնելու համար: Իս սովորական մի բան  
եր այդ միջավայրում, ուստի վոչ վոք չեք փորձում  
ստուգել վորտեղ և վերջանում իրականը և ուր և ըս-  
կալում երևակայականը: Վոմանք պատմելիս այնքան  
եյին հախշատկվում, վոր իրենք ևլ էյին սկսում հա-  
վատալ իրենց տատաներին, ինչպես արեւելյան դերվիշ-  
ներն իրենց պատմած առասպելներին: Այս կողմից ա-  
մենից շնաստեք Լևոն Շահնազն եր, նա, վոր շուայ-  
լում եր իր հայրական հարստութունը, և վորն ավե-  
լի քիչ բան եր տեսել կյանքում: Պատմելիս ու վի-  
ճարանելիս նրա սև աչքերը պսպղում էյին բոցավառ  
ածուխի պես և թվում եր, վոր կայծեր են արձակում  
զիմացինի յերեսին: Իր ասածներին ուժ տալու համար,  
նա չեք բավականանում նվիրական յերդումներով ու  
հաճախ բուռնցքները զարկում եր սեղանին ուժգին  
թափով: Իինու շերն ու բաժակները ողն էյին թըռ-  
չում:

— Գիտեք, պարոններ, — ասաց նա, — այն բոլորը,  
վոր պատմվեց այստեղ, հաստատում են իմ գաղա-  
փաքի ճշմարտութունը:

— Ա՞յն և, — հարցրեց լամբապետը:

— Վոր աշխարհը պատկանում և զորավորներին  
և վոր նրանք միայն ունեն իրավունք կյանքը վայե-  
լելու: Թույլերը ծնված են միայն ողը ապականելու  
համար, նրանց պեսք և վոչնչացնել:

— Ման թույլերին, — աղաղակեց սպաններից մե-

կը, — կուրծքն ուռցնելով իբրև գորութեան նշան և թրի պատյանը սեղանին զարնելով:

Մյուս սպան բաժակը լեցրեց, վճաքի յելավ և գոչեց.

— Կեցցեն զորավորները, խմենք նրանց կենացը, հուռնա...

— Հուռն, — կրկնեցին ամենքը և դասարկեցին շամպայնի բաժակը:

Յերածիշտներն ի պատիվ գորավորների նվազեցին ինչ վոր սպանեաց մի սաղմական քայլերդ, նույնպես ուռցնելով իրենց կրծքերը: Դափ զարնողը դափը վայրենի աղաղակով զարկեց իր գլխին և պատուեց՝ յերևի նույնպես իր ուժը ցույց տալու համար:

Թմբից վոչ այնքան հեռու, առանձին սեղանի քով նստած եր մի մարդ, հնաձև ու հնամաշ հագուստով և ալիխառն, դզզված մազերով ու միրուսով: Նա կծկվել ու փոքրացել էր այնպես, վոր կարծես, վախենում եր աչքի ընկնել: Արդարև, վոր վոք չէր նկատել նրա ներկայութեանը, բացի հաստապարանոց և կարմրայերես գինեվաճառ Դառչոյից, վոր յերբեմն նրա վրտ ձգում էր արհամարհական հայացքներ: Պարզ էր, վոր նրա համար այդ մարդու ներկայութեանը անախտոք էր:

Մարդը, արմուռնիները կեղտոտ սեղանին հենած, նայում եր իր առջև դրված շին: Կարծես, նա ինչ վոր խորհրդավոր բանակցութեան ունի գինու հետ: Մինչ յերածիշտները արևելյան թաղծալի յերգեր ելին նվազում, մարդը դուռը ախուր շարժում եր, հառաչում և բաժակը դանդաղորեն, կարծես ախամա, մտտեցնում եր շրթունքներին: Պարզ էր, վոր քեմանի և

Թառի նվագն ալեկոծում եր մի տառապող հողի և ունի գիտե ինչ հիշողություններ եր արթնեցնում այնտեղ: Բայց յերբ խաւքը խմեց զորավորների կենացը, մարդը արհամարհական մի հայացք ձգեց նրա վրա և քլթի տակ արտասանեց շախմարներ: Իսկ յերբ յերածիշաները նվագեցին ի պատիվ զորավորների ազմկալի քայլերդը, մարդը ցնցվեց, գլուխը բարձրացրեց և, դառնալով նրանց ասաց.

— Բավականն ե, դահարեցեք, անխծվածներ: Ո՞վ ձեզ իրավունք տվեց այդ աստվածային լարերը պղծել: Չգիտեք միթե, վոր նրանք հնարված են սեր ու վիշտ յերգելու: Լսում եք, միայն սեր ու վիշտ, ուրիշ վոչինչ:

Լեոն Շահնապը մի նշանով կանչեց իր մտա գինեվաճառին ու հարցրեց.

— Ո՞վ ե այդ մարդը:

— Ձեւ ճանաչում, — պատասխանեց. Գառչոն, — մեկ-մեկ գալիս ե ու հինգ սևաթ նստում մի շիշ գինու մտա, — մտղերից յերևում ե, վոր կամ դերասան ե կամ գագեթ գրող:

— Հրավիրիր նրան մեր սեղանը, մի քիչ ծիծաղենք:

Մարդն, առանց տատանվելու, վերցրեց իր գինու քաժակը և մտաեցավ խմբին:

— Թ՛ո՛ւյլ տվեք ներկայանալ, պարոններ, — ասաց նա մտքուր ոռւսերեն լեզվով, — նախկին մի բան, այժմ վոչնչություն: Շնորհակալ եմ, մի ամեք, յես շամպանյա չեմ խմում, սովոր չեմ: Այո, պարոններ, լսեցի ձեր պատմությունները, վոչինչ, վոչինչ, մի քանի

արկածներ դուրկ չեյին հերոսությունից: Միայն թույլ  
տվեք մի բան հարցնել, կարելի՞ յի:

— Հրամայեցեք,—ասաց Լևոն Շահնազը, նշան  
անելով յերածիշտներին, վոր դադարին նվազը:

— Պարոններ, մի քիչ առաջ դուք վառաբանե-  
ցիք ույժը և խմեցիք զորավորների կենացը: Ասացեք,  
ինչպե՞ս ի՞նչ ասել և ույժ կամ զորություն:

Սեղանակիցները նայեցին իրար յերեսի, չկա-  
րողանալով միանդամայն պատասխանել անսպասելի  
հարցին:

— Այո, ի՞նչ ասել և ույժ,—կրկնեց մարդը:

— Ույժ —նշանակում և մի բան, վոր դուք, պա-  
րոն, ինչպես յերևում և չունեք,—պատասխանեց խոմ-  
բապետը մի սուր հայացք ձգելով մարդու վրա և կող-  
քին կախած մաուզերն առաջ քաշելով:

— Որինակ,—հարցրեց մարդը, չնայելով նրա  
յերեսին:

— Որինակ,—միջամտեց Լևոն Շահնազը,—յերի-  
տասարդություն, ամուր բուռնցք, իշխանություն:

— Համեստություն մի արեք, յերիտասարդ պա-  
րոն, ավելացրեք և հարստություն: Ասացեք, մի ամա-  
չեք, վորովհետև յես գիտեմ, դուք հարուստ եք:

— Շատ լավ, և՛ հարստություն: Մի խոսքով, ա-  
մեն բան, ինչ վոր մեկին տալիս և միջոց մյուսներին  
վոչնչացնելու:

— Յերիտասարդ պարոն,—գոչեց մարդն իր կրնճ-  
ոտ ճակատի տակից մի խորը հայացք ձգելով Լևոն  
Շահնազի աչքերի մեջ,—թույլ տվեք ինձ ասել, վոր  
ձեր ասածներից վոչ մեկը ույժ չի և վոչ ել խելքը,  
տաղանդը, գիտությունները: Այդ բոլորը ուրիշ վո-

չինչ են, յեթե վոչ թույլ գործիքներ ինչ վոր անե-  
րևույթ որևնքի ձևուքում: Պարոններ, կյանքի մեջ չը  
կան վոչ գորավորներ և վոչ թույլեր, կան միայն կույր  
գործիքներ այն հավիտենական գորության ձևուքում,  
վոր անտեսանելի յե, անշոշափելի և անհաղթելի: Վոչոք  
մինչև այսոր չի կարողացել քննել ու վերլուծել նրա  
եյությունը, վոչ մի դիտնական, վոչ մի փիլիսոփա-  
այն ինչ՝ նա յեղել ե, կա և պիտի մնա հավիտյան տել  
ու իշխան մեր գոյության:

Յուժբն ազգվելով այդ խոսքերից, դադարեց ար-  
համարհանքով ժպտալ և հետաքրքրվեց մարդով:

— Բայց ինչ ե այդ ամենահաղթ գորության ա-  
նունը, — հարցրեց Լևոն Եանհազը:

— Նա անուն չունի, կամ սխալ են այն բոլոր ա-  
նունները, վոր մարդիկ տալիս են նրան: Բայց ամեն  
ինչ կախված ե նրանից: Նույնիսկ մեր ծնունդը ու-  
րիշ վոչինչ ե, յեթե վոչ նրա քմահաճույքը: Նա, և  
միայն նա յե մեզ դարձնում այն, ինչ վոր չպիտի լի-  
նեյինք և յերբեմն մյն, ինչ վոր հակառակ ե բնու-  
թյան որևնքներին: Մենք ամենքս, ամենքս յինթա-  
կա յենք նրա հաճույքներին: Իսկ այդ քմահաճույք-  
ները վորքան բազմատեսակ, նույնքան և անքննելի  
ու անհասկանալի յեն: Նա յե, վոր խորտակում ե մեր  
ամենախիմատուն ծրագրերը և վոչնչացնում մեր ա-  
մենազգաստ յենթադրությունները: Նա յե, վոր մեկի  
կյանքը վարդերով ե դարդարում, մյուսինն ազավա-  
զում ե ու այլանդակում: Նա յե, վոր ամենազոր հա-  
մարվածին դարձնում ե տկար ու ծիծաղելի և ամե-  
նաթույլ համարվածին թելադրում ե անել այն, ինչ  
վոր դուք կհամարեյիք հերոսություն: Ա՛հ, պարոն-

ներ, պարոններ, դուք նայում եք ինձ տարակուսանքով և գուցե մտածում եք «այդ մարդու ուղեղը խանգարված եմ: Ո՞վ գիտե թերևս ունիք իրավունք այդպես մտածելու, բայց, պարոններ, գիտցեք, վոր այս անիրավ կյանքը մի փոս ե, ուր ձեր դորավորներեց շատ շատերն են կոտորել իրենց վտանները:

Մարդը կանդ առավ, մտածեց մի քանի վարկյան, մի քանի կաթիլ գինի խմեց և շարունակեց.

— Պարոններ, ձեզնից յուրաքանչյուրը իր կյանքից ու տեսած-լսածներից պատմեց մի արկած, կլսեք յեթե մեկն էլ յես պատմեմ իմ կյանքից: Միայն մեկը, ուրիշը չեմ ունեցել:

— Ինչո՞ւ չե, հետաքրքրական ե. կարող եք պատմել,— շտապեց ասել Լևոն Շահնազը, և նույնը կրկնեցին մյուսները:

— Նախ և առաջ, պարոններ, թույլ տվեք ասել, վոր ձեր առջև նստած ե մի վոճրագործ, այո, այո, մի գարմանաք, Վոճրագործ, այս վտիտ մարմինը, վորին ձեզնից մեկն անվանեց դուրկ ույծից: Լսեք, յես ի ծննդե մի համեստ արարած եյի, վո՛չ ոգտակար, վո՛չ ֆուսակար, այլ այնպես, մարդկային ստվեր: Անվճռական, տատամսոտ, միշտ ձգտում եյի ստվերի մեջ մընալ՝ նման խլուրդին, վոր սարսռում ե արեւի լույսից և հանգիստ ե ղգում իրեն միայն խոնավ հողի տակ: Ուսուցիչ եյի Հյուսիսային կովկասի քաղաքներից մեկում: Սենյակ եյի վարձել մի այրի կնոջ տանը: Նա ունեւր 22 տարեկան մի աղջիկ: Գեղեցիկ չեք, բայց չի էլ կարելի ասել տղեղ եր: Ե՛հ, միջին տեսակի հայ աղջիկ եր, վորի նմանը ամեն ոք տեսնում եք. փողոցներում հարյուրներով և վորոնցից շատ քչերն են ան-

ցորդի ուշադրութիւնը գրավում: Ե՛հ, գիտեք ելի, ազ-  
 աւիլի թևերի պես սև մազեր, թանձր, ինչպես պապու-  
 անների մազերը, կարճ պարանոց, յերկայն իրան-  
 շատ շուտով գիրանալու ակնհայտ նշաններով: Նրա  
 միակ հրապույրն ելին խոշոր կինամոնազույն աչքե-  
 րը: Վո՛չ, վոզոսկրի գույն ունեցող պեղաշար ասամնե-  
 րը: Ա՛խ, այդ անիծյալ ատամները: Նրանց ամեն մի  
 ժպտախ հետ, կարծես, վոսկյա ճառագայթներ ելին ար-  
 ձակում: Անտարակույս, նա ինքն ել զգում էր, թե  
 վորն է իր հրապույրը, վորովհետև շարունակ ժպտում  
 էր: Զվարթ, աշխատասեր ազջիկ էր և վո՛չ հիմար: Բա-  
 րի յեր անսահման և ձևաքից յեկածը չէր խնայի կա-  
 րիք ունեցողին: Մայրը, հարկավ յերազում էր նրան  
 ամուսնացնել, քայց փեսացու չէր դանում: Մյո՞ անի-  
 րավ միջավայրում ապուշներն անգամ ո՞ժիտ էյին պա-  
 հանջում, մինչդեռ այրին վոչինչ չուներ իր աղջկանք  
 տալու, քացի վոզորմելի տնակից, վորի արժեքը չնչին  
 էր: Ինչ վերաբերում է ինձ, կարող էր ամուսնութիւն  
 յերազել մի մարդ, վորի համար սեփական կյանքն  
 անգամ մի ծանր լուծ էր: Յես ատում էյի ընտանե-  
 կան կյանքը և խղճում էյի ամուսնացած մարդկանց:

— Մակայն, յես ամուսնացա, — շարունակեց մար-  
 ցը, հառաչելով: Մյո՞, այո, ամուսնացա այդ աղջկա  
 հետ: Մյն ամենահաղթ դորութիւն շնորհիւ: Լսեցե՛ք:  
 Մի ուր յես հիվանդացա: Թեթե ըսն չէր — թոքերի բոր-  
 բոքում: Մայր ու աղջիկ ամիս ու կես ծառայեցին ինձ  
 դարմանալի հոգածութեամբ, այնպես, ինչպես հարա-  
 գատ մայրս ու քույրս կծառայեյին, յի՞թև ունենայի:  
 Յերբ սկսեցի ասողմանալ, զգացի, վոր կյանքս նրանց  
 եմ պարտական: Զեք կարող յերևակայել, պարոններ,

Թե ինչպես եյի տառապում այն գիտակցությունից, վոր չեմ կարող պարտքս վճարել: Փողո՞վ—ամօթ եր և չունեյի ել այնքան միջոց: Փոխադարձ ծառայությամբ — ինչո՞վ կարող եր ինձ նման մեկը: Մի որ յես այդ մասին խոսեցի այրիի հետ:

— Ե՛հ, վորդի,—ասաց նա—ինձ վոչինչ հարկավոր չե; բացի իմ աղջկա բախտավորությունից:

Ավելի պարզ ակնարկ չեր կարող լինել,—այրի՛ն փափապում եր, վոր յես ամուսնանամ իր դստեր հետ: Յե՛վ յես զգում եյի, վոր որիորդը դեմ չեր մոր ցանկությանը:

Ավելացրեք. պարոններ, և այն, վոր ամիս ու կես որ ու գիշեր տեսնելով անկողնիս քով մի հոգատար եակ, իր փայլուն ժպիտներով, այնքան եյի ընտելացել նրա մերձավորությանը, վոր աւողջանալուց հետո ել պահանջ եյի դառնում վայելել այդ մերձավորությունը: Յե՛վ ահա մի ապարախտ որ յես ամուսնացա ճիշտ այնպես, ինչպես ամեն որ ամուսնանում են ինձ նրման շատերը, դարձյալ իմ ասած անհայտ զորության շնորհիվ:

Մարդը նորին կանգ առավ, նորին հառաչեց ու շարունակեց.

— Զգում եյի, վոր կինս ինձ չի սիրում, այլ իր մոր լուծը թեթեացնելու համար ե իր կյանքը կապել ինձ հետ: Մակայն հանգիստ եյի, վասն զի չեյի յերե՛վակայում անգամ, թե նա կարող ե մի ուրիշին սիրել և ինձ դավաճանել: Ավանակ եյի, ավանակ: Պաշտոնակիցներս գալիս զնում եյին, և կինս ամենքին վերաքերվում եր հավասարապես. վորպես տանտիկին՝ վե-

բին աստիճանի հյուրընկալ, վորպես կին՝ միանգամայն անտարբեր դեպի ազամարդը:

Միայն մեկը կար (Սմբատ եր անունը), վորք հետ նա միշտ վիճարանում եր և շարունակում հակաճառել նրա ասածներին:

Մի որ հարցրի.

— Սիրանուշ, ինչո՞ւ յես այդ տղային այդես հաւլածում:

— Վորովհետեւ ատում եմ նրան:

— Ատում ես, ինչո՞ւ:

— Չգիտեմ, քո պաշտոնակիցների մեջ նա միակ հակակրելին ե, ատում եմ, ատում եմ, ինչպես կարող ես ասել մի կին մի ազամարդի, — կրկնեց նա կատարյալ մանկական անմեղությամբ:

— Տնակը, — շարունակեց մարդը մի բաժակ ևս խմելուց հետո, — այժմ պատկանում եր ինձ ու կնոջս: Նրա առջև կար մի փոքրիկ պարտեզ: Այնտեղ յես սիրում եյի ազատ ժամերիս աշխատել: Բանջարեղեն ու ծաղիկներ եյի ցանում, անկում ու ջրում: Հաճախ տապալում փայտ եյի կոտրում, ձմեռվա համար վառելիք պատրաստում: Հիանալի տապալ բը, թեթե, ըայց շատ կարուկ: Պարոններ, միջանկյալ ասեմ, վոր այդ տապալը յեղավ միակ զենքը, վոր յերբևե ունեցել եմ իմ ամբողջ կյանքում: Սովորեցի նրան գործածել վարպետորեն, մի հարվածով ճեղքում եյի ամենամուր կոճղը: Դե, ի հարկե, այլ կերպ չեբ ել կարող լինել: քանի վոր ամենահզորն այդպես եր կարգազրել կանխապ:

— Այժմ լսեցեք, պարոններ, — առաջ տարա՞վ մարդն իր խոսքը, ավելի ու ավելի վողեւորվելով: Ի՞

սեր ձեր սեղանի, աղատեցիք ինձ ձեր շամպայնից, լամիլ չեմ կարող, սովոր չեմ:—Ամառ եր, պիտի Թիֆլիս գնայի մի ուսուցչական ժողովի մասնակցելու: Չանթաս վերցրի, կնոջս համբուրեցի և գնացի կայարան: Ուրախ եյի, վոր պիտի տեսնվեմ հին բարեկամներիս հետ և մի ամիս վայելեմ նրանց ընկերությունը: Գընացքը պիտի մեկնեի յերեկոյան վեց ու կես ժամին: Հանկարծ հայտարարեցին, թե գիծն ինչ վոր տեղ ավրվել է յերկու ապրանքատար գնացքների ընդհարման հետևանքով և մեկնումը հետաձգվում է մինչև գիշերվա 12 ժամը: Իմաստ չունեի 6-7 ժամ պարասչ նստել կայարանում: Բարվոք համարեցի ուղևորությունս հետաձգել հաջորդ որվան ու վերադարձա տուն:

Յերբ մտեցա պարտիզակի դռնակին, վոր մեր տան միակ մուտքն էր, հունիսյան արեգակն արդեն հետ եր ժողովել իր շոայլաբար սիւսած ճաւագայթնեբը, ինչպես լվացարարը չորացած լվացքը: Հագիվ մի քանի քայլ անցել եյի պարտիզակով, տկանջներիս հասով մի շշուկ: Չար կասկածի պես մի բան ծագեց իմ մեջ: Կանգ առա վարդի թիփերի յետևում և պարզ ու վորոշ լսեցի այս խոսքերը: Ե՛րու վոչ միայն չես սիրում Պողոսին (այսինքն ինձ), դու դեպի նա զգում ես Ֆիդիքական զգվանք, յես այդ շատ լավ գիտեմք: Ահ, այդ սուր տենորային ձայնը. այսոր ել նա հնչում է իմ ականջներում: Դա, պարոններ, իմ այն պաշտոնակիցն էր, վորին կինս այնպես «ատում էր»: Թիփերը իրարուց բաժանելով, անցա այն կողմ: Այնտեղ, այն փայտյա նստարանի վրա, ուր յես շատ յերջանիկ ժամեր եյի անցուցել, կարդալով լավագույն հեղինակներին և դիտելով իմ սիրուն վարդերը, նստած եյին նը-

բանք: Հանգիստ: Վ՛հ, այլ դրկախառնված և այնպես  
ամուր, այնպես ամուր, վոր կարծես ձուլվել էյին ու  
մի մարմին դարձել: Ա՛հ, այդ խելացնոր համբուշքնե-  
րը, յերբեք նմանը չեյի ունեցել կյանքումս: Նրանք  
թրի մի-մի հարվածներ եյին, իմ սրտին ուղղված: Նրանք  
այնպես էյին հալվել բուռն կրքերի բոցերի մեջ, վոր  
ինձ չնշմարեցին: Գլուխս պտտեց, աչքերս արյունա-  
կալվեցին, մթաղնեցին: Սակայն, յես պարզ տեսնում  
էյի մի բան, միակն ամբողջ տիյեղերքի մեջ: Նա պարպ-  
զում էր մայր մտնող արեգակի մասնիչ շողերի ներ-  
քո: Տապարն էր, վոր նույն որը յես մուռացել ու թո-  
ղել էյի նստարանի առջև գտնվող սեղանիկի վրա: Յեվ  
յերեակայեցնք, այդ առաջին և միակ անգամն էր, վոր  
մուռացել ու թողել էյի այդտեղ, ուրիշ որերը յես աա-  
պարս տանում էյի ու դցում նկուղի մեջ: Յես ճանկե-  
ցի նրան և յերկու հարված տվեցի, միայն յերկուսը,  
մեկը դավաճան կնոջս, մյուսը նրան, իմ ընկերոջն ու  
բարեկամին:

Յերկուսն էլ տապալվեցին գետին, մի-մի սուր  
ձիչ արձակելով...

\* \* \*

Պոլոս Նուգբարյանը լռեց: Սեղանակիցները նա-  
յեցին իրարու, խորապես ազդված մարդու պատմու-  
թյունից:

Լևոն Շահնազը հարցրեց.

— Ուրեմն դուք սպանել եք յերկու հոգի:

— Յերեք: Կինս հղի յեր:

— Հետո:

— Մնացյալը հետաքրքրական չէ: Ուշքի գալով,

յես, իհարկե, անմիջապես գնացի և հանձնվեցի վոստիկանությանը: Յերդվյալների դատարանը, իմ վոճերի մեջ մեղմացուցիչ հանգամանքներ տեսնելով, ինձ գատապարտեց ընդամենը հնգամյա աքսորի: Այն ել հետո կրճատվեց: Բայց խնդիրն այդ չե: Դուք տեսնե՞ք ամենազոր զորության արածը:

— Յերկաթուղու գծի ավրվելը, — ասաց սպաններից մեկը:

— Տապարը սեղանի վրա մոռանալը, — ասաց Ասոն Շահնազը:

— Ասացի, վոր յես նրան միշտ տանում եյի նըկուդ: Պարոններ, պարոններ, մի պարծենաք ձեր ուջժով, մի պարծենաք: Դուք ամենքդ, ամենքդ, ամենազոր զորության գերիշխանության ներքո յեք: Յե՛վ վորքան նա խորամանկ է, վորքան նենգամիտ: Վճրանկյուններն ասես նա չի մտնում, վճր փոսերի մեջ չի ապրում՝ մեկին թշվառացնելու, մյուսին յերջանկացնելու համար: Ինձ վոճրագործ դարձնելու համար, նա մտել եր այդ մի կտոր յերկաթի մեջ: Մի ուրիշ զեպքում դուք նրան կտեսնեք կայծակի մեջ անտառում, փոթորկի մեջ ծովի վրա, խաղարկության տոմսակի մեջ, մի անսպասելի հանդիման, մի աներևակայելի ընդհարման, մի անզգույշ արտասանված խոսքի, մի ծուռ քայլի, մի կտոր ապակու կամ խնձորի մի կճեպի մեջ: Նա ամեն տեղ է, ամենուրեք և միշտ տեղը մեր ճակատագրի: Նա ավելի հզոր է, քան բնության որենքները: Ա՛հ, ահ, յեթե նա մի անգամ բարի էրեջտակ է, հաղար անգամ չար դև է, միշտ անսպասելի, միշտ անընդդիմադրելի և հավիտյան անքննելի ու անհասկանալի:

— Այս ե կյանքը, պարոններ, այն խաղար փո-  
սք, ուր ընկել ենք: Մի պարծենաք վոչնչով, վոչնչով  
խսկ այժմ ներեցեք ինձ, վոր ընդհատեցի ձեր դվար-  
ճությունը: Մնացեք բարև:

Ասաց մարդը ու շտապով վճարելով գինեվաճա-  
սին իր կերած խմածի արժեքը, դուրս գնաց:

1922 թ. Սեպտեմբեր  
Փարիզ.

# Ս Տ Ա Խ Ո Ս Ը

(ՅԵՐԳԻՄԱԿԱՆ)

Նրանք մտերիմ բարեկամներ եյին պատանեկան հասակից: Փուցե այն պատճառով, վոր նրանց խառնվածքները տրամագծորեն հակառակ եյին իրարու: Արտաշեսը սակավախոս եր, կարելի չե ասել իսկի չեր խոսում յերբ անհրաժեշտը չեր ստիպում նրան խոսելու, Միսակը շատախոս եր, կարելի չե ասել իսկի չեր լռում: Բացի դրանից Արտաշեսը յերբեք սուտ չեր ասում կամ, ճիշտն ասած, ծուլանում եր ասել մինչդեռ Միսակի համար փշելը դարձել եր որդանական պահանջ:

Հարկավ, Արտաշեսը վաղուց գիտեր իր ընկերոջ թերությունը և չեր հանդիմանում նրան: Վոչ յերկյուղից կամ նրբազղացությունից, այլ միայն ծուլությունից: Չե՞ վոր պիտի խոսեր, մանավանդ գիտեր, վոր Միսակի ստախոսությունը միանգամայն անմեղե, առանց վորեն մեկին խաբելու, մոլորեցնելու կամ պարսավելու ցանկության: Բայց և այնպես, մի ոք հարկավոր եր ճշմարտությունն ասել, և Արտաշեսն ասաց:

— Փիտես Միսակ, յես յեկել եմ այն յեզրակացության, վոր դու մի քիչ ստախոս ես:

— Ի՞նչ:

— Այո, ստախոս ես:

Նկատողությունն այնքան անսպասելի յեր, այնքան հանդուգն, վոր Միսակն ապշեց: Ամբողջ մի րոպե նա, աչքերը լայն բաց արած, նայեց ընկերոջ քրթին, հետո կրծքին, այնուհետև վոտներին, ապա նորեն քրթին:

— Յերգվում եմ իմ մոր գերեզմանով, վոր դու ցնորվել ես,— սկսեց նա, ձեռը զարնելով մարմարյա սեղանին սոսկալի թափով: Թուրքական սուրճի վաղուց պարպված գավաթներից մինն ընկավ հատակի վրա և փշրվեց:

Արտաշեսը վռչինչ չասաց, միայն բարեկամաբար ժպտաց:

— Յէս, ստախոս,— շարունակեց Միսակը, գլխարկը ճակատից հետ մղելով՝ խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու համար,— յէս, յէս, յէս, Միսակ Մանուկյանս: Յէս, վոր ճամբարության համար հալածվել եմ, հալածվում եմ, մինչև գերեզման պիտի հալածվեմ մարդկությունից: Յէս, առն, յէս...

Արտաշեսը լուռ եր, ինչպես մի հրացան, վոր միայն մի փամփուշտ ունեեր, արձակեց ու պրծավ:

— Յերգվում եմ պատվովս,— ավելի բորբոքվեց Միսակը,— վոր դու կատակ ես անում և շատ հիմար կատակ: Հապա տեսնենք...

Յիվ, գրպանից մի դմելի դուրս բերելով, շարունակեց.

— Տեսնում ես այս դանակը: Դե՛հ, ասա, վոր կատակ չեյիր անում: Յերգվիր, և ես իսկույն ևեթ բարսով փորս կպատռեմ, կտոր-կտոր կանեմ ինձ, կը ձգեմ շների առաջ: Այո, այո, թող նրանք կրծոտեն ինձ

ինչպես սատկած ձիու կամ իշի, միևնույն է: Այո, ա-  
յո, այդ ավիլի լավ կլինի, քան հոշակվել ստախոս ու  
ապրել: Յերդվեր, սաս կատակ չեյիք անում...:

— Լավ, յերդվում եմ, վոր կատակ չեմ անում,—  
չծուլացավ արտասանել Արտաշեսը:

— Պատվովդ:

— Պատվովս:

— Վոր յես ստախոս եմ:

— Մի քիչ:

— Այդ միևնույնն է, քիչ թե շատ, ուրեմն ստա-  
խոս եմ, այո,— շարունակեց Մխակը և դմելին, վորով  
պիտի պատահի իր փորը, ծալեց ու գրպանը դրեց:  
— Վոր այդպես է, արի գրադ գանք: Յես մեջտեղ կը  
դնեմ հիսուն ուսրլի, իսկ դու դիր հինգ ուսրլի: Քեզ  
ժամանակ կատմ մի ամիս, մի տարի, հինգ տարի,  
տասը, քսան, յեթե դու մի անգամ ինձ բանես սուս  
ասելիս, կասանա հիսուն ուսրլի, իսկ յեթե չկարո-  
ղանաս, յես քո հինգ ուսրլիով քեզ մի լավ կհարբեց-  
նեմ ու հետո կողերդ կշարդեմ: Գալիս ե:

Գալիս է,— համաձայնվեց Արտաշեսն սձիքն ա-  
զատելու համար:

Նույն որը յերեկոյան նրանք հրավիրված եյին  
մի ծանոթ ընտանիք թեյի: Վորովհետև Մխակի յե-  
րեակայությունն առանձնապես ըորբքովում նր կա-  
նանց ներկայությամբ Արտաշեսն ասաց նրան.

— Տես, Մխակ, դդույշ, վոր գրադդ հենց այս  
յերեկո տանուլ շտաս:

— Զայնդ կտրիր, անիրավ,— գոչեց Մխակը,—  
այսոր դու ինձ մի վերք տվեցիր, վոր հավիտյանս  
հավիտենից չի բուժվիլ: Յես, Մխակ Մանուկյանս  
ստախոս, հա, հա, հա...

\* \* \*

Դժբախտաբար, այս անգամ գայթակղությունը բացառիկ յեղավ։ Միտակը հյուսիսային ընտանիքում, բացի տանտիրուհու յերկու յերիասարդ քույրերից, հանդիպեց մի գեղեցիկ տիկնոջ, վորի հետ վաղուց փափագում եր ծանոթանալ... Յեվ, հակառակի պես, այդ տիկինը մեծ ախորժակ ուներ ամեն տեսակ արկածներ լսելու։ Իսկ Միտակը գիտեր այնպես վողկորված, այնպես պատկերավոր պատմել, վոր շատերը կամա տկամա դրավվում էին։ Նույնիսկ նրանք, վորոնք կասկածով էին ընդունում նրա ասածները։ Նույնիսկ ինքը՝ Միտակը հաճախ հրապուրվելով իր բարձր բարիասնային ձայնով, սկսում եր իր ստերին հավատալ։

Պատմելով իր և ուրիշների կյանքից մերթ ախուր, մերթ դվարճալի արկածներ, նա մի քանի անգամ փորձեց դիմել անզուսպ ֆանտազիայի ոգնությանը, բայց ամեն անգամ հանդիպեց Արտաշեսի անտարբեր հայացքին ու լիզուռն կծեց։ Սակայն այդ յերկար չտեղեց։ Շուտով նա մոռացավ ամեն ինչ և կծիկի ծայրը բաց թողեց։

Ինդեցիկ տիկինը լսում եր նրան և մերթ ծիծաղում, մերթ զանազան բացականչություններով արտահայտում իր հրճվանքը, զայրույթը, ուրախությունը, սարսափը, նայելով Միտակի պատմածներին։

Յերբ ընկերները, հրաժեշտ տալով, փողոց դուրս յեկան, Միտակն արդեն շատ խոսելուց քրանել եր։ Այնուամենայնիվ, նա չհանգստացավ և տակավին վողկված, գոչեց։

— Ահ, ինչ հրաշալի յերեկո անցկացրինք, Արտաշ...  
 Արտաշը իր կոկորդից արձակեց ինչ-Վոր հնչյունն,

Վորից վոչինչ չեր կարելի հասկանալ: Միսակը շարունակեց:

— Տիկին Չարմարյանն ուղղակի սքանչելի յե: Տեսնո՞ւմ եմ, ինչպես եր քրքջում, յերբ յես պատմում եյի ծրծաղելի դեպքեր: Ինչ մեղքս թաղցնիմ, յերբ լսողը գեղեցիկ կին է, չկա ինձ համար ավելի բարձր հաճույք:

— Իհարկե, — արտասանեց Արտաշեսը, — բայց գուցե դրադ տանուլ էս տվել:

Ինչպես:

— Այ, այսպես: Տես:

Այս ասելով, Արտաշեսը բռնեց Միսակի թևից և նրան մոտեցրեց փողոցի ելեքարական լապտերնեբլից մեկին: Իուրս բերելով գրպանից իր հուշատետրը, բաց արավ և սսաց:

— Կարգն:

— Այդ ինչ է:

— Կարգն:

Միսակը կարգաց հուշատետրի մեջ:

«Իմ բարեկամ Միսակ Մանուկյանի յերկու ժամ-վա մեջ առած ստերը...»

— Ազվես, ազվես, — գոչեց Միսակը, — դրա համար եյիք անկյունում սուս ու փուս թաղցնել շան պես: Ապա տեսնենք ինչեր են շարադրել: Ոհո, ոհո, սուս է, սուս է, յես չեմ ասել, թե Պարիզում ապրել եմ յճրկու տարի...  
 — Ասացի՞ր:

— Յես չեմ ասել, թե Մոսկվայի «Մարեչնա» գիշերային ճաշարանում մի դնչուհու համար մի գիշեր հինգ մարդ եմ ծեծել:

— Ասացիր:

— Յես չեմ ասել, Մոսկվայի «Երմիտաժ» ճաշարանում կոշիկիս կրունդով հազար ուրլիանոց հայելիքիս շարդ ու փշուր արել...

— Ասացիր:

— Յե՛վ քեզ ել վկա՛ յեմ բերել:

— Այո՛:

— Բայց սպասիր, այդ ինչ ես գրել: Յես ասել եմ, վոր Լենքորանի անառններում յերկու վազը ե շորս վարազ եմ սպանել:

— Այո՛, ասացիր ու ինձ ել վկա բերեցիր:

Միսակի ձեռները թուլացան:

Քրիստոսի առեք կերեքը վկա, — արտասանեց նա անկեղծորեն, — ամենևին չեմ հիշում, վոր այդ քուրճի ասել եմ:

Արտաշեսը ծիծաղեց իր կարողության չափ, այսինքն մի անգամ ու շատ կարճ փոտկաց:

— Կեցցևա, — ասաց նա, — վերջապես, կյանքումդ մի նշմարիտ խոսք ասացիր...

1915 թ. Փետրվար

ԹԻՓԷԼԻՍ.

## ԱԿՈՅԻ ՏՈՆԱԾԱՌԸ

Փոքրիկ, աղքատիկ քաղաքում, ուր տները մի հարկանի յեն, կտուրները խաբխուլ, փողոցներն անսալահատակ, աղտոտ, ուր ցնցոտիներն այնքան սովորական են, վոր այլևս վոչ վոքի գութը չեն շարժում, չքավորի համար չքավորութիւնը շատ եւ դգաւի չի չի: Այնտեղ բախտերի մեջ անդունդներ չկան, կամիայն գուշների տարբերութիւն, մեկն ավել գորշ քան մյուսը:

Բայց յերբ քաղաքը մեծ է, հարուստ, ցերեկները խանութներում ցուցադրված փարթամ ապրանքներն են շլացնում անցորդին, գիշերները կլուրների և թատրոնների հիւքտրական լույսերը, չունևորների ներվերը մերկանում են և սոսկալի ցավով են ընդունում կառքերի դղրդյունն ու ովտոմորիւնների սուլոցները:

Վաղուց եյին մերկացել բանվոր Գալուստի ներվերը: Այն որից, յերբ համոզվել էր, վոր մինչև կյանքի վերջը պիտի սալին զարկն ծանր մուրճը, վոր ահա տասներկու տարի յե որը տասը ժամ զարկում է և վոր այնքան նրա մարմինը չի ավրել, վորքան հոգին է քայքայել:

Վորպես բանվոր, վորի համար հանգստութիւնն է յերկրային բարձր հաճույքը՝ նա սիրում էր հաստ-

բազմ տոները, յերբ նրա հոգնած մարմինը ներհում եր  
ընտանեկան հարկի տակ: Բայց կային տարվա մեջ  
յերկու մեծ տոներ, վորոնց նա տատում եր հոգու ամ-  
բողջ գորութեամբ: Ատում եր վոչ նրանց խորհուրդը,  
այլ աջն բոլորը, վոր մարդիկ կատել էին այդ տոնե-  
րի հետ—արտաքո կարգի ծախքեր, վոր պարտավորա-  
կան են թե հարստի և թե աղքատի համար:

Ահա չորրորդ անգամն և Գալուստը տարվա միե-  
նույն միջոցին տանջվում և ալիւի քան իր յերեսուն  
ու հնգամյա կյանքի ընթացքում:

Նոր տարին մի կերպ անցավ, բայց ծնունդն ու  
մկրտութեանը մնում են. միթե այս անգամ ել նա չը  
պիտի կարողանա կատարել իր խոստումը—գնել իր  
մի հատիկ Ակոյի համար տոնածառ և զարգարել ու  
լուսավորել այնպես, ինչպես անում են բոլոր հայրերն  
իրենց զավակներին համար՝ հենց այս տեղին տան  
մեջ, վորի ներքնահարկում նա ապրում և խլուրդի  
պես:

Վնչ, այս տարի ել խաբել յերեխային նա չի ու-  
զում և չի կարող: Ինչ մի ամիս առաջ Ակոն նրան  
հիշեցրեց.

— Հայրիկ տոնածառը չմոռանաս, լավը, մեծը...

Յեղ հեթո ալիւացրեց.

— Յես ուզում եմ, վոր շաքարի գառնուկներ ել  
լինեն, թմբուկ ել, սուրիչ ել...

— Լավ, Ակո ջան՝ այս տարի տոնածառ կունե-  
նաս, անպատճառ կունենաս:

— Անպատճառ,—կրկնեց Գալուստի կինը գառը  
հեղնութեամբ,—յերեք տարի յե իտքել ես, այդ ել կը  
լինի չորրորդը: Գոնե մի խոստանար:

Դյուրին և ասել Վճի խոստանարն: Կարելի՞ յե  
մերժել այդ անմեղ աչքերին: Նրանք աշխարհի հավա-  
տով են նայում նրան: Այդ փոքրիկ ճերմակ ձեռներին:  
Նրանք աշխարհի զզվանքով են փաթաթվում նրա կոշտ  
պարանոցին:

Բայց ի՞նչպես: Անցյալ ամիսների աշխատավար-  
ձը ստացել է և արդեն ծախսել, մնում են մի քանի  
սուրբիներ:

— Հուռիկ, թաթախման յերկո ձուկ հարկա-  
վոր ե:

— Դե, ի հարկն, հարկավոր ե, ի՞նչ հարցնելու  
քան ե:

— Ուղում եմ ասել, վոր ձուկն այս տարի թանդ  
ե, կրակի դին:

— Թանդ ե թե եժան՝ պետք ե առնել, որենք ե...

— Այդ մի սուրբի. յուղ, բրինձ, ածուխ, այդ ել  
ամենաքիչը մի սուրբի: Տերտերն ել դալու յե, ի հարկն:

— Տերտերն ել, տիրացուն ել:

— Պրծավ: Գրպանումս մնացել է ուղիղ յերեք  
սուրբի: Հերեք ե:

Վոչ, պետք ե ուրիշ միջոց գտնել, ձուկն ել ան-  
հրաժեշտ ե, տերտերն ել... Մեծ բան չի պահանջվում,  
դարձյալ մի յերեք-չորս սուրբի: Գալուստը գիտե վար-  
տեղ գնել եժան դարգարանք տոնածառի համար: Ամեն  
որ նա յերկու անգամ անցնում է մեծ հրապարակի  
վրա գտնվող փայտյա խանութների մոտով: Արդեն  
նա իր մտքում ընտրել է ըտլորը, ինչ վոր պահան-  
ջում է Ակոն: Այլիլի: Արդեն նա ծառը զարդարել է  
իր ձեռքով և լուսավորել գույնզգույն մոմերով ու  
լապտերներով: Ակոն ուրախ-ուրախ թռչկոտում է ծա-

ուի շուրջը, ծափ տալով, պարելով, յերգելով: Ինչպէս  
են վառվել նրա սեռակ աչքերը, ինչպէս են կարմրեջ  
նրա գունատ այտերը, ինչպէս են նրա տափակ կուրծքն  
ուժգին բարձրանում ու իջնում:

Քալուսաը սիրտ առավ կառավարչի ոգնականից  
խնդրելու առաջիկա շարաթվա վարձը:

— Ի՞նչ, — գոչեց ոգնականը, ծիծաղելով, — չկա-  
տարած աշխատանքի վարձ: Այդ վճրանդ և տեսնվածո՞

— Բայց յես կըլիատարեմ այդ գործը:

— Վոչ, յեթե քեզ տամ, մյուսներն ել կպահանջ-  
են: Գնա գործիդ, առանց այդ ել վերջերս դուք՝ բան-  
վորներդ շատ եք յերես առել:

— Բայց տոնածնորը, Ակոն մաշվում ե, — ասաց  
մաքում Քալուսաը և դլուխը կրծքին թեքելով, դուրս  
յեկավ գրասենյակից:

Հուսահատությունը պաշարել եր նրան. նա տես-  
նում էր, վոր այս անգամ ել պետք է խարի Ակոյին:  
Իսկ այդ ավելի դժվար է, քան առաջ, վորովհետե  
Ակոն վեց տարեկան էր: Արդեն փոքրիկը մի տեսակ  
կասկածով ու թերահավատությամբ և նայում իր հոր  
յերեսին և ել առաջվա պես չի թախանձում:

Այն որը մանուկը, հորը ճանապարհ դնելով,  
ասաց.

— Յեթե այսօր ել չըրես, ել քո խոսքին չեմ  
հալատալու:

Քալուսաը լուռ դուրս յեկավ և վնաց գործի:  
Յերքեք նա այնքան ճնշված չեր յիդել: Նա, վոր սո-  
վորաբար առավոտները գործի գնալիս յերդում կամ  
շվացնում էր գյուղական յերգեր:

Ի՞նչպէս, վճրանդից: Յեվ վորքան մտածում էր,

այնքան յիջը դժվարանում եր: Նա մտավ գործարանի դավիթը, առանց սովորական բարեններ տալու աջ ու ձախ հանդիպող ընկերներին...

Հանկարծ նրա հայացքն ընկավ մեկ բանի վրա: Նա կանգ առավ մի քանի վայրկյան: Մի միտք անցավ նրա գլխով և անմիջապես պաշարեց նրա հոգին: Այնտեղ, գործարանի շրջապատի մոտ կար մի գորշ-գեղնագույն բան, վոր փայլում էր արեգակի առավոտյան ճառագայթներից: Որն յերկու անգամ նա անցնում էր այդ առարկայի մոտով. ինչո՞ւ միայն այսօր ուշադրութուն դարձրեց նրա վրա:

Քալուստը ժպտաց տարրինակ ժպտով: Նրա մուսլ դեմքի վրա փայլեց անսպասելի հույսո նշան: Նա մտավ արհեստանոց, պատուված չուխան հանեց, մի կողմ ձգեց և վերցեց մի վուժանոց մուրճը:

Ամբողջ որը նա գործում էր և մտածում. այն գորշ-գեղնագույն առարկայի մասին, վոր յերևում էր արհեստանոցի մրոտ լուսամուտից, և վորքան շատ էր նայում, այնքան ավելի ու ավելի յեր հուզվում:

Նրա հուժկու ու հոլանի բազուկները գործում էջին առանձին յեռանդով, բայց անփուլթ, չպահանջելով հարվածների հերթը և ընկերներին խանգարելով:

Ահա, վերջապես, վերջին սուլոցը՝ վորն ավարտված է:

Քալուստը մուրճը դրեց իր սովորական տեղը, արբեց ճակատը կապտագույն շապկի մրոտ փեշով, չուխան հագավ, սեղմեց գլխին գդակը և արհեստանոցից դուրս յեկավ:

Որն արդեն մթնել էր թեև դեռ վեց ժամն էր: Քալուստը մի անգամ ևս հիշեց Ակոյի դեմքը, լսեց

նրա կեղեքիչ հարցը «ելի՛ չըրերցիր»։ Նրա գլուխը պտտեց։ Այդ յերեխան սպասելուց հոգնեց, նա կարող է վշտից հիվանդանալ։ Դիչ չեն սպասահել նման դեպքեր։ Ակոն կարող է մեռնել, Ակոն չի գիմանալ... Տեք աստված, ազատիր Գալուստին փորձանքից։ Բայց աստված խուլ է աղքատների համար, Գալուստը վազուց, շատ վազուց գլտե այդ բանը։ Վոր այդպես եք ինչ՞նչ չարհամարե՞ն նրա որենքները, ինչ՞նչ չմեղանչել։ Այո, Գալուստը կանե ինչ վոր մի անգամ արդեն վճռել է անել։ Թող լինի, ինչ վոր լինելու յե։

Հասնելով գործարանի շրջապատին, նա քայլերը դանդաղեցրեց։ Թույլ ավեց վոր ընկերները հեռանան։ Դարպասի մոտ յերկու պահապաններ խուզարկում եյին բանվորներին, չլինի թե նրանք գործարանից բան տանեն իրենց հետ։ Այդ կողմից նոր կառավարիչը վոր մի յերիտասարդ ինժեներ եր, չափազանց խստապահանջ եր։

Նա ասում եր.

— Յես կարող եմ բանվորին ամեն բան ներել, բացի գողութունից։ Գողի համար յես գուժ չունեմ։

Գալուստը մոտեցավ փայլուն առարկային, վոր այժմ մի մութ կես եր առանց ձևի։ Նա մի վճռակամ շարժումն արավ, թեքվեց և իր ուժեղ ձեռներով առարկան բարձրացնելով, շրջապատի վրայով ձգեց փողոց։ Ապա նա հանգիստ քայլերով մոտեցավ դարպասին։ Նա վերջինն եր։ Պահապանները նրան սովորաբար չեյին խուզարկում։ Տասներկու տարի յեր նա աշխատում եր այդ գործարանում, և վոչ վոք նրան չեր կասկածել։ Նա հայտնի յեր իր մանկական հեղությամբ և ամոթխածությամբ։

— Գնահ, Գալո, մենք քեզ ճանաչում ենք,— ա-  
սաց պահապաններին մեկը սովորական դարձվածքը,  
յերբ Գալուստը կանգ առավ դարպասի առջև:

Գալոն ցնցվեց այդ խոսքերից և շտապեց դուրս  
գալ: Դարպասը փակվեց: Փողոցում նա սպասեց մին-  
չև վոր բանվորների վերջին խումբն անհետացավ: Նա  
մոտեցավ այն տեղին, ուր գցել էր առարկան, հոնեց  
չուխան, փաթաթեց նրա մեջ առարկան, վերցրեց  
կանատակը ու հեռացավ արագ քայլերով: Նրա համա-  
պարտեցիներին մեկը, գործարանից վոչ հեռու պահում  
էր մանր ապրանքների խանութ:

Գալոն ուղղակի այնտեղ գնաց: Բարեբախտաբար  
խանութում վոչ վոք չկար, բացի խանութպանից:

— Ոհո, Գալո,— հանդիպեց նրան մանրավաճառը,  
վոր մի զվարթ, կատակասեր մարդ էր կարմիր ալտե-  
րով ու հաստ պարանոցով,— ինչպես տեսնում եմ, քե-  
ֆըդ ներսումդ վառել ես, վոր ձյուն-ձմեռ չուխեդ  
կանտակդ ես դրել:

Գալոն վոչինչ չասաց: Աջ ու ձախ նայելով, կա-  
պոցը դրեց վար և նայեց խանութպանի յերեսին:

— Այդ ի՞նչ է:

— Կուսն,— ալտասախանեց Գալոն,— ճանապարհի  
վրա ընկած էր, վերցրի: Թող քեզ մոտ մնա, Մարուք  
շան, եզուց կիմանանք ով է տերը, իրան կտանք:

— Գտել ես, համ,— արտասանեց Մարուքը մի  
տեսակ նենգությամբ,— Էհ, փառք աստծու, վոր վիր-  
ջապես, դու յել մի բան գտար: Ընկերներինդ շատերը  
շաբաթ չի անցնում, վոր մի բան չգտնեն. թող մնա—  
կաշխատենք տիրոջը գտնել:

Գալոն վոչինչ չասաց, բայց հասկացավ, վոր խա-

նութպանը դուշակել և իր սուտը: Նա յերեսը դարձրեց դուրս գնալու:

— Սպասիր, ա մարդ, մեր ես վազում,— կանչեց նրան խանութպանը:

Գալոն կանգ տուալ:

Խանութպանը բաց արավ դրամարկղը և, այնտեղից դուրս բերելով յերեք ուռքլի, առաջարկեց Գալոյին:

— Վերցրու,—ասաց նա:

— Ինչո՞ւ համար:

— Վերցրու, փող ե, հող չե:

Գալոն նայեց թղթադրամին, ապա Մարուքի յեքեսին և վիզը քորեց:

— Վերցրու, նազ մի արա, քեզ համար ե նորություն, յես սովոր եմ: Դուքանիս յետևում ելի կա գրանցից մի քանիսը. ընկերներդ են բերել: Յես բոլորի տերերին պետք ե գտնեմ և, հե-հե-հե, պիտի տամ իրենց: Դո կուանի տիրոջն ել կգտնեմ, միամիտ կաց, հե-հե-հե, քոնը յերեք մանեթից ավելի չարժե: Վերցրու: Դե լավ, ես ել քեզ մի մանեթ, յեղավ չորս, Վոր սպանես ել ավելի տալ չեմ կարող: Յես գիտեմ, վորտեղ ես գտել: Կառավարչին ել եմ ճանաչում, ողնականին ել, հասկանում ես ինչ եմ ուզում ասել: Վերցրու, քրիստոսի առեք կերեքը վկա, ավելի չարժե...

Գալոն առանց մի բառ արտասանելու, խլից խանութպանի ձեռքից դրամը և, չուխան հազնելով, դուրս գնաց:

Նա վազեց շուկա: Դրամն այրում եր նրա ձեռը, շտապեց աղատովել նրանից: Նա գնեց բոլորը, ինչ վոր հարկավոր եր Ակոյի համար: Ավելացան մի քանի

տասնյակ կողակներ: Գալոն մտալ գինետուն, իրարու յետևից խմեց չորս բաժակ ողի, առաջին անգամ իր կյանքում: Զվարթացալ և շտապեց տուն Ակոյին ել դվարթացնելու:

Տոնածառը դուրս յեկալ հրաշալի մի բան, մինչև անգամ ավելի լալ, քան մի քանի հարուստ տներում: Գոնե այդպես ասացին հարևան կանայք:

Ակոն յերջանիկ եր, Ակոն ուրախությունից վտանքի տակ յերկիր չեր դգում:

Ուրախ եր Ակոյի մայրը, նա շարունակ կրկնում եր.

— Ա՛հ, վերջապես, վերջապես:

Բայց ի՞նչ պատահեց Գալոյին: Ահա յերեք որ և նա դարձել և անճանաչելի: Ծննդյան յերեկոն նա անցկացրեց տխուր, մկրտության որը նույնպես, հետևյալ որը դարձյալ: Նա մեծ մասամբ, նստած խոնավ սենյակի մութ անկյունում, լուռ նայում եր մերթ տոնածառին, մերթ Ակոյին, մերթ հատակի մի կետին և դլուխը տարորինակ շարժում: Կնոջ հարցերին պատասխանում եր մութ բառերով և ձեռների անորոշ շարժումներով: Ակոյի յերախտագետ համբույրներին պատասխանում եր ծանր հառաչանքներով, մինչև անգամ մի տեսակ սառնությամբ: Մի յերկու անգամ նա վրձրիկին իրենից հրեց անսովոր կոպտությամբ: Մի անգամ ել կնոջը հայհոյեց—չտեսնված բան:

Տոներն անցան, բայց տոնածառը դեռ ցցված եր սենյակի մեջտեղում:

— Հերիք և, վերցրու, դեն կորցրու, —ասաց Գալոն կնոջն այն առավոտ, յերբ տոներից հետո աշխատանքը դորժարանում սկսվել եր:

— Ձե, մայրիկ, թող մնա, թող մնա,—աղերսեց  
Ակոն:

— Պահիր ինչքան ուղում ես, բայց յես չտեսնեմ  
չտեսնեմ:

Նա շտապեց գործարան: Ամբողջ ուրը նա ինքն  
իրանն չեր, աշխատում եր արբածի պես:

Գալո, մուրճդ զգուշ ընկեցրու,—կրկնում եր  
վարպետը շարունակ:

— Ձգուշը եմ:

Բայց նա զգուշը չեր: Յերկու անգամ նա զարկե-  
լու հերթը փախցրեց: Յերրորդ անգամ նա շտապեց,  
և նրա մուճը դիպավ ընկերոջ մուրճին: Այդ ընդհա-  
րուճից ընկերը սասցած զորեղ հարված ու ընկավ  
դեպնի վրա:

— Ի՞նչ արիր, ավանակ,—դու հարբած ես,—  
պոռաց վարպետը:

Առաջին անգամն եր Գալոն լսում այդպիսի բա-  
նիք:

— Յես հարբած չեմ,—ասաց նա մուրճի կոթը  
սեղմելով ձեռների մեջ:

— Ուրեմն ցնդվել ես:

— Խեղճս գլխիս ե, վարպետ:

Բարեբախտաբար, հարվածը վտանգավոր չեր և  
սասցողը բարի մարդ էր:

— Սաքուլ,—ասաց Գալոն, տարորինակ ժպտա-  
լով,—մի ուրիշ անգամ դու կըզարկես ինձ, յերբ իմ  
որին կըլինես:

— Բայց ի՞նչ ե քո ուրը—ասա, վոր մենք ել  
իմանանք:

— Վոչինչ, վոչինչ:

Արտասանելով այս բառը, նա այնպիսի մի զորեղ հարված տվեց շիկացած յերկաթին, վոր սպիտակ պեծերը մինչև առաստաղ բարձրացան ու ընկան հեռավոր բանվորների վրա:

Մի քանի պեծեր դիպան վարպետի յերեսին:

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ:

— Գալոն գիշերը տանը չի քնել,—կատակեցին վոմանք:

Վարպետը կատաղեց:

— Դուքս յեկ շարքից, դ՛ուքս,—գոռաց նա,—դու կարող ես մարդ սպանել:

Գալոն մուրճը իջեցրեց, հենվեց նրա կոթի վրա արմուճնկներով, նայեց աջ ու ձախ և ասաց.

— Վարպետ յես կյանքումս չեմ մտածել մարդասպանության մասին: Գողության մասին ել չեմ մտածել:

— Դու հիվանդ ես, գնա տունդ, պարկիր,—ասացին մի քանիսը,—աչքերդ վառվել են կրակի պես:

— Յես հիվանդ չեմ:

Յեվ կամեցավ գործը շարունակել, բայց այդ պահին հանկարծ սկսվեց մի իրարանցում:

— Ի՞նչ, մի, յի՞րք,—լավեցին այս ու այն կողմից: Բոլոր վարպետներն ու բանվորները դադարեցին գործելուց և շրջապատեցին կառավարչի ոգնականին, վոր գոռում էր.

— Շճւտ, ամենքդ ժողովեցեք, իսկույն կգա:

— Ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել,—հարցրեց Գալոյի վարպետը:

— Գողություն, —պատասխանեց մեկը,—կռան են

գողացել գործարանից: Կառավարիչը գալիս և քննություն կատարելու:

— Գալոն գունատից Մուրճը ձեռում նա դանդաղ քայլերով մտահցով խմբվածներին:

Յեկավ կառավարիչը գործակատարներով ու պահապաններով շրջապատված:

Տիրից ընդհանուր լուսթյուն: Բանվորների կոշտ ու մրտա գեմքերն արտահայտեցին խորին լրջություն: Նրանք նայում էին իրարու յերեսին հետաքրքրված, յերկյուզով:

Գողություն, ներկա կառավարչի որերձիվ, յերբ գողությունը հայրաբարված և սպանության հավասար վոճիբ: Ո՞վ պիտի լինի դժբախտը, վոր ինքը իրեն կործանում և:

Կառավարիչն առաց.

— Լսեցեք, գործարանի բակից գողացված և մի մեծ արժեքավոր կտան: Թե յերբ հայանի չե: Այս պատճառով յես պահապաններին կենթարկեմ առկանքի: Բայց վոր գողացողը ձեզնից մեկն և—այս յես հաստատ գիտեմ: Դեհ, թող առաջ դա մեղավորը և գողությունը խոստովանի: Յես նրան վոստիկանության չեմ հանձնիլ և քանտ չեմ նստեցնիլ: Յես նրան կարճակեմ առանց հետևանքների: Լսում եք:

Նորեն տիրից լուսթյուն, նորեն բանվորները նայեցին իրարու յերեսին: Ապա սկսեցին շշուկներ, յենթադրություններ, վոխադարձ կտակածներ: Կասկածեցին ամենքին, բացի մի քանիսից, վորոնց թրվումն էր Գալոն: Նրա շխտակությունը հայտնի յեր ամենքին: Վոչ վոք չհիշեց նրա անունը, վոչ վոք չնայեց նրա յերեսին: Իսկ նա կանգնած էր խմբից մի

վորքը հեռու, — մեն-մենակ, գունատ, աչքերը գետնին հառած: Նրա շրթունքները դողում էին, լախ կուրծքը ուժգին բարձրանում էր ու իջնում:

Կառավարիչը, մի քանի վայրկյան սպասելուց հետո, շարունակեց.

— Դուք լսում եք, վոչինչ չե՞ք ասում: Դուք չե՞ք ուզում մատնել ձեր ընկերոջը: Ողնական, հեռախոսով կանչեցեք պրիստավին և խնդրեցեք, վոր հետը վտատիկանական շուն բերի: Շունը դրանցից աղնիվ է, նա կգտնի գողին: Պահապաններ, ինչո՞ւ չեք խոսում: Մ'ում եք կասկածում, ասացե՛ք:

— Սիմոնին, Ավետանց Սիմոնին, — ասացին պահապանները միաձայն:

Բանվորները հառաչեցին, թեթևութուն դգալով: Չե՞ վոր կասկածը կարող էր ընկնել նրանցից յուրաքանչյուրի վրա:

Մի քանիսը, վորոնց վրա անցյալում մեղքեր կային, ասացին:

— Այո, Սիմոնը հայտնի յե, անկասկած նա յե գողացել:

Առաջ յեկավ մի նիհար, կուրծքը ներս ընկած յերիտասարդ:

— Դ՞նչ յես Սիմոնը, — հարցրեց կառավարիչը:

— Հրամանքս:

— Դ՞նչ յես գողացել կուանը:

— Չե, աղա, յես գող չեմ:

— Այդ կտեսնենք. պահապաններ տարեք դրան, պահեցեք մի տեղ, յես իսկույն պրիստավին կըկանչեմ հեռախոսով:

Պահապանները բռնեցին Սիմոնին թևերից:

— Թողեք ինձ, թողեք, յես գող չեմ,—պաշա-  
պանվում եր բանվորը:

— Շուներ կասե գող ես, թե չե,—ծիծաղեցին վո-  
մանք:

— Դեհ, ցրվեցեք ձեր գործին,—հրամայեց ոգնա-  
կանը և հետեաց կառավարչին, վոր գողին դուռն հա-  
մարելով, դիմեց դեպի արհեստանոցի դռները:

Հանկարծ Գալոն, վոր մինչև այդ վայրկյան լուռ  
ուռ անշարժ կանգնած եր, գոռաց.

— Տղերք, ասացեք կառավարչին, վոր սպասե:

Կառավարիչը կանգ առավ: Ամբոխը նորեն  
խմբվեց:

Գալոն հանդարտ քայլերով մոտեցավ կառավար-  
չին և դառակը վերցրեց:

— Կռանը յես եմ գողացել,—ասաց նա անհող-  
գողի ձայնով: Սիմոնին բաց թողեցեք, նա անմեղ ե:  
Ամենքը դարմացան:

— Նա գժվել ե, նա հարբած ե, տեղին ե տա-  
լիս,—լսվեցին այս ու այն կողմից:

— Դժև,—դարմացավ կառավարիչը:

— Այո, յես,—կրկնեց Գալոն:

— Այդ անհավատալի յե,—ասաց ոգնականը:

— Սուտ ե ասում Գալոն, նա չի գողացել: Նա  
աղնիքով մարդ ե,—լսվեց շատերի բերնից:

— Գալոն աղնիքով եր, տոնածառը նրան գող շի-  
նեց,—արտասանեց Գալոն:

— Տոնածամբը, ի՞նչ ե ասում, պարզ խոսիր,—գո-  
չեց կառավարիչը:

— Յես ասում եմ, կռանը յես եմ գողացել:

Մարդ ուղարկեցեք մանրավաճառ Մարուքին հարց-  
նելու:

Կառավարիչը հրամայեց Սիմոնին ազատ թողնել:

Պահապանները մոտեցան Գալոյին:

— Հարկավոր չե ինձ բռնել,—ասաց Գալոն,—  
յես ինքս կանեմ, ինչ-վոր հարկավոր ե:

— Յեկ գրասենյակ, յես կկարգադրեմ,—հրամա-  
յեց կառավարիչը:

Գալոն հետևեց նրան:

Նույն յերեկո նրան արձակեցին առաջին քննու-  
թյունից հետո: Կառավարիչը խնայեց նրա ընտանե-  
կան կացությունը, բայց գործից զրկեց:

Հինգ որ անցած Գալոյի կապտած դիակը գտան  
ճովի ավիին, ավազների մեջ:

1914 թ. Հունվար  
Թիֆլիս.

## ԿՅԱՆՔԻ ԺՊԻՏԸ

— Մայրիկ յես վախենում եմ,— լսվեց խոր դի-  
շերին մանկան զողողողուն ձայնը:

Նա բաց արավ աչքերը: Մենյակի թանձր խա-  
վարը ավելի սարսափեցրեց նրան:

— Մայրիկ, մայրիկ, զարթնիր յես վախենում  
եմ,— լսեց մայրը մանկան աղաղակն ու զարթնեց:

— Ինչո՞ւ յես վախենում,— ասաց նա, վեր թըռ-  
չելով փոքրիկի ձայնից խայթված:

— Մայրիկ, ելի կրակում են: Լսիր:

— Մայրական քնքուշ ձեռք, վորին ընությունը  
այնքան սեր եր ներշնչել, մեղմիկ իջավ փոքրիկի սա-  
ռը քրտինքով թրջված ճակատի վրա:

— Լսում ես, մայրիկ, ահանջ դիր:

Գիշերային հանգիստը վաղուց եր խանգարվել է  
հրացանի ճարձատյունով:

Սլացան վերջին գնդակները հատ-հատ ինչպե՞ս  
յերամից հետ մնացած թռչուններ. հայտնի չեր վոր-  
տեղից և ուր. Յե՞վ նորեն տիրեց լուռթյուն:

— Մայրիկ, ինչո՞ւ յին կրակում:

— Հենց այնպես, հաճույքի համար:

— Բայց յես վախենում եմ:

— Մի վախենար, զավակս, հեռվում են կրա-  
կում:

— Շանտ հեռվում:

— Շատ հեռվում:

— Գնդակները մեր տանը չկ'ն հասնիլ:

— Չեն հասնիլ, զավակս, չեն հասնիլ: Քնիր հանգիստ:

Թռավ մանկան կրծքից մի ծանր, վոչ մանկական հառաչանք:

Չհանդատացավ նա: Յերկար, յերկար ժամանակ պտտում եր իր անկողնում: Յեղ նրա վառ յերևակայության մեջ մի առ մի դարթնեցին բոլոր այն սարսափները, վոր մայրը կարդացել եր նրա համար մանկական գրքերից: Անտառումն եր նա իր ընկեր ու ընկերուհիների հետ: Ուշացել էյին տուն վերադառնալու, մոլորվեցին: Դեզերում էյին ծառերի մթության մեջ: Առյուծներ, վագրեր, գայլեր ու բորենիներ, ոձեր ու կարիճներ: Յեղջուրավոր դեեր, պոչավոր սատանաներ, կմախքներ, վորոնք ծիծաղում էյին, ահուելի պառափներ մանգաղներով զինված: Մարդիկ առանց գլուխների, գլուխներ առանց մարմինների, վոր խոսում են ու թավալվում գետնի վրա, մեծ անդունդներ վիշապներով լեցուն: Բոլորը, բոլորը, ինչ վոր ստեղծել եր քանաստեղծների հիվանդոտ յերևակայությունը մանուկ սերնդի կրթության համար:

Վիշապի մի սուր սուլոց, հետո յերկրորդը, յերրորդը...

— Մայրիկ, զարթնիր, յես վախենում եմ,— դուրս թռավ մանուկն իր փոքրիկ անկողնակալից և ընկավ մոր գիրկը:

Տակավին մութն եր:

— Ի՞նչ պատահեց քեզ, մանուկս: Քնիր դեռ մութն է:

Նորին նա փոքրիկին գրեց իր անկողնակալի վրա,  
 ջերմ համբույրներով հանդատացրեց նրան:

— Վոչ, չեմ կարող քնել, մայրիկ, մի բան պատ-  
 միր ինձ համար:

— Ի՞նչ պատմեմ:

— Ինչ ուզում ես, ինչ ուզում ես, լավ բան:

— Կամենաս, կարդամ քեզ համար այն գեղին  
 գրքից:

Մանուկը սարսափեց:

— Վոչ, վոչ, վոչ, — գոչեց նա, — չեմ ուզում, դեմ  
 պցիր գեղին գիրքը: Գցիր վառարանի մեջ, թող այն-  
 անգ այրվի: Պատմիր ուրիշ բան, քեզից պատմիր:

Յեվ ասաված լուսավորեց մոր միտքը: Յեվ մայ-  
 րը դարձավ բանաստեղծ ու ստեղծագործիչ անմիջա-  
 պես:

Դա իր հարագառ զավակի իսկ կյանքն էր: Յե-  
 դեղ է մի մանուկ վեց տարեկան: Ծնողները սիրել են  
 նրան իրանց հոգու ամբողջ ջերմությամբ, շոյել ու  
 փայտաշել են ու վաչինչ չեն խնայել նրա համար, վո-  
 չինչ: Մանուկը յեղել է յերջանիկ այդ սիրով և պաշ-  
 անել է իր ծնողներին ու սիրել կյանքը:

Յեվ աշխարհն այնքան հաճելի է յեղել նրա հա-  
 մար, վոր վոչ մի վիշտ, վոչ մի դառնություն չի ընկ-  
 ճել նրա մաստղ հոգին: Ապրել է ու աշխատել, աշ-  
 խատել է ու ապրել մինչև խորին ծերություն, միշտ  
 ուրախ, միշտ զվարթ: Նա հավատացել է կյանքին խո-  
 րին հավատով և սիրելով կյանքն ու իր զավակներին,  
 արհամարել է մահը և միշտ հեգնել ու ծաղրել է նրան  
 ինչպես առավտան և իր պայծառ լուսով ծաղրում գի-  
 շերվա խավարը: Արեգակը նրա համար է յերկիրը լու-

աավորել, ծառերը նրա համար են բարձրացել, նու-  
 նիները նրա համար են ըուսել ու անուշ բուրմուռն  
 տարածել, գետերը նրա համար են հասել, աղբյուր-  
 ները նրա համար են կարկաչել, թռչունները նրա հա-  
 մար են յերգել, յերաժիշաները նրա համար յերկնքից  
 աստվածային հնչյուններ իջեցրել, իսկ հուրը, սուրը  
 նրա համար յեղել են խաղալիքներ: Ամեն ինչ, ամեն  
 ինչ նրա յերջանկութեան համար է յեղել, և յերկիրը ու  
 յերկինքը, և ծովերը և աստղերը, համայն տիիղերքը:  
 Մարդու համար: Յեվ մարդն յեղել և հպարտ ու վին,  
 ուրախ ու յերջանիկ:

Յեվ մայրական անուշ ու քնքուշ ձայնի յերա-  
 ժշտութեամբ հանդստացավ մանկան փոթորկված հո-  
 գին, ու նրա աչքերը մեղմիկ վազվեցին...

Նա քնեց և այս անգամ նրան պաշարեցին այլ  
 յերազներ: Յերազներ, միմյանցից ուրախ ու հաճելի:  
 Ծաղկազարդ սարեր ու բլուրներ, պայծառ յերկինք,  
 դմայլելի յերկիր, և յերաժշտութեան, այնքան դյու-  
 թիչ ու այնքան կախարդիչ, զոր մանկան եյութեու-  
 նը ձուլվեց նրա հնչյունների հետ...

Գիշերային բուերը լեցին, դարհուրելի պատկեր-  
 ները չքացան, առհելի ուրվականները կորան: Գաղա-  
 րեց աքաղաղների աններպաշնակ կանչը, ոճերի վըշ-  
 վըրցը: Սկսեցին յերգել առավոտյան թռչունները գափ-  
 թում գտնվող ծառերի վրա: Յերազը խառնվեց իրա-  
 կանութեան:

Մայրը զարթնեց, բաց արավ լուսամուտի վեղ-  
 կերը: Գարնանային արեգակի շողերը վոսկեղոծեցին  
 մանկան յերեսը, և նայեց մայրը ու նրա սիրտը սկսեց  
 աւժգին բարախել... Այն ինչ անդորր ու յերջանիկ

ժպիտ եր մանկան դեմքի վրա: Յերբեք, յերբեք նա  
չեր տեսել այդքան պայծառ, այդքան ուրախ ժպիտ:  
Կյանքի ժպիտը:

Յեվ մայրը վերցրից անշնորհք բանաստեղծի ման-  
կական յերգարանը, վոր լիցուն եր սարսափնեբոյժ  
շպրտեց վառարանն, ասելով.

— Յես եմ բանաստեղծ ե վոչ դու:

1908 թ. Ապրիլ  
Փարիզ.

## ՎՈՍԿԻ ԳՐԶԻԴ ՄԱՏԱՂ

Շատ տարիներ առաջ յես խմբագրում եյի մի շարաթաթերթ, բարերախտաբար ժամանակավոր, վարովհետև բոլոր գրական դիրքերից խմբագրի պաշտոնն ամենամանախորժն է ինձ համար: Յես տեսել եմ շնորհալի մարդիկ, վորոնց ուղեղը դադարել է գործել այն սրից, յերբ նրանք խմբագիր են դարձել:

Մի որ ինձ մոտ յեկավ մոտ 19-20 տարեկան մի պատանի, Նիհար, գունատ սղա յեր, կուրծքը ներս ընկած, աչքերը տարորինակորեն փայլուն:

— Խնդրեմ ձեր շարաթաթերթի մեջ տեղ շնորհեք այս գրվածքին, — ասաց նա թույլ ու չոր ձայնով աւ գրասեղանիս վրա դրեց մի տետրակ:

— Այդ ի՞նչ է, — հարցրի յես, խմբագիրներին, հատուկ մի արհամարհական հայացք ձգելով ձեռագրի վրա:

— Իա իմ առաջին լուրջ գործն է, — պատասխանեց պատանին առանց շփոթվելու, — հոգեկան եղյուճա է:

— Շատ բարի կը կարգամ կը տեսնեմ, — ասացի յես, ձեռագիրը շարեւելով մի կողմ:

— Յէրբ գամ ձեր պատասխանը դիտնալու:

— Մի յերկու շաբաթ հետո:

— Այդ շատ ուշ է:

— Ուրիշ կերպ չեմ կարող:

Պատանին գլուխ տվեց ու դուրս գնաց: Նախա-  
անյակից լավեց նրա չոր ու կասկածելի հազը:

Յես ձեռագիրը ձեռքի գրասեղանիս առջև, ի  
հարկե, նույն որն իսկ մտապա նրան:

Յերկու շաբաթ անցած, պատանին յեկավ: Այս  
անգամ նա ինձ տվելի նիհար թվաց:

— Ա՛հ, ներողութուն, ժամանակ չեմ ունեցել  
ձեր ձեռագիրը կարդալու: Յեկեք մի քանի որից:

— Պարոն խմբագիր, — արտասանեց պատանին  
իր հնամաշ ու ճխլաված գլխարկը մեկ ձեռքից մյուսը  
փոխադրելով, — խնդրում եմ չմոտանալ կարդալու, վո-  
րովհետեւ, գիտեք, յես չեմ կարող յերկար...

Նա չկարողացավ իր խոսքն ավարտել, հազաց  
նույն չոր, անախորժ հագով: Յես նկատեցի վոր նրա  
այտերը կապտեցին:

Յեզ ակամա խղճացի նրան ու խոստացա նույն  
որն իսկ կարգալ ձեռագիրը:

Պոստոնմա կատարեցի ու ձեռագիրը կարդացի  
խմբագիրներին վոչ հատուկ ուշադրութեամբ ու բա-  
րեխղճութեամբ: «Նորերանտկան ետյուզը» մի վերին  
աստիճանի խակ գրվածք էր, դուրկ ձևից, վոճից և  
հետևողականութունից: Հեղինակն աշխատում էր նը-  
կարագրել հոգեկան վիճակը մի կենսախինդ յերիտա-  
սարդի, վոր դգում է, թե շուտով պիտի մեռնի: Ան-  
կեղծորեն կկամենայի գրվածքը տպել, բայց չի վոր  
ընթերցողներ սունյի, նրանք կարող ենին ինձ ծաղ-  
րել:

Հետևյալ որը նորեն պատանին յեկավ: Յես, նը-  
րան / չվշտացնելու համար, կեղծեցի:

— Ձեր ետյուզը վատ չի գրված, դուք պատմե-

յու ձիրք ունեք, բայց դժբախտաբար, տպել չեմ կարող:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա մի տեսակ խեղդված ձայնով, և ինձ թվաց, վոր նրա վտիտ մարմինը կծկվեց:

— Հերթական նյութերի շատության պատճառով:

— Բայց յես կսպասեմ, կարող եմ սպասել, յեթե, յեթե...

Նա դարձյալ չկարողացավ իր խոսքն ավարտել և դարձյալ հաղաց: Այս անգամ այլևս պարզ եր ինձ համար, վոր տղան թոքախալի վերջին շրջանի մեջ և ու նրա որերը հաշված են:

— Յավում եմ, վոր յերկար պիտի սպասեք, — ասացի, արդարև, անկեղծ ցավակցությամբ:

— Վորքանն ժամանակ:

— Անվազը չորս ամիս, դիտեք շաբաթաթերթ ե:

— Բայց այդ շատ ե, յես չեմ կարող, գիտեք, յես... յես... Բարի յեղեք հերթից դուրս տպագրելու:

Տեսարանն ինձ համար միաժամանակ և ցավալի յեր և ձանձրալի, մեկն այն տեսարաններից, վորոնցից մարդ աշխատում ե վորքան կարելի յե շուտ ազատվել:

— Չեմ կարող, — ասացի յես և ձեռագիրը դրեցի նրա առջև:

Յերբեք վոչ մի դեպքի վրա չի տեսել այնքան խորը, այնքան կսկծալի վիշտ: Կարելի յեր կարծել, վոր յես նրան զրկեցի իր գոյության վերջին հույսից կամ վոտնատակ արի նրա լավագույն սրբությունը:

— Լավ չեք անում, պարոն, խմբագիր, լավ չեք անում, — արտասանեց նա նույն հուղված ու խեղդուկ

ձայնով ու ձեռագիրը վերցրեց իր նիհար վոսկրոտ ձեռքով:

Յե՛վ ձգեց ինձ վրա մի յերկարատև կշտամբելի հայացք, առանց բարևելու դուրս գնաց:

Նախսենյակից մի անգամ ևս լսեցի նրա հաղի ձայնը...

\* \* \*

Այս գեղքը պատահեց աշնան վերջին:

Անցան ամիսներ, անցավ ձմեռը: Յերբեմն հիշում եյի պատանու նիհար ու գունատ դիմքը, մանավանդ նրա վերջին հայացքը, վորի մեջ յես դգացել եյի դառը վշտի հետ և ատելություն և նախանձ:

Գարնան սկիզբն եր: Չեմ հիշում մեր հասարակական գործիչներից վորի թաղումն եր: Շատերի հետ յես ել գնացի հողարկավորությանը մինչև Խոջավանքի գերեզմանատունը: Թաղումը վերջանալուց հետո յես ամբոխից հեռացա: Յեղանակը սքանչելի յեր, արեգակըն ախորժելի, կապույտ յերկնքի վրա ամպի վոչ մի նշույլ: Հաճելի յեր մեռելների աշխարհում մեն-մենակ թափառել ու ճաշակել կյանքի ունայնությունը:

Յես կանգ առա մի գերեզմանաքարի մոտ՝ նրա յերկար արձանագրությունը կարդալու: Այդ վայրկյանին հեռվից լսեցի մի վողբաձայն. նայեցի նույն ուղղությամբ: Հեռավոր գերեզմաններից մեկի վրա նկատեցի մի սև պատկեր: Քայլերս անգիտակցաբար ուղղեցի դեպի այն կողմը: Վորքան ավելի եյի մոտենում, այնքան ձայնը ավելի յեր քաշում ինձ: Դա մի կին եր: Չորած մի տակավին թարմ գերեզմանի հողա-

կույտի քով, ձեռը կրծքին զարնելով, վողբում եր  
կրկնելով.

— Շիր ու շնորքիդ մատաղ, վոսկե գրչիդ մա-  
տաղ:

Յես դպացված կանգ առա կնոջ յետևում, չկամե-  
նալով, վոր նա ինձ տեսնի: Բայց շուտով հետաքրքր-  
վեցի գիտննալ՝ ով ե թաղված այդ թարմ գերեզմանի  
մեջ: Յես անցա մյուս կողմ:

Մի վայրկյան կինը, աչքերը սրբելով, նայեց ինձ:  
Թվաց ինձ, վոր այդ դեմքը յես տեսել եմ վորևէ տեղ:

— Քույրիկ, ով ե թաղված այդ գերեզմանի մեջ,  
— հարցրի յես:

— Իմ վորդին, միակ դավակը, պարոն, — արտա-  
սանեց կինը, նորեն հեկեկալով:

— Քանի տարեկան եր նա:

— Քսան տարեկան, պարոն, ուղիղ քսան: Ա՛հ,  
չգիտեք ինչ տղա յեր: Նայեցեք...

Այս ասելով, կինը ծոցից դուրս բերեց մի լու-  
սանկար ու ավելացրեց.

— Բարակացավից մեռավ, ահ, անողորմ ասա-  
ված:

Յես վերցրի լուսանկարը, նայեցի: Դա նա յեր,  
այն թշվառ պատանին, վորի ձեռագիրը մերժել էյի  
տպագրելու: Խղճի մի սուր խայթ տակն ու վրա ա-  
րեց իմ էյուլթյունը. լուսանկարը նայում եր ինձ այն  
դառը կշտամբելի հայացքով, վոր վերջին անգամ  
ձգեց ինձ վրա թշվառ պատանին:

— Քույրիկ, ի՞նչ եր ձեր վորդու անունը, — հարց-  
րի հավաստիանալու համար, թե ճիշտ դա այն տղան է:

— Միսակ, Միսակ Քուլոյան, գրում եր լրագրը-

ներում, ան, նմանը չկար, ան, վոսկի գրչիդ մատաղ  
բալա...

— Քույրիկ, յես ճանաչում եյի ձեր վորդուն:

Ո՞վ չեր ճանաչում նրան, ո՞վ չեր կարգում նրա  
մարդարիտ խոսքերը:

Վերադարձնելով նկարը, յես գերհամանից հետա-  
ցա խորապես զգացված:

Յե՛ղճ պառանի. նրա կյանքի վերջին փառազն-  
եր յեղել տպագրված տեսնել «առաջին լուրջ յերկը» և  
հետո մեռնել: Իսկ յես այնքան դաժան յեղա, վոր զըր-  
կեցի նրան այդ սիրտանքից...

1922 թ. Ապրիլ

Պարիզ.

## ԿՈՍՄՈՊՈԼԻՏԸ

Ինձ վիճակված եր յերկու որ ու գիշեր Թիֆլիսից մինչև Ռոստով ճամբորդել նրա հետ և սքանչանալ նրանով:

Վազոն մտալ աննկարագրելի աղմուկով, ինչպես մեկն այն յերջանիկներից, վորոնք ամենուրեք իրենց համարում են տիյիզերքի առանցքը:

Նա վոչ ավել քան քառասուն տարեկան սղամարդ եր, տակավին շատ կայտառ, շատ դյուրաշարժ: Այնքան դեր չեր, վորքան սովոր և գիրանալ հայը, յերբ նրա ստամոքսը կուշտ և և գիտե կերածը մարսել: Հասակը միջակ եր, կազմվածքը բավարար, թեև կուրծքը չափից ավելի լայն եր, իրանը յերկար, գլուխը մեծ, ծոծրակը տափակ և պարանոցը կարճ: Բայց յես վստահ եմ, վոր Մոսկվայի շիկտներ և հաղթանդամ դեղեցկուհիները նրան կհամարեյին յեթե վոչ «զմայելի», գոնն գրավիչ՝ իր ածուխի պես սև մազերի, թավ հունքերի, թուխ յերեսի, մանավանդ սև ու խոշոր աչքերի շնորհով: Նրա հստակ սափրած յերեսը, վոր ծնոտի կողմում կապտագույն եր, կարճ խուզված և հարթ սանրած մազերը, նորաձև կտրած ընչացքը մանավանդ անգլիական կտորից և անգլիական ձևով կարված մոխրագույն հագուստը նրան տալիս եյին ժամանակակից շինարմենի տեսք:

Մի բան ևս, նրա ձայնը խուպոտ եր, ջախջախված: Մի ձայն, վոր հատուկ և վատանուն ախտ ունեցողներին կամ վողելից բժակելիքները ի չար գործ դնողներին:

Վարձատրելով իր գոռոցներից ու հրամաններից շփոթված բեռնակրին մի քանի կոպեկներ ավելի, շիկ համարեց ավելացնել յերկու-յերեք ոռւսական հիշոցներ, վորոնք սակայն, շատ ել թոււնդերից չեյին: Մարդը սովոր եր, յերևի, անպատճառ վիրավորել սոցիալական սանդխտի վրա իրանից վար կանդնողներին սոսկ այն պատճառով, վոր վարձատրում եր նրանց քրտինքը:

Տեղավորելով իրերը, նա բատխսոյա թաշկինակով սրբեց նեղ ու մսալի ճակատը և նստեց դիմացի նստարանի վրա: Ապա գրպանից դուրս բերեց մի մեծ արծաթյա տուփ ծածկված բաղմաթիվ վոսկյա և ադամանդյա մենագրերով, վերցրեց մի ծխախոտ, դարկեց տուփին մի քանի անգամ մուշնաշտուկի կողմով վորպեսզի վողին դուրս թափի և վառեց մխանիքական նույնպէս արծաթյա հրատուփից:

— Կեռու յեք բարեհաճում գնալ, — հարցրեց նա ինձ ոռւսներն, ծխախոտի առաջին ծուխն արձակելով իր դիւից վեր, վորպեսզի յերկրորդն յերեսովս տա:

— Մոսկվա:

— Նախանձում եմ:

— Ի՞նչու:

— Յնա շատ եմ սիրում Մոսկվան, ավելի քան Պետրոպոլսը: Բարի և հյուրասեր քաղաք ե: Այնտեղ կարելի և ապրել քիչ թե շատ մարդավարի: Յեթե գործերս չխանդարեյին, կգայի ձեզ հետ, բայց ասացեք

խնդրեմ,—շտապեց ավելացնել նա,—այս կուպեյում  
բացի մեր յերկուսից ելի ճամբորդներ կան:

Յես ասացի, թե կան յերկու ոռու սպաներ:  
Նրանք դրսումն են և, յերևի, շուտով ներս կգան:

— Ա՛հ,—գոչեց ուղեկիցս ձեռն արհամարանքով  
թոթափելով ողի մեջ,—յես գինավորականներին ասե-  
լով ատում եմ: Նրանք սիրում են սկանդալներ ա-  
նել: Յեթե դիտենայի, ուրիշ կուպե կվերցնեյի: Բայց  
փույթ չե, հետևյալ կայարանում կանցնեմ առաջին կլաս,  
մանավանդ վոր սովոր չեմ յերկրորդով ճամբորդվելու:

Յեով, մի քանի անգամ ևս ծխի քուլաները բաց  
թողնելով գլխից վեր, ավելացրեց.

— Բայց յես սկանդալիստներից յերկյուղ չունիմ:  
Յես գիտեմ նրանց զսպել և հարկը պահանջելիս մի  
լավ ել խրատել: Յես յերկու անգամ ոֆիցիեր եմ աս-  
տակել և մի անգամ ել մի գեներալի ապուռ ևմ ան-  
վանել: Դուք իմ մասին չեք լսել: Ջարմանալի ե, թույլ  
ավեք ներկայանալ՝ Արկադիյ Մարկովիչ Ալթունով...

— Դուք համբք:

— Ի՞նչ եք կարծում, յես նման եմ հայի:

— Այո, ձեր տիպը հայկական ե:

— Միավրում եք, պարոն, սխալվում եք,—գոչեց  
ուղեկիցս մի տեսակ վիրավորված,—ինձ վոչ վոք հայ  
չի համարում: Ամենը ասում են, վոր յես իսպանացու  
եմ նման, կամ իտալացու:

Ներս մտան մեր ուղեկիցները մի-մի հրացան  
ձեռներին: Ըստ յերևույթին, նրանք վորսի եյին գնում:  
Արտաքուստ յերկու հակատիպարներ եյին: Մեկը յեր-  
կայանահասակ եր, նիհար, շիկահեր, փոքրիկ քթով:  
վորի վերին մասը տափակ եր, իսկ ծայրը ներկա-

յացնում եր շաղանակի պես մի բան: Նրա յերեսը սերկելիլի գուշն ուներ: Մյուսը միջնահասակ եր, սե աջքունքով, դեր, առողջ, կարմիր այտերով և հաստ հյուսթալի շրթունքներով:

Յես կարծեցի, Արկադիյ Մարկովիչ Ալթունովը խակուշն վորակ կերող կարտահայտի իր արհամարանքը դեպի զինվորականները, կամ գոնն կլուռ: Պատանեց հակառակը:

— Ախ, — գոչեց նա, վոտքի յինկլով, — ներեցեք գուցե յես ձեր տեղն եմ բռնել: Բարի յեղեք ընտրել ձեր ցանկացած կողմը:

Մեահեր սպան բարեհամբույր ժպտաց և ասաց.

— Մի անհանգստանաք, մենք շատ ել հեռու չենք գնում, ընդամենը յերեք կայարան:

Յերկայնահասակ և նիհար սպան, իր հրացանը տեղավորելով իրեն առջի, թշնամական մի հայացք ձգեց նախ ինձ, ապա Արկադիյ Մարկովիչ Ալթունովի վրա: Նրա աչքերը կլոր եյին, փոքրիկ, տպակենման: Նա նստեց իմ մոտ և, վռտներն առաջ ձգելով, վեր քաշեց կոշիկների յերկայն վղերը:

Յես ամբողջ որը դես ու դեն վազելով, հոգնել եյի, ուստի ներողություն խնդրելով, բարձրացրի նրատարանի կոնակը, վեր յելա և պառկեցի:

Որը դեռ գերեկ եր: Դնացքն ընթանում եր վերին աստիճանի դանդաղ, ահագին դղրդոցով և հարվածներով, ամենայն բարեխղճությամբ պահպանելով ուռուտական յերկաթուղիների սրբազան ավանդությունը — յերբեք չըտապել և յերբեք հանդիստ չթողնել ձամ բորդների վոսկորները:

Չանցավ քառորդ ժամ, իմ ուղեկիցներն արդեն բավական ընտելացել եյին իրարու:

Առաջին խոսողը դարձյալ Արկադիյ Մարկովիչ Ալթունովն յեղավ: Նա դանդաատվեց.

— Կո՞ւրդո՞ւք, աշխարհի յերեսին ավելի ձանձրալի ճամբորդություն, քան մերը: Գնացքն ընթանում է, ինչպես Բորչալույի ճրճուան սայլ, իսկ փառաքանված կովկասյան բնությունը ձեր աչքի առջևն է: Նայեցեք դաշտերն ու ձորերը շորացած; լեռները մոխրագույն, մռայլ: Անկյուն չկա, ուր հանգստանա գեղասեր ճամբորդի հայացքը: Բայց վոր ամենազլխավորն է, գնացքները բուֆետ չունեն, իսկ կայարանների բուֆետներում մի բան ուտել կամ խմել չի կարելի, այնքան կեղտոտ են: Սակայն վոչինչ, չկա անախորժ գրություն, վոր իր յելքը չունենա:

Այս ասելով, նա բարձրացավ, վերցրեց վերին ցանցի վրայից մի դեղեցիկ դամբուղ, բաց արավ և նրա միջից զուրս բերեց մի քանի շեր և գանաղան ուտելիքներ:

Յես վոչ ախորժակ ունեյի և վոչ ցանկություն ջնադմենի սեղանին մասնակցելու, ուստի ինձ քնած ձևացրի: Նիհար ու յերկայնահասակ սպան վորի առևանը Իվան Միրոնովիչ Պաստուխով եր, ինչ վոր մըրմըթաց իր քթի տակ: Իսկ նրա ընկերոջ՝ Իլարյոն Սիրաֆիմովիչ Տարաշենկոյի լայն ու կարմիր յերեսն ավելի լայնացավ և փայլեց ներքին հաճույքից:

— Ինչո՞ւ չե, կարելի է,— ընդունեց նա Ալթունովի հրավերը, իր տեղը շտկելով և ընչացքը շփելով կարճ ու հասալիկ մասներով:

— Կոնյակը Մարտենի յի, բարձրագույն մարկայի,— շարունակեց Ալթունովը, ուտելեղենները տեղափոխելով լուսամուտի առջևի ծալովի սեղանիկի վրա:

Աստուծո՛ւ են սովորութիւնը յերկրորդ ընտելթ ե, ինձ համար նա առաջինն ե: Խմել—արդեն ընտիրը խմել-յիթե վոչ—չարժե: Այնպես չե՛, գնդապետ,—դարձա՛յ նա Տարաշչենկոյին:

— Իհարկե հաստատեց լայներես սպան, հաղալով ու ձեռները շփելով իրարու, վորպես հաճելի ու սրբազան պարտականութիւն կատարելու պատրաստ-վող մեկը:

— Իսկ գինին,— շարունակեց Ալթունովը, ավելի ու ավելի վողկորվելով,— Ուղեւնիյ Վեդոմստովոյի լավագույներից ե: Ճշմարիտ ե, շատ ել հներից չե, ընդամենը տասնըհինգ տարվա, բայց հույսով եմ կհավանեք: Այս գինին ամեն մարդու չեն տալիս: Պետք ե ասած առանց պարծենալու, վոր Ուղեւնիյ Վեդոմստովոյի կառավարիչն իմ մտերիմ բարեկամներից մեկն ե. յերբեմն նա ինձ համար ուղարկում ե հատկապես մեծ իշխանների համար պատրաստված գինիներից մի քանի դոլ-ժին: Յես ել, իհարկե, պարտքի տակ չեմ մնում: Ահա խավյար, Ռոքֆոր պանիր, անչոու, կիլկի, դանազան ապխտած ձկներ: Գնդապետ, առաջին խոսքը ձեզ ե արվում,—դարձա՛յ նա Տարաշչենկոյին:

— Իուք ինձ շարունակ գնդապետ եք անվանում, բայց յես միայն կապիտան եմ,— ուղղեց նրա սխալը Տարաշչենկոն:

Յե՛վ, ընդունելով կոնյակի առաջին բաժակը, խ-կուչն ե յիթ դատարկեց:

— Համեցեք, կապիտան,— դարձա՛յ Ալթունովը Պաստուխովին, առաջարկելով նրան յերկրորդ բա-ժակը:

— Ներողութիւն, յես միայն պարուչիկ եմ,—

մըմուսաց յերկայնահասակը, կարծես, բարկանալով, վոր կապիտանն չե:

— Ձեր կենացը, — առաջարկեց Տաբաշչենկոն և շտապեց դատարկել սքանչելի հեղուկի յերկրորդ բաժակը:

— Վնչ, պարոններ, վոչ, — ընդհատեց Ալթունովը, — յես համաձայն չեմ: Մենք մի մեծ պարաք ունինք, վոր չպիտի մոռանանք ուր վոր լինենք: Դա հայրենիքի սերն է, շանուն այդ սիրո յես առաջարկում եմ խմել նախ և առաջ անհաղթելի ոռու զորքերի կենացը:

— Կարելի է, — արտասանեց պարուչիկ Պաստուխովը, այնպիսի ներողամիտ յեղանակով, վոր կարծես, համայն Ռուսիայի տերն ու հրամանատարն էր:

Յեվ, յերկայն պարանոցն ավելի յերկարացնելով, բաժակը բարձրացրեց ողի մեջ, նայեց նրան թափանցիկ և մի կոււմով դատարկեց:

Ըմպելիքներից հետո Ալթունովը գովեց ուտելիքները, Ռոքֆորը Ֆրանսիայից հատկապես նրա համար և բերել տրված, խավիարն ու ալխատած ձկները մասնավորապես նրա համար են պատրաստված Սալյանում:

Գոնյակի բաժակները հաջորդեցին իրարու: Շուտով սպաների գլուխները բավական տաքացան դեռ գինու շերը բաց չարած:

— Գիտեք, յես դարմանում եմ, վոր մարդիկ կարողանում են վազոնում քնել, — ակնարկեց Ալթունովը իմ վերաբերմամբ:

Վոր խեղդեք ել նա չի կարող քնել: Առհասարակ քունը նրա կարծիքով կես մահ է, ուստի բարվոք և համարում գիշերները լուսացնել կլուքներում կամ

հյուսրանոցներում: Կյանքը կարճատև է, պետք է սիր-  
տովը նրա ամեն մի վայրկյանից: Այնպես չե՛, գնդա-  
պետ, ներողորթյուն, կապիտան:

— Բուրբոսին ճիշտ եք հրամայում,— շտապեց  
համաձայնել Տարաչինկոն, մի շատ նշանակելի հա-  
յացք ձգելով գինու փակ շշերի վրա:

Ալթուևովը հասկացավ նրա միտքը և շտապեց  
շշերը բանալ: Գինու առաջին բաժակը ևս նա պարտք  
համարեց նվիրել ուսուսց հաղթական զորքերին:

— Դուք սպա՞ յեք յեղի,— հարցրեց Պաստուխովը,  
խմելուց հետո սքսելով յերկայն ու բարակ ընչացքը,  
վոր դարու հասկերի յեր նման:

— Բախտ չեմ ունեցել այդ պատիվը վայելելու,—  
պատասխանեց Ալթուևովը,— խորը հառաչելով:

Բայց մեղավորն ինքը չէ, այլ հայրը: Հանգուց-  
յալը, միայն մի վարդի ունենալով, չկամեցավ նրան  
ուղտրելել պատերազմի դաշտը՝ հայրենիքի պատիվը  
պաշտպանելու: Նա բարձրք համարեց, վոր իր վորդին  
եւ մեա իր հոր պես սոսկ կալվածատեր ու կառավարե  
սոսմային կալվածքները:

— Ուրեմն դուք կալվածատեր եք,— հարցրեց  
Պաստուխովը, վոր ըստ յերևույթին, շատ անհանգիստ  
էր իր ուղեկցի սոցիալական դիրքի վերաբերմամբ:

— Այո, ունիմ մի հինգ-տասը կտոր հողեր գա-  
նազան տեղերում:

— Հույսով եմ, և ազնվական եք:

— Մարդու ծագումը ճանաչվում է նրա վար-  
մունքից ու ձևերից,— պատասխանեց Ալթուևովը հա-  
մեսառեն:

— Ձեր վարմունքն ու ձևերը միտնգամայն ազ-

նովականի յեն, — նկատեց Տարաշենկոն, վոր վազուց  
եր հափշտակվել Ալթունովի հյուրասիրությամբ:

Բայց, ներեցեք, Արկադիյ Մարկովիչ Ալթունովը  
համեստ մարդ է: Նա յերբեք չէր խոսիլ իր ազնվա-  
կան ծագման մասին, յեթե չստիպեյիք խոսել: Գի-  
տեք, պարծենալու համար չի ստում, այլ այնպես.  
Նրա մայրը իշխանական տոհմից է, իսկ հայրը հին  
հայկական թագավորական տոհմից: Այս մասին նա  
ունի անվիճելի փաստաթղթեր, բայց ուշադրություն  
չի դարձնում նրանց վրա, վորովհետև...

— Վորովհետև հայկական թագավորական ծա-  
գումը վոչինչ արժեք չունի Ռուսիայում, — լրացրեց  
Պատմութիւն մի տեսակ չարախնդությամբ:

— Մի ասեք, պոռուչիկ, մի ասեք, արժեք ունի,  
— շիտկեց ընկերոջ սնքազաքավարությունը բարեսիրտ  
Տարաշենկոն, վորին առանց այն ել կակուղ սիրաբը  
քոլորովին փափկել էր վոգելից ըմպելիքներից: — Ինձ  
հայանի յե, որինակի համար, վոր հայերը հին ազ-  
նվական ազգ են և քրիստոնեություն ընդունել են մե-  
զանից ընդամենը հարյուր տարի հետո: Յեթե չեմ  
սխալվում, Ալեքսանդր Մակեդոնացու մայրն էլ հայ  
է յեղել:

— Բոլորովին ճիշտ է, — հաստատեց Ալթունովը  
կապիտանի պատմական հմտությունը, — բայց յես չեմ  
պարծենում վոչ Ալեքսանդր Մակեդոնացու մորով և  
վոչ ուրիշներով: Յեթե յես պարծենկոտ լինեյի, ավելի  
մոտիկ անցյալով կպարծենայի: Որինակի համար, կա-  
սեյի, վոր իմ հոր հայրը վրաց վերջին թագավորի քը-  
ղով վարդին է և մի տարի վորսի ժամանակ տասնու-  
մեկ վազր է սպանել: Գիտեք, առաջ Կովկասի տնտառ-

ներում վազրեր շատ կային: Ռուս զորքերն յեկան թե-  
չե, այդ սոսկալի գազանները փախան Հնդկաստանի  
խորքերը: Յեթե հետաքրքրվում եք, բարեհաճեցե՞ք  
գալ իմ դրոշակը, յես ձեզ ցույց կտամ սպանված առ-  
յուծների մորթիքը:

Ալթունովը ճիշտ այդպես ել ասաց՝ զդրոշակս:

— Թողնենք պատմությունը, մեր ժամանակնե-  
րից խոսենք,—զոչեց Պատուխովը մի փոքր գրգռված,  
զուցե այն պատճառով, վոր իր պատը թագավորների  
հետ վորսի չի գնացել,—յես կըկամենայի դիտնալ՝ այ-  
ժըմ դուք ձեզ ի՞նչ եք զգում, հայ, թե՞ ուուս:

— Յես ինձ զգում եմ ծագումով հայ Գրիգորյան  
լուսավորչական, պատասխանեց Ալթունովն անմիջա-  
պես,—իսկ ազգով ուուս:

— Այդ ի՞նչպես, յես չհասկացա:

— Ուզում եմ ասել, վոր յես հայ-լուսավորչա-  
կան ուուս եմ ուղղափառ...

— Շատ լավ, դուք հեղափոխական եք, թե՞ նա-  
ցիոնալիստ:

— Ի՞նչ, հեղափոխական, — զոչեց Ալթունովը մի-  
անգամայն վշտացած,—պոռուչիկ ի՞նչ եմ արել ձեզ,  
վոր ինձ վիրավորում եք:

— Ուրեմն նացիոնալիստ եք:

— Վոչ, պարոն պոռուչիկ, յես միտպետական եմ,  
—զոչեց Ալթունովը, ձեռը ջերմեռանդորին կրծքին  
դարկելով:—Յես պատրաստ եմ առաջին պահանջված  
դեպքում կյանքս դնել գահի և կայսեր համար:

— Այդպես ել հարկավոր ե, —խրախուսեց նրան  
Պատուխովը և մի մեծ կտոր խավիար դրեց բերանը:  
Իմ կարծիքով, բոլոր ազգերը հավասար են,—ա-  
սաց Տարաչենկոն:

— Վոչ, կապիտան, այդպես չե, ժխտեց Պաստու-  
խովը,— նորեն գրգռվելով,— ով Ռուսիայի սահմաննե-  
րում ե ասրում, պարտավոր ե իրան ոռւս համարել  
ռուս գդալ ու մտածել ինչպես իսկական ոռւս: Յեթե  
այդպես չլինի, հայրենիքը կարող ե կործանվել:

— Այդ բոլորովին ճիշտ ե,— դռչեց Ալթունովը,—  
բայց չկարծեք, պարոններ, վոր յես բախտ չունենա-  
լով գործին ծառայելու, յերկչոտ եմ կամ անընդունակ  
ղենք գործածելու:

Ոհ, վոչ, նա ճանաչված ե վորպես առաջնակարգ  
վորսորդ: Նա կարող ե հարյուր քայլի վրա ասրճա-  
նակից կրակել խնձորի ծառի վրա վոր խնձորը կա-  
մենաք, կամ ծաի կտուցն ու պոչը:

— Յեթե կտուցն ու պոչը թոցնես, տակը թնչ  
կմնա,— նկատեց Պաստուխովը, կես հեգնորեն կես նե-  
րողամտաբար ժպտալով:

— Իհարկե, բայց, այնուամենայնիվ, վոր տեղին  
ուղենամ այն տեղին ել կզարկեմ:

Գալով մարդկանց, դեռ յերեք ամիս չկա, վոր  
Ալթունովը մի ինչ վոր գերմանացի բարոնի մենա-  
մարտության կանչեց Բաթումում: «Գարշելին» յերկ-  
չոտությամբ մերժեց:

— Հետո դուք թնչ արիք այդ անպիտանին,—  
հետաքրքրվեց Պաստուխովը, նայելով իր յերկայն ըն-  
չացքի ծայրերին և սրելով նրանց:

— Այն, ինչ վոր դուք կանեյիք. որը ցերեկով  
փողոցում մի լավ ծեծեցի մտրակով:

— Այդպես ել հարկավոր եր,— տվեց Պաստուխ-  
ովըն իր հեղինակավոր հավանությունը:

— Թույլ տվեք հարցնել. թնչ պատճառով եյիք

այդ վախկոտին մենամարտության կանչել, — հարցերը  
Տարաշչենկոն խավիարի պատառը բերնում:

— Մի դերասանուհու պատճառով:

— Բրավո, ձեր կենացը:

— Կապիտան, յես բրավո չեմ ասել, — ասաց Պաս-  
տուխովը, ունքերը կիտելով, — դերասանուհիները չար-  
ժեն մեր արյան կաթիլներին անգամ: Նրանք չափա-  
զանց շատ են սիրում ծաղիկներ և կոնֆետներ:

— Բայց յես ուրիշ բաների համար ել եմ ուղե-  
ցել մենամարտել, — շարունակեց Ալթունովը, ազիլի  
վողեորվորվելով, — որինակ, սրանից յերկու տարի տ-  
ռաջ պատկոցս ժառանգած ատրճանակի մի գնդակ խը-  
րեցի մեկի կուրծքը:

— Ինչո՞ւ:

— Անասունը հանդգնել եր իմ մոտ յապոնացի-  
ների քաջությունը փառաբանել և մերոնց ծաղրել:

— Ռեխը պիտի շարդեյիք, — մուշաց Պաստու-  
խովը, մի ուժգին շարժումն անելով:

— Կամաց, պոռուչիկ, մի տաքանար զուր տեղը,  
— ասաց Տարաշչենկոն, վորի գինու բաժակը Պաստու-  
խովի շարժումից ընկավ ձեռքից:

— Յե՛վ շարդեցի, — շարունակեց Ալթունովը, — ու-  
րիշ կերպ չեյի կարող տնել, ինչ ուղում են թող ա-  
սեն, բայց յերբ իմ հայրենասիրական զգացումը վի-  
րավորում են, խելքս կորցնում եմ: Դուք չգիտեք յես  
ինչեք եմ կրել ռուս-յապոնական պատերազմի որե՞րին:

Ո՞ր, քանի-քանիսի հետ ե վիճել ու կռվել, քանի-  
քանի անգամ ե մենության մեջ մասները կատաղու-  
թյունից կրժոտել: Շուսիմայի և Մուկգենի պարտու-  
թյունները մի-մի անբուժելի վերք են բաց արել նրա

պատրիոտ սրտի վրա: Ո՞՛հ, նա չի հանգստանալ մինչև վո՛ր հայրենիքի ազգական վարկը չվերականգնվի, մինչև վո՛ր մի սոսկալի վրեժ չառնվի այդ արհամարելի մահակներին, այդ ճիպոտ կապիկներին:

— Այդ մասին չխոսենք, — խստորեն ընդհատեց Պաստուխովը, կուրծքն ուռցնելով և նայելով իր հրացանին:

— Այո, չխոսենք, այլ գործենք, գործենք, — համաձայնվեց Ալթունովը:

Շուտով գինու շշերը մեկը մյուսի յետևից դատարկվեցին և լուսամուտից դուրս թռան:

Խոսակցության նյութը փոխվեց: Ալթունովը պատերազմից անցավ գեպի խաղաղ կյանքը Ռուսիայի: Պարզվեց, վորնա մայրաքաղաքի լրագրներով եհետևում են քրեքին և արտաքին քաղաքականությաններին: Նա թունդ խոսքերով հեղափոխականներին հայհոյեց, պետական գուման ծաղրեց, հարձակվեց ուսանողության վրա, վո՛ր ուսում ստանալու փոխարեն պոլիտիկով են զբաղվում, ապտակեց ազատամիտ պրոֆեսորներին: Հետո սկսեց հայհոյել նախ հրեաներին, ապա լեհացիներին, այնուհետև ֆրանսիացիներին:

Յե՛վ հանկարծ գոչեց.

— Պարոններ, յես ուզում եմ ձեզ հետ բռուտերշաֆթ» խմել, ի՞նչ կասեք:

— Պատրաստ եմ, — գոչեց Տարաշչենկոն:

— Կարելի յե, — սառն արտասանեց Պաստուխովը:

Այս յերջանիկ բարկամական համբռնյրը դրոշմվեց այն վայրկյանին, յերբ գնացքը կանգ առավ սոսկալի դրբդյունով, Վագոնների ընդհարումից համբուրվողները դիպան իրար, ապա բաժանվեցին, մեկ ել գի-

պան, նորեն բաժանվեցին և ընկան՝ Ալթունովը մեկ, Պաստուխովը մյուս նստարանի վրա:

Տարաշենկոն ծիծաղից թուլացաւ: Ձեռները դնելով կլորիկ փորի վրա, նա շնչասպառ մի քանի անգամ կրկնեց:

— Ահ, մեռա, ահ, մեռա, տեր աստված:

Պաստուխովը մի քանի վայրկյան ապշած նայեց գիմացիների կրծքին, ապա հանկարծ կատաղեց և մի քանի շատ կարուկ հիշոցներ մեքենավարի հասցեյին:

— Ինձ թվում ե, պարոն պոռուչիկ, վոք այդ լավ նշան եր,—ասաց Ալթունովը, թաղկինակով սրբելով շապիկի կուրծքը, վոք թրջել եր գլխով,—ասել ե, մենք կբաժանվենք իրարուց և նորին կհանդիպենք: Այսպես, թե այնպես, թույլ տվեք, պարոններ, հայանել իմ անկեղծ գոհունակութունը ձեզ հետ ծանոթանալու համար: Չգայիք դուք, ով դիտե ձեր տեղերը պիտի բռնեյին ինչ-վոք հոտած հայեր կամ թուրքեր, վոքոնց ի միջի այլոց ասած, յես արհամարհում եմ: Ի՞նչպես, դուք արդեն պատրաստվում եք իջնելու:

— Այո, արդեն հասել ենք մեր կայաքանը,—ասաց Տարաշենկոն, հրացանը վերցնելով:

— Գնանք բարով, խնդրեմ վատ երիշատակ չտանեք իմ մասին:

— Ո՛հ, վոչ, ընդհակառակը, շատ շնորհակալ եմք,—ասաց Տարաշենկոն:

— Միայն մի բան տեսմ,—ավելացրեց Պաստուխովը,—Ուղեխոյի Վեդումսովոյի կառավարիչը ձեզ խաբել ե, գինին տասներհինգ տարվա չեք, նույնիակ հինգ տարվա չեք...

Սպաները դուրս յեկան վագոնից, Պաստուխովը  
խորխա քայլերով, Տարաշչենկոն յերերվելով:

Մինչ Ալթունովը զբաղված էր ուտելիքներէ և  
ըմպելիքներէ փացորդը զամբոյուղի մեջ ժողովելով,  
յես զուլսս դուրս բերեցի լուսամուտով, վոր կարգամ  
կայարանի անունը: Սպաներն անցան լուսամուտի  
տակով, հաղորդելով միմյանց իրենց տպավորություն-  
ները Ալթունովից:

— Բարի մարդ ե, — լսեցի Տարաշչենկայի ձայնը:

— Խորամանկ արմյաշկա յե, իր թթված գինիով  
ուզեց մեզ կաշտակ, — ասաց Պաստուխովը, հրացանը  
ուսին ձգելով:

Յես քնից նոր արթնացած ձեանալով իջա ցած:

Ալթունովը յերջանիկ տրամադրության մեջ եր:  
Մեջքի վրա պառկած, վտաները դիմացի պատիկին հե-  
նած, ծխում եր ու ինչ-վոր քթի տակ մթմթթում, իբր  
թե յերգում ե: Նրա մուգ դեմքը կարմիր ու կապտել  
եր, խոշոր աչքերը լցվել էին արյունով, պարանոցի  
յերակները փքվել էին:

— Ա՛հ, դոչեց նա, — դուք զարթնեցի՞ք: Վերջապես,  
ազատվեցի այդ սոխերից: Կերան, խմեցին, կորան: Ազ-  
սոս արթուն չեյիք. պետք ե տեսնեյինք, թե ինչ կա-  
տարվեց այստեղ: Յես այդ խրտվիլակների գլխին մի  
լավ խաղ խաղացի, յերբեք չեն մոռանալ:

Յեմ նա պատմեց իր խաղը: Բանից դուրս յեկավ,  
վոր իմ տեսածներն ու լսածներն յերազ էյին: Հյու-  
րասիրելով սպաներին, նա արավական քանակությամբ  
թույն ե ամել ուտելիքների և ըմպելիքների մեջ: Նա  
վոչ միայն չի թագցրել իր ատելությունը դեպի գին-  
վորականությունն առհասարակ, այլ և սաստիկ նա-

խատել ե նրանց, վոր այգքան վայելուչ պաշտոններն ու արհեստներն մեջ ճարձան դաշտն են իրանց կյանքի համար ասպարեզ ընտրել: Նա պարսովել ե ուստի արտաքին ու ներքին քաղաքականությունները, այժմյան ռեակցիան, փոքր ազգերի հալածանքը և այլն, և այլն: Նա պաշտպանել ե ժողովրդի իրավունքները, պետական գումայի անձեռնմխելիութունը, մամուլի կատարյալ ազատությունը և հազար ու մի այգպիսի աղատամիտ բաներ:

— Գրեմք, — ավարտեց Ալթունովն իր խոսքը: Վոտքի կանգնելով, — յերևակայել չեք կարող թե նրանք ինչպես ամաչեցին: Նրանք վոչինչ չկարողացան ասել: Նրանք մինչև անգամ համաձայնվեցին ինձ հետ և ցամ հայանեցին, վոր, լինելով պետական ծառայության մեջ չեն կարող համարձակ խոսել:

Յու, իհարկե, ձեացրի թե հավատում եմ Ալթունովի ասածներին: Ձե՛ վոր յես քնած եմ յեղել, վոչինչ չեմ լսել ու տեսել:

Հաջորդ կայարանում մեր կուպեն մտան յերկու ինչ-վոր թուրքեր մի-մի դաշույն մեջքներին կապած:

Մեկը նրանցից շիկահեր յերիտասարդ եր սափրած յերեսով: Հագած եր սև աթլասյա արխալուզ, վրեն կարճ պիժակ, վոտներին յերկայնավիզ կոշիկներ: Գլխին դրած եր Բուխարայի մորթուց կարած փոքրիկ դդակ:

Մյուսը ծեր եր, դեմքը խոշոր կնճիռներով ծածկված թեև ընչացքը ներկած եր և ծայրերը խնամքով սանրած: Նա հագած եր յերկայն չուխալայն փեշերով, ուսերի վրա չուխայից կարճ մոխրադույն վերարկու պղնձյա վոսկեփայլ կոճակներով:

Յես նորեն բարձրացա իմ տեղը վորպեսզի չխանգարեմ նորեկներին միմյանց քով տեղավորվելու վարի նստարանի վրա:

Ալթունովը կարողացավ հարմար վայրկյան վորսալ տկանջիս շնջալու.

— Ահա մի գոլոյդ ևս ցանկալի հյուրեր—ինչ ասեց կուզի: Չե, յես ել պիտի պառկեմ քնելու, յեթե միտայն կարելի յե քնել դրանց դարչահոտության մեջ:

Ներս մտավ կոնդուկտորը կուպեյի մոմը վառելու:

— Ի՞նչու այդպես ուշ,— դիտողություն արավ Ալթունովը, թեև ուշ չեր,— կարծեմ կարող եք ձեր պարտականությունը ժամանակին կատարել:

Կոնդուկտորը, վոր կանգնած եր նստարանի վրա, վառ լուցքին ձեռին, նայեց վերից վար մի տեսակ արհամարանքով և ասաց.

— Յես չգիտեյի, վոր դուք այստեղ եք:

Նրա հեզնական տոնը Ալթունովի ինքնասիրությունը վիրավորեց: Ուղեկիցս ձեռները դնելով պանթալոնի գրպանները և գլուխը հպարտ բարձրացնելով գոչեց.

— Կոնդուկտոր, բարեհաճեցեք մարդկանց ճանաչել և համապատասխան տոնով խոսել նրանց հետ:

— Ճանաչում եմ,— պատասխանեց կոնդուկտորը, առանց յերեսը Ալթունովին դարձնելու,— առաջին անգամը չե, վոր ձեզ նման ճամբորդ եմ տեսնում:

— Կոնդուկտոր, քաղաքավարի յեղեք:

— Համենայն դեպս ձեզնից չպիտի սովորեմ քաղաքավարություն:

Ալթունովը բորբոքվեց:

— Լսում ե՞ք, լսում ե՞ք,— դարձավ նա թուրքերին, — ահա այդպես են այդ գուհիկները, միշտ կռապիտ: Յես հենց առաջին կայարանից կհեռագրեմ յերկաթուղու գլխավոր կարավարչին, վոր իմ ամենամտերիմ բարեկամն է ու գիտի յես ով եմ:

— Կարող եք հեռագրել, վորքան կամենաք, — արտասանեց կոնդուկտորը, նստարանից իջնելով, — այդ տեսակ սպառնալիքներ մենք ամեն օր լսում ենք:

Յեվ, մի հեղնական ժպիտ պարզեցնելով ուղեկցիս գուրս գնաց:

— Վայրենի, — գոչեց Ալթունովը, մի վտար հատակին դարկելով և բռունցքն ողի մեջ բարձրացնելով: — Սպասիր, անասուն, յիրք քեզ պաշտոնից կզրկեն, այն ժամանակ կիմանաս, թե ով է Արկադիյ Մարկովիչ Ալթունովը: Յես դեռ յերեկ Կովկասյան կառավարչապետի ոգնականի հետ «Որիանա» հյուրանոցում ճաշելիս խոսում եյի յերկրի անկարգությունների մասին: Հարկավոր է միայն չմոռանալ գնացքի համարը և այդ անպիտան կոնդուկտորի անունը հարցնել մեկից: Յես խկուշուն հեռագիր կըկաղմեմ:

— Յեվ, ծոցից գուրս բնրելով հուշատետր, ինչ վոր գրեց այնտեղ, արտասանելով, — հանդուգն, լիրք, անասուն...

Այսպիսով բավականաչափ զգալ տալով նորեկներին իր ընկերական գիրքի բարձրությունը (յերկաթուղու կառավարչի հետ մտերիմ բարեկամ լինելը և հենց յերեկ կովկասյան կառավարչապետի ոգնականի հետ «Որիանա» հյուրանոցում ճաշելը) նա պակեց մեջքի վրա և սկսեց ինչ վոր կտոր յերգել «Գեյշա» ոպերետից:

Յերբ բոլորովին հանգստացավ, դարձյալ գլուխը բարձրացրեց, նստեց և նորեկներին հարցրեց.

— Վճրտեղ եք բարեհաճում գնալ:

— Յեղիախ, — պատասխանեց յերիտասարդ թուրքը:

— Յերևի առևտրական գործերով:

— Մենք առևտրով չենք պարապում, — ասաց յերիտասարդը մի տեսակ վերափոխված յեղանակով:

— Հապա:

— Մենք կալվածատերեր ենք:

— Կալվածատերեր, — գոչեց Ալթունովը, կարծես ուրախանալով, — ներեցեք ձեր ազգանունը:

— Բեքիխանով Ռահիմ-բեգ:

Յեղ վարպետի իր բեդությունը ասացուցանեց յերիտասարդը մորթու գլուխը քաշեց աչքերի վրա, ծոծրակը բանալով, և վիզը քորեց:

— Կարող եմ իմանալ ձեր անունն ու ազգանունը, — դարձավ Ալթունովը ծերունի թուրքին, վոր մինչև այդ լուռ եր:

— Ալլահյար-բեգ Մյուլքատարով, — պատասխանեց յերիտասարդը ծերունու փոխարեն:

— Յերևի գնում եք ձեր կալվածքները:

— Այո:

Ալթունովը շտապեց ուրախություն հայտնել, վոր հանդիպեց իր «յեղբայրակիցներին», վասն զի ինքն ել կալվածատեր և: Միևնույն ժամանակ, նա գրպանից դուրս բերեց վոսկյա և աղամանդյա մենագրերով զարդարված արծաթյա տուփն ու ծխախոտ առաջարկեց:

— Ներեցեք ձեր կալվածքը վճրտեղ և գտնվում — հետաքրքրվեց յերիտասարդ Ռահիմ-բեգ Բեքիխա-

նովը, չհրաժարվելով ընդունել սիրալիր առաջարկ-  
ված ծխախոտը:

— Քուլթայիսի նահանգում:

— Մե՞ծ ե, — քորեց նա իր գլուխը:

— Այնքան ել չե, ութ հազար հինգ հարյուր դե-  
սյատին, կեսը վարելահող, կեսը անասու: Իսկ ձե՛րը:

— Ի՞մը փոքր ե, հազար դեսյատին, իսկ Ալլահ-  
յար-բեգ Մյուլքազարովինը մե՞ծ ե, շատ մեծ:

— Ե՛հ, — հառաչեց Ալթունովը, — մե՞ծ թե փոքր,  
նեղհայումս կալվածները ողուտ չին բերում:

Մանավանդ Վրաստանում: Այդ «անհանգիստ» յեր-  
կրի գյուղացիները միանգամայն յերես են առել, հարկ  
չեն վճարում: Ալլահը գլխի ինչ կլինի Ալթունովի  
գրությունը յեթե չունենար մի չորս հինգ տներ թիֆ-  
լիսում և մի չորս հազար դեսյատինի շափ հող ել Բե-  
սարաբիայում:

— Զեր տները մե՞ծ են, — հետաքրքրվեց Բեքիխա-  
նովը:

— Բավական:

— Թիֆլիսի վճր փողոցների վրա յեն:

— Քուռի ձախ ամերում են, ճշմարիտն ասած,  
գետցոցների անունները չգիտեմ:

— Դուք ել վերջին անկարգություններից Քլաս  
կրեցիք Վրաստանում, — խոսեց վերջապես Ալլահյար-  
բեգ Մյուլքազարովը, ուսերը վեր քաշելով, վարպետի  
վերարկուն չընկնի:

— Ինչպես չե, ինչպես չե, — գոչեց Ալթունովը, —  
քաղը անասուներս այրեցին կամ կտրատեցին, տյն-  
աղես, վոր այժմս յես չգիտեմ կալվածք ունեմ թե՞ վոչ:

Իսկ դուք, յերևի, նույնպես մնասովել եք,—շտապեց հարցնել:

— Տունը քանդվի տունս քանդողների,— հատա-  
չեց Ալլահյար-բեգը:

— Ո՞վքեր եյին:

— Ձեր հայերը:

— Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ:

— Հենց այդ անիծյալ տարին: Նրանք սրիկանե-  
րի և դուռի կտրողների փոխարեն ինձ պատժեցին: Այ-  
րեցին աներս, գոմերս ամբարանոցներս, թալանեցին  
դույրս... Հարյուր հազար ուրբուռ մնաս հասցրին ինձ...

Կարծես, Ալթունոֆը իսկ և իսկ մի այդպիսի ա-  
ռիթի եր սպասում, վոր լիովին արտահայտվի: Անմի-  
ջապես բորբոքվեց, կարմրեց ու սկսեց կատաղի խոս-  
քերով պարսավել այդ ընդհարումները: Նա ասաց թե  
Կովկասի ճեղքոսական պատմության մեջ 1905 թվա-  
կանը կբռնե մի շատ ամոթալի և՛, նա պնդեց, թե  
դա մի սոսկալի վայրենությունն էր, վոր կատարվեց,  
մի խայտառակ յեղբայրասպանությունն, վորի համար  
պիտի ամաչեն ապագա սերունդները և այլն, և այլն, և  
այլն...

— Բայց, լսեցեք,— շարունակեց նա,— յես ինքս  
թեև ծագումով հայ եմ, սակայն ճշմարտությունը ա-  
մենից ավելի յեմ սիրում, մեղավորները հայերն են,  
այո, հայերը:

— Իուք ել եք մեղավոր, մենք ել,— ուղղեց յե-  
րիտասարդ բեգը, ձեռը տանելով արխալուզի տակ,  
վոր մեջքը քորի:

— Վնչ, վոչ, դուք մեղավոր չեք, վոչ:

— Ինձ թվում է, վոր մեղավորը Շեյթանն է,—

ուղղեց ծերունի բեղը, կամենալով փրկել հայրենակցիս աղքատյնական ինքնասիրությունը, վոր պատրաստ եր անդունդը գլորվել:

— Ենթանն ինքստինքյան,— համառոտց Ալթունովը,— բայց յես ելի պնդում եմ, վոր հայերն են մեղավոր, պետք է արդարասեր լինել. ինչ անենք, վոր յես ծագումով հայ եմ, ճշմարտությաւնն ամենից առաջ: Յես կարող եմ թուրքերին ավելի սիրել քան իմ հայրենակիցներին: Այնպես չե՞, Ալլահյար-բեդ,— մեկը մյուսին չի խանգարում:

— Ձի խանդարում,— պատասխանեց ծերունիս ուսերը տարակուսանքով վեր քաշելով,— բայց յես կարծում եմ, վոր ամեն մարդ պարտավոր ենախ և առաջ իր միլլաթը սիրել, հետո ուրիշներին: Բացի դրանից յես կարծում եմ, վոր քրիստոնյան մահմեդականին չի կարող սիրել այնպես, ինչպես իր կրոնակիցին:

— Վնչ, վոչ, սխալվում եք, բեդ,— գոչեց Ալթունովը, միանգամայն հավիշտակվելով,— կարող է սիրել և շատ ավելի: Խոսքս, իհարկե, պատրիստների մասին չե, խոսքս որինավոր մարդկանց մասին է: Մեկը հենց յես ձեր խոնարհ ծառան: Յերգլում եմ պատվովս, վոր յես թուրքերին ավելի համակրելի, ավելի վեհանճն, ավելի ասպետ, ավելի անշահասիր ժողովուրդ եմ համարում, քան հայերին, վրացիներին և ուսաներին:

— Այդ լավ եք խոսում,— դարձյալ համառոտց ծերունին,— բայց յերբ վոր մի թուրք է մեռնում, դուք ել յերեկ ձեր հայրենակիցների պես, չեք ասում «մեռավ», այլ «սատկեց». դուք, հայերդ մեզ շուն եք համարում:

— Բեզ, աղաչում եմ, մի վիրավորեք իմ աղա-

ցումները, — գոչեց Ալթունովը, հանկարծակի միանգամայն հրավառվելով, ինչպես դաված քամբակ, — մի համարեք ինձ մեկն այն տխմարներից, վորոնք իբանց քթից հեռու բան չեն տեսնում: Ձեզ հետ մարդ ե խոսում և վոչ անասում:

— Գիտեմ, վոր մարդ եք, իսկական մարդ, այդ յերևում ե ձեր շիր ու շնորհքից: Բայց սասցեք խնդրեմ, միթե դուք մեզ կեղտոտ ու հոտած ժողովուրդ չեք համարում:

— Յես, ձեզ, քավլիցի: Յես շատ լավ գիտեմ, վոր մահմեդականներն առհասարակ անհամեմատ ավելի մաքրասեր են քան բոլոր քրիստոնյա ազգերը: Ասացեք, խնդրեմ, վոր ազգի կրոնն և պատվիրում ամեն անգամ, գիտեք, այն բանից հետո, բաղանիք դնալ և լվացվել: Վոչ մի ազգի կրոնը, վոչ մի ազգի: Իսկ սրբազան դուրանը հրամայում և: Բացի դրանից, դուք առավոտ-յերեկո նամազ անելիս ձեռներդ ու վոտներդ լվանում եք, իսկ մենք քրիստոնյաներս, հաղար ու մի կեղտոտ բաների դիպչելով, ձեռներս ապականում ենք, հետո մտնում ենք յեկեղեցի ու յերեսներս խաչակրնքում, յերբեմն ել նշխարք վերցնում, ուտում ենք:

— Ի ուք թուրք բարեկամներ ունի՞ք, — ընդհատեց Ալլահյար-բեզը Ալթունովի բարեկամական դպացմունքների ղեկումը, կանխապես կոկորդը մաքրելով և թքելով հատակի վրա:

Ի հարկե, ունե, այդ թնչ հարց ե: Կովկասի բոլոր խաներն ու նշանավոր բեգերը Ալթունովի մտերիմ բարեկամներն են: Իեռ յերեկ նա Թիֆլիսի «Լոնդոն» հյուրանոցում շամպանիայով և յերաժշտությամբ ճաշում եր իշխաններ Ուցմիևի և Աղալարովի հետ: Նա

իբ ժամանակի մեծ ժասը թուրք արխատկրատների հետ և անցկացնում:

— Գրտեք,—ավելացրեց նա, ձայնը ցածացնելով, —յես հայերի ու ռուսների հետ չեմ սիրում նստել վերկենալ:

— Ինչո՞ւ,—հարցրեց Ռահիմ-բեդը, նույնպես թքելով հառակի վրա և վռտով սրբելով:

— Հենց այնպես, ինքս ել չգիտեմ, յերևի իմ պապերի յերակներում թուրքի արյուն և յեղել:

— Չշմարիտ, ձեր ազգանունն ել կարծես թուրքի յես, Ալթունով,—նկատեց Ալլահյար-բեդը:

— Կարծեմ, իսկապես թուրք ել յեղել և իմ պապի հայրը:

— Դուք վրացիների հետ լավ եք,—հետաքրքրվեց Ռահիմ-բեդը:

— Ի՞նչ, մում հետ,—հարցրեց Ալթունովը իբր թե չհասկանալով դիմադրի հարցը:

— Վրացիների...

Ալթունովը ըարձրածայն հեզնորին ծիծաղեց:

— Արհամարում եք նրանց:

— Ի հարկե:

— Ինչո՞ւ:

— Թողնենք:

— Վո՛չ, վո՛չ, հետաքրքրական և,—համառեց յերիսասարդ բեդը,—վարովհեաև յես ել մի քանի վրացի ծանոթներ ունեմ:

— Գրտեք, յես վրաց ազգի մասին խոսք չունեմ: Շատ համակրելի, ազնիվ, մաքուր ազգ և, հյուրասեր, աշխատասեր:

— Ուրեմն, մւմն եք արհամարում:

— Ազնվականներին:

— Ինչո՞ւ:

— Գոռոզ են, անբարտավան և ծուլ: Բացի դրանից, շատ մեծ կարծիք ունեն իրենց դեղեցկության մասին: Յերևակայեցեք, ի՞նչ հանդդնություն, նրանք իրանց թուրքերից եւ ամէլի դեղեցիկ յեն համարում:

— Եարունակեցեք, ե՛լ ուժ եք արհամարում:

— Ինտիլիգենցիային: Վրաց ինտիլիգենցիային, սո, անտանելի յե, շովինիստ, մեծախոս, կովարար:

— Իսկ նրանց ոֆիցերները, չինոմիլիները:

— Նրանք ել իսկի մի բանի նման չեն, ոֆիցերները՝ սկանդալիստ, չինոմիլիները՝ արքեպոպ:

— Ուսանողները:

— Չեմ ճանաչում, բայց պետք է վոր նրանք ել մի բանի պիտանի չլինեն:

— Արհեստավորները:

— Ճանաչում եմ. չգիտեն իրանց արհեստը, խաբեքաներ են:

— Կանայք: Գեղեցիկ են, չե՞:

— Հաս, դրա մասին խոսք չունեմ: Եստ շատերի հետ եմ բարեկամ: Բայց այն ել առեմ, վոր յեթե վաղը մյուս որը թուրք կանայք իրենց չաղբան դեն պցեն, վրացուհիների ասողը կխավարե...

— Գուք գյուղացիների մասին վոչինչ չասացիք, չե վոր կալվածատեր եք, հետաքրքրակամը այդ է ձեզ համար, — հարցրեց Ալլահյար-բեգը:

— Յես գիտամար չասացի, — գոչեց Ալթունովը, նորեն գրգռվելով, — վորովհետեւ արյունս պղտորվում է, յերբ հիշում եմ վրացի գյուղացիներին: Այդ տեսակ ըմբոստ տարր աշխարհի վոչ մի կողմում չեք գտնիլ:

Նրանք չէն, վոր անտառները կտրատեցին ու այրեցին: Ատում եմ ամբողջ հողովս:

— Ուրեմն, վոչ վոքի չեք սիրում վրացիների մեջ,  
— նկատեց Ռահիմ-բեգը:

— Ասացի, վոր վրաց ազգը սիրում եմ:

— Բայց... ուղում եյի յես միջամտել, սակայն բարձրք համարեցի լուել, թողնելով, վոր հայրենակիցս իր սայլը քշի մինչև վերջը:

Բարեբախտաբար գնացքը հասավ Յեվլախ կայարան, ապա թե վոչ համոզված եյի, վոր Ալթունովը շատ պիտի առաջանար և, պարտավելով աջ ու ձախ բոլորին, պիտի թուրքերն ունեցած իր սիրո ու պատամունքի շահմարանն սպառեր մինչև վերջը:

Բիզերն իրանց նոր բարեկամից բաժանվեցին շատ սիրալիր:

Ռահիմ-բեգը մինչև անգամ հրավիրեց նրան իր կալվածքը հյուր և խոստացավ նրան մի սիրուն նըժույդ նվիրել:

— Միայն վոչ այժմ, աշնանը մեզ մտա նանապարհները անանցնելի յեն, յեկեք զարնանը կամ ալեղի լավ և ամառվա վերջերին, — դգուշացրեց Ալլախյար-բեգը. ավելի քան կես տարով հետաձգելով Ռահիմ-բեգի հյուրընկալութունը:

— Ետա շնորհակալ եմ, — ասաց Ալթունովը, ըստ յերեույթին, լավ ըմբռնելով այդ տեսակ հրավերների խսկական արժեքը: — Իսկ յեթե դուք ել բարեհաճեք այցելել իմ համեստ կալվածքը անտառներս կարգի բերելուց և տներս վերաշինելուց հետո, յերջանիկ կլինիմ ձեզ հետ վորսի դնալու: Իմ անտառներում մեծ քանակությամբ գասյաններ և թուրաջներ կան:

Թուրքերը դուրս յեկան:

Դարձյալ լուսամուտից նայեցի, այս անգամ ուղղակի հետաքրքրվելով թե ինչ պիտի խոսեն նրանք իմ հայրենակցի մասին:

— Ի՞նչ կասես, Ալլահյար-բեգ,—լսեցի յերիտասարդ Բեքիխանովի հարցը:

— Թամիզ մարդու նման չեմ,—պատասխանեց Ալլահյար-բեգ Մյուլըբաղարովը,—յես նրա վոչ մի խոսքին չհավատացի:

— Յես ել:

Անմիջապես ցած իջա իմ տեղից, վարպետդ Ալթունովն իմանա, վոր քնած չեյի և ամեն բան լսում եյի ու տեսնում:

Բայց նա բնավ չընթրվեց:

— Տեսաք,—դարձավ նա ինձ, տակավին վոզե-վորված,—տեսաք ինչպես վոչնչացրի այդ հոտածնե-րին. Ֆիզոն, սղիկուրն ել չկա մոտս, վոր ողբ մի քիչ մաքրեմ:

Այո, նա ուղղակի նրանց ավագակներ անվանեց: Նա ասաց, վոր Թուրք տարրը մեր յերկրի քաղաքա-կըթուրթյան համար մի մեծ խոչընդոտ ե, վոր նա գոհ-հիկ ե, Փանատիկ, հետադեմ, վոչ մաքրասեբ և այլն, և այլն, և այլն...

— Բայց յես ձեր ասածները չլսեցի,—համար-ձակվեցի նկատել, հաղիվ կարողանալով ծիծաղս զտելը: Ալթունովը, դարմացած ձկանալով, աչքերը լաջնե քաց արավ և գոչեց.

— Չլսեցիք, անկարելի յե, ի՞նչպես չլսեցիք:

— Այո, չլսեցի:

— Ուրհին, քնած եք յիդել: Շատ ցավում եմ:

Պետք է տեսնեցիք նրանց դեմքերի տալուչ արտահայտությունը, յերբ բալորն ասացի: Գիտեք, յերիտասարդ բեզը համաձայնվեց ինձ հետ:

— Իսկ ծերունի՞ն,— հարցրի յես, թույլ տալով ուղեկցիս ասել՝ ինչ կամենում ես:

— Ծերունին կատաղեց: Նա ձեռք սեղմեց իր դաշույնի դաստակի վրա և գոռաց ճիշտ, լսի՞ր:

— Ահա ի՞նչ, ուրեմն ընդհարվել եք:

— Վոչ, ծերունին խկույն զսպեց իրան, յերբ, հանգիստ ձևով, դուրս բերեցի նազանս և դրեցի քովս:

Նա յեա արավ պիճակի կուրծքը և, ցույց տալով ինչ-վոր սևուկների կոթ, շարունակեց.

— Ո՞ր, թող միայն փորձեր, ցույց կտայի նրան, թե ինչ ասել և Ալթունով յերբ նրան կատաղեցնում են:

Դրսից լսվող աղմուկն ընդհատեց ուղեկցիս հոգորաանքը, վոր, յերեկ, յերկար պիտի շարունակվեր: Ներս մտավ այն կոնդուկտորը, վորի հետ Ալթունովը ընդհարվել եր և վորին շուտով պիտի արձակեցին պաշտոնից: Նրա յեակից յեկավ մի նոր ճամբորդ, վոր ամբողջ կոկորդով գոռում եր.

— Այդ այլանդակություն ե, խայտառակություն: Վոչ մի որինամոր ճամբորդ չի կարող տանել այդպիսի բաներ:

— Հանդատացե՛ք, իշխան, դուք առանց տեղի չեք մեալ,— համոզում եր կոնդուկտորը բորբոքված ճամբորդին:

— Չե, ասացեք խնդրեմ, այդ ի՞նչ կարգ ու կանոն ե, ամ, ի՞նչ կարգ ու կանոն,— շարունակեց իշխան կոչվածը, սկանջ չդնելով կոնդուկտորին և ձեռ-

ներն ուժգին թափով շարժելով ողի մեջ,— փող ենք տալիս, տոմսակ գնում, և հանկարծ տեղ չկա: Ան, այդ ինչ կարգ ու կանոն ե:

— Բայց դուք վտաքի վրա չեք մնալ, իշխան, հավատացե՞ք, վոչ, չեք մնալ, դուր եք բարկանում: Ահա այս կուպեյում միայն մի հողի կա, ուրեմն, յերկու ազատ տեղեր կան, կարող եք բռնել:

Իշխան կոչեցյալը մի վիթխարի տղամարդ էր ահադին քթով: Հագած էր չերքեզի կապալայն փեղերով ու լայն թևերով: Ուսերի վրա ունեւր չուխայից կարճ տոռատուկ վոսկեթեւ ծոպերով: Գլխին դրած էր անասելի մեծությամբ մի գդակ, վոր նրան լեռնային ավազակի տեսք էր տալիս:

— Անկարգութիւն, այլանդակութիւն, ուրիշ վոչինչ,— չեր հանդատանում իշխանը:

Մեջ մտավ Արկադիյ Մարկովիչ Ալթունովը, վոր չեր դադարում ջախջախիչ հայացքներ ձգել հակառակորդ կոնզուկտորի վրա:

— Ձերդ պայծառափայլութիւնը միանգամայն իրավացի յի դայրանում,— ասաց նա,— մի ժամ առաջ այդ միւնուշն սուբիյեկտը հանդգնեց ինձ ել կոպիտ ու անվայել պատասխաններ տալ: Յես այդ մասին արդեն գրել եմ յերկաթուղու կառավարչին, վոր, ի միջի այլոց ասած, իմ մտերիմ բարեկամն ե և վորի հետ դեռ յերկ ճաշում եյի «Անոննա» ճաշարանում, մի քանի ուրիշ ժեներալների ընկերությամբ:

— Ան, դուք մի եք, թույլ տվեք հարցնել,— դարձավ նրան իշխանը:

— Արկադիյ Մարկովիչ Ալթունով: Կարող եմ ձեզ հավաստիացնել, վոր կառավարիչը շատ խստապահանջ

և իր ստորագրյալն ի վերաքերամաք, մէկնույն ժամանակ, շատ սիրալիր և իր բարեկամների հետ: Հետևաբար, կասկած չունիմ, վորնա, ստանալով իմ նամակը իսկույն և յեթ գոհացում կտա ինձ, պաշտոնից ազատելով այդ կխավայրենուն:

Ապա, դառնալով կոնդուկտորին, սպանաց.

— Սպասեցեք, սպասեցեք, շուտով կիմանաք, թե ով եմ յես:

Այս անգամ նրա սպանալիքը ազդեց կոնդուկտորի վրա: Թեղծ մարդը վոչինչ չսասաց: Միայն, դառնալով իշխանին, մեղավոր տոնով հարցրեց.

— Ձերդ պայծառափայլություն գոհ եք, ձեր տեղով:

— Գոհ եմ, գոհ եմ, գնացեք: Իրեղեններս տեղավորեցինք:

— Ահա ալատեղ են, մեկ, յերկու, յերեք:

— Լավ: Բայց ուր կորավ բեռնակիրը, յես նրա վարձը չեմ տվել:

— Ձերդ պայծառափայլություն, յերբ դուք սկսեցիք գոռալ, նա վախեցավ, իրեղենները թողեց ու փախավ: Յես եմ ներս բերել:

— Փախավ, հա-հա-հա, փախավ,— քահ քահ ծիծաղեց իշխանը բարձրաձայն, բաց անելով տերտերի դրպանի չափ բերանը և ցույց տալով սևացած ատամները:— Լախեցավ, վար ծեծեմ, հը՞:

— Այո:

— Յե՛վ կծե՛ծեյի, դմերթիմանի, կծե՛ծեյի: Քեզ ել կծե՛ծեյի, յեթե տեղ չտայիր: Դեհ, վերցրեք այս և տվեք բեռնակրին:

Սակայն, քսան կողեկը ստանալով, կոնդուկտորը սաստանվեց դուրս գալ կուսկեյից։

— Զերդ պայծառափայլություն, — ասաց մի հաշտարար հայացք ձգելով Ալթունովի վրա։

— Հը', ելի թնչ ես ուզում, կացո...

— Խնդրեմ միջնորդեք պարոն ճամբորդի մատ, վոր իմ մասին գանդատ չդրե կառավարչին, կամ վարչությանը։ Յես գիտեմ, դեռ չի դրել, բայց կարող ես դրել։ Զերդ պայծառափայլություն, ասանց այդ ել ծառայողներին դրությունը նախանձեկի չե։ Ընտանիքի տեր եմ, յեթե հանկարծ զրկվեմ պաշտոնից, մեր տխրի գնամ։ Թող չդանգատվի։

Ալթունովի դեմքը փայլեց ներքին հաճույքից։

— Դացո, մի դրեք ելի, թնչ ե, — ասաց իշխանը, քիթը կնճռտելով և ձեռքերը սդի մեջ շարժելով։

— Յեթե ձերդ պայծառափայլությունը խնդրում ե, կարող եմ ներել...

— Խնդրում եմ, կացո, խնդրում եմ, վա...

— Թողեք ինձնից ներողություն խնդրե...

— Մհ, դարձավ իշխանը կոնդուկտորին, ձեռք դարկելով նրա ուսին, — ներողություն խնդրիր...

— Խնդրում եմ։

— Ինչ, վերջացավ, գե գնա...

— Ծնորհակալություն հայտնեցեք իշխանին, գնացեք և այսուհետև լավ ճանաչեցեք ճամբորդներին, — ներեց Ալթունովն իսկ և իսկ հրամանատար ժենեթալի տոնով։

— Ծնորհակալ եմ, — արտասանեց կոնդուկտորը, և դուրս գնաց։

Իշխանը վերցրեց սուխ տառատեղը, քաշ արավ

պատին, նստեց և իր ահագին վտանները, դրեց իմ նըստարանի վրա:

Ինձ թվաց, վոր նորին պայծառափայլութունը մի տեսակ արհամարանքով և վերադերվում գեպի հասարակ մահկանացուները, ուստի, նրա հպարտութունը չդրդուելու համար, յերեսս դարձրի լուսամուտի կողմ և սկսեցի գիտել շրջակա տմայի դաշտերը և շերկ լեռները: Բայց շուտով պարզվեց, վոր նա վերին աստիճանի պարզ մարդ և և բնավ չի պարծենում իր իշխանական ախտոստով:

Հայտնվեց նաև, վոր նրա ազգանունը Մերկվելիճն է, վոր նույնպես կալվածատեր և և վոր նրա կալվածքը նույնպես Գութայիսի նահանգումն է:

Յես կարծեցի, վոր Ալթունովը, հանդամանքից ոգավելով, անմիջապես կսկսե խոսել իր ութ հազար դեսյատին վարելահողի ու անտառի մասին, մանավանդ վոր իշխան Մերկվելիճնյի հարեանն է Ամենեին. նա այդ մասին բառ անգամ չտրտասանեց, չնայելով, վոր ռոյալազացիներն այրել էին նրա անտառները:

Սակայն այդ բնավ նրան չխանգարեց խոսակցութեան ուրիշ նյութեր դանելու և գրավելու իշխանի բարեկամութունը: Սկսեց նա հայտնել իր անսաման սերն ու հարգանքը համայն վրաց ազգին՝ առանց վորև և դասակարգի բացառութեան: Ամենից շատ նա գովեց ու գովաբանեց ազնվականութեանը, համարելով նրան, «աստիտական» դասակարգ: Շատ անփութ ձևով հիշեց մի շարք հայանի իշխանական անուններ, վորոնց հետ վաղուց, շատ վաղուց «գու»-ով ե խոսում և վորոնք ուրիշ կերպ չեն անվանում, յիթե վոչ «մեր թանգագին Արշակը» և կարագրեց մի շարք քեֆեր, դու-

դուհով ու զուռնայով «Յեղիմ» և «Փանտազիա» այս-  
պիսիներում:

Պարզվեց ինձ համար, վոր իշխան Մերկվեկիձեն  
բացի պարզ մարդ լինելուց, գերծ և ազգայնական  
տենդենցներէց և բոլոր ազգերին ու ազգութուննե-  
րին վերաբերվում և հավասար անտարբերութեամբ:

Սակայն անհանգիստ Ալթունովն այնուամենայնիմ  
չկամեցավ դադարել շոյելու իշխանի ազգայնական  
ինքնասիրութունն ու ասաց.

— Բայց, ձերդ պայծառափայլութուն, յնս դար-  
ձյալ կասեմ, վոր հայերը մեղավոր են վրացիներէ առջև:

— Ինչո՞ւ, կացո՞ւ,— հետաքրքրվեց իշխանը, վեր-  
ցնելով ահագին դրակը և շարտելով մի կողմ այնպես,  
վոր կարծես այլևս հարկավոր չեք իրան:

— Խոսքս մեր կապիտալիստներէ մասին և Նը-  
բանք կլանում են Վրաստանը, ոչտվելով ազնվական-  
ների նեղ վիճակից և մեկը մյուսի յետեից գնելով  
նրանց սոսմական կալվածները:

— Այդ ճիշտ չե՞, ճիշտ չե՞,— դոչեց իշխանը, հան-  
կարծ տաքանալով,— մեղավորը վոչ հայերն են, վոչ  
ոտարները: Կացո՞ւ, հանգամանքներն են մեղավոր, մեկ  
ել ինքներս, վրացի ազնվականներս:

— Այդ ի՞նչպես,— հարցրի յես:

— Այնպես, մենք ծախում ենք, կապիտալիստ-  
ները դնում են, վոր չծախենք, ով կարող և զոռով  
գնել:

— Բայց ինչո՞ւ յնն դնում,— ասաց Ալթունովը,—  
հայերը չպիտի գնեն:

— Խնդրում, աղաչում են գնել, վասն,— ավելի  
տաքացավ իշխանը,— որինակ, մեկը յես: Տասնըհինգ

տարի յև բանկին տոկոսներ եւ վճարում, քանզի կեցի,  
 վաւ Պարտքերի մեջ, սյ, մինչև կոկորդս եւ խրվիլ:  
 Վճռեցի, վերջապես, կալվածքս ծախել: Սատանան  
 տանի, գոնն մի յերկու տարի կուշտ կապրեմ ու այդ  
 անպիտան գյուղացիներից կազատվեմ: Առաջարկեցի  
 բանկին վերցնել իր իսկական գնով—մերժեց: Առա-  
 ջարկում եւ գյուղացիներին պակաս գնով—մերժում  
 են: Փող չունենք, ասում են, վա՛, յես մեղավոր եմ,  
 վոր նրանք փող չունեն: Ինձ ել հենց փող ե հարկա-  
 վոր ասլրելու համար, ազգասիրությունը ինչլիս ե  
 պետք: Այժմ ինձ հարցրեք, վճրանելից եմ գալիս և  
 մեր եմ գնում:

— Յերեկ Բագու յեք գնում,—ասացի յես:

— Համ, հա, իսկ և իսկ Բագու: Ինչո՞ւ յեմ պը-  
 նում, կացո՞, կարճեւ եւ նրա մագութի հոտին: Գնում  
 եմ կալվածքս մեկին առաջարկելու:

— Ո՞վ ե այդ մեկը,—հարցրեց Ալթունովը:

— Նավթա-արդյունաբեր Մարալյանցը փող շատ  
 ունե: Անցյալ տարի նա Յեվլախի մոտ գնեց մի մեծ  
 կալվածք: Լսեցի, վոր այժմ ախտեղ ե: Յերեկ Քու-  
 թայիսից յեկա նրան տեսնելու, չկար: Ասացին՝ գնա-  
 ցել ե Բագու: Հիմա վաղում եմ ախտեղ: Դե՛հ, ուրե՛մն,  
 ել ինչ մեզք ունեն հայերը կամ ուրիշները: Յեթե  
 կամենաք, մենք գնու շնորհակալ ենք նրանց, վոր չեն  
 թողնում բանկերին մեր կալվածներն աճուրդով կես  
 գնով վաճառելու:

Ալթունովը լուռ եր:

Բայց ինձ համար միանգամայն անհասկանալի  
 յեր այն, վոր նա մի ակնարկ անգամ չարավ իր Քու-

Թայիսյան կալվածքի մասին: Այս բանն ինձ այնքան հետաքրքրեց, վեր չկարողացա ինձ դապել և հարցրի:

— Ասա, խնդրեմ, պարոն Ալթունով, ձեր կալվածքը, վոր նույնպէս Քութայիսի նահանգում և գտնվում, տոմսակման և, թե՛ վրացիներից գնված:

Նա թեթև ցնցվեց և նայեց ինձ մի տեսակ կես կատարի ու կես աղերսական հայացքով:

— Ի՞նչ,— գոչեց իշխան Մերկլիխիձեն, ձեռք բարեկամաբար դնելով Ալթունովի ուսի վրա,— դուք եք էք կալվածատեր:

— Այո, պատասխանեցի յես հայրենակցիս վոխարեն,— պարոն Ալթունովը Քութայիսի նահանգում ունե ութ հազար դեսյատին մի կալվածք, վորի կեսը վարելահող և, մյուս կեսը անտառ: Թեև անտառները դյուղացիների ձեռքով այրված են ու կտրատված, բայց այնտեղ մեծ քանակութեամբ կաքարներ ու փայտաներ կան:

— Ութ հազար դեսյատին,— գոչեց իշխան Մերկլիխիձեն ասլշած,— կացո՛ւ, այդ տեսակ մեծ կալվածք Քութայիսի նահանգում վոչ վոք չունե: Բայց չե, կարելի յե մի քանի կալվածքներ գնել եք ու միացրել:

— Այո՛, վոչինչ, դատարկ բան և,— արտասանեց Ալթունովը անորոշ և դարձյալ նայեց յերեսիս:

— Մակայն սպասեցեք,— ուղբը ժողովեց իշխանը,— յես Քութայիսի նահանգի բոլոր կալվածատերերին անձամբ մի առ մի ճանաչում եմ: Վորքան հիշում եմ, այնտեղ Արկադիյ Մարկովիչ Ալթունով անունով կալվածատեր չկա, այն ել ութ հազար դեսյատին ունեցող:

Այս անգամ յես նայեցի Ալթուևովի յերեսին,  
խոստովանում եմ, վոչ առանց նենգության:

Հանկարծ նա գլուխը բարձրացրեց և ականջ դը-  
րեց դեպի դուրս:

— Ա՛հ, — գոչեց, արագութեամբ վառքի յելնելով,  
— այդ թ՛նչ ազո՛ւկ ե: Կարծեմ, կանայք ոգնութեան  
են կանչոււմ:

Յես մի վստաւումով դուրս վազեցի կուպիցից:

— Ոգնութեան, գալիս եմ, գալի՛ս եմ, — գոչեց իշ-  
խանը ականդ ձայնով և ձեռք տարավ դաշույնին:

Դուրս յեկանք նրբանցք:

Վոչինչ չկար: Այնտեղ յերկու դեռահաս որիորդ-  
ներ և մի պատանի բարձրաձայն ծիծաղում էին:  
Պարզվեց, վոր նրանց ծիծաղի առարկան մի թուրք  
էին և, վոր անցնում և դաշտով ձի նստած, յերկու  
յերեխա գրկում պահած և յերրորդին ձիու գավակին  
կապած:

— Ա՛հ, — ասաց Ալթուևովը, ինքն ել ծիծաղելով,  
— այնպիսի ազմուկ եք, վոր յես կարծեցի ավազակ-  
ներ են հարձակվել և խեղդում են... կանանց... հաս-  
կանում եք, կանանց...

— Կացո, այստեղ ավազակներն թ՛նչ գործ ունեն,  
— գոչեց իշխան Մերկվելիձեն, — ինձ ել դուք անհան-  
գասացրիք:

— Դիտե՛ք, ձերդ պայծառափայլութեան, — արդա-  
բացավ հայրենակիցս, — այս ճանապարհի վրա ամեն  
բան սպասելի յե: Վերջերս ավազակութեանն տյնքան  
և դարգացել, վոր սրիկաները յերկաթուղու գնացքնե-  
րն են կանգնեցնում և ճամբորդներին կողոպտում:

— Ա՛իշտ և, — համաձայնվեց իսկույն իշխանը:

չգուշակելով Ալթունովի խորամանկությունը, վոր ինձ  
 էլ խտրեց:

Վերադարձանք կուպե, և այլևս խոսք չեղավ Ալ-  
 թունովի ութ հազար դեսյատին կալվածքի մասին:

Այս անգամ Ալթունովը բարձրացավ կուպեյի  
 վերին մասը, իր տեղը սիրալիբ գիշանելով իշխանին:  
 Շատ չանցած լավեց նրա անվորբ խամփոցը: Նա քնեց,  
 չնայելով, վոր քունը համարում էր «կես մահ»...

Իշխանը պառկեց, փաթաթվեց տառատուկի մեջ  
 և նույնպես խամփացրեց միայն վաչ Ալթունովի պես  
 հանդարտ, այլ անասելի ազմուկով:

Զարթնեցին ուղեկիցներս առափոռյան այն ժա-  
 մանակ յերբ գնացքն արդեն Բագու յեր հասել: Իշխանը  
 մեզ վողջերթ մազթեց և դուրս յեկավ վազոնից:

— Մնաք բարով, իշխան, մնաք բարով, — գոչեց  
 Ալթունովը նրա յետևից, — հույսով եմ, վոր մեր բա-  
 րեկամությունը հաստատ կլինի: — Ո՛հ, — դարձավ նա  
 ինձ անմիջապես, — վերջապես աղասովեցինք այդ արխ-  
 մարի ընկերությունից: Ա՛յ ստախոս: Ասում ե, կալ-  
 վածք ունիմ Գուլթայի նահանգում: Յես Մերկվելիձե  
 անունով կալվածատեր չեմ ճանաչում: Արժեք վիճա-  
 քանել այդ ստախոսի հետ:

Բայց ինձ համար արդեն պարզ էր, թե վորն և  
 նրանցից ստախոս:

Յերբ գնացքը նորեն շարժվեց, մեր կուպեյում  
 յերևացին յերկու հրեական միմյանցից խիստ տար-  
 քեր տիպեր — մեկը հին, մյուսը նոր: Մեկը նիհար էր,  
 կուրծքը ներս ընկած, արծվաքիթ, խիստ թանձր և  
 խիստ սև մազերով: Նրա միրուքը սկսվում էր ուղիղ  
 աչքերի տակից և վերջանում էր չգիտեմ, ուր: Մյուսը

գնք եր, առողջ կրճքով, կարմիր յերեսով, շեկ մաղերով, սպիտակ ինչպես պինդ խաշած ձու:

Ալթոռնովը մի արհամարհական հայացք ձգեց նորեկներին վրա, իհարկե, դադանի, և ասաց ինձ հայերեն:

— Հիմա յիլ Իսրայելի զավակների ձեռքն ընկանք: Թյու, դրանց հետ չեմ խոսելու: Յեվ իրավ մտկես ժամ նա իրան պահեց ինչպես անմտաշելի դալայլամա, հաղիվ ինձ ևս մի քանի հատ ու կտոր խոսքեր ուղղելով: Միայն չմոռացավ այդ կարճ միջոցում չորս տնդամ գրգանից դուրս բերել վոսկյա և ադամանդյա մենագրերով զարդարված արծաթե ծխախոտատուփը այնպես, վոր հրաները տեսնեն:

Հայանի յն, վոր հրաները ճամբորդության ժամանակ տանել չեն կարող լուսկյաց ուղեկիցներին և ընդունակ են անպիտաններին անգամ շատախոս դարձնելու:

— Ինչպես յերևում և, Թիֆլիսիցն եք գալիս, — պիմեց ինձ շիկահեր հլիան:

Յեվ, բավարար պատասխան ստանալով, նա դարձավ Ալթոռնովին:

— Դուք նմուխիս:

Հայրենակիցս խնդրեց և յեթ կակդեց և խղից իր լուսթյունը: Յեվ սկսվեց, Մի ժամ չանցած նա արդեն բարեկամացել եր յերկու տարբեր տիպերի հետ:

Մտանավորից սկսելով, Ալթոռնովն անցավ հասարակական խնդիրներին: Թողնելով հասարակականը, վաղեց դեպի քաղաքականը, այնտեղից դեպի կրոնականը: Վորոնեց, գտավ և վորոշեց նախաքրիստոսական յերբայացիներին կատարած հակայական դերը պատմու-

թյան մեջ, հատկացնելով այդ դերին ամենափայլուն  
եջեր: Աստվածաշունչը համարելով դիրք գրոց, Թալ-  
մուղը դրեց ավետարանի կողքին ու յերկուսին եւ հա-  
վասար յերկրպագեց: Ալինեյին նրանք, կռապաշտու-  
թյունը սիրտի թաղավորեր մինչև այժմ ամենուրեք և  
նրա հետ միասին ըստբարոսությունը:

Իաց թողնելով պատմության ոճիքը, Ալթունովը  
անցավ դեպի ներկան և մի քանի թիթև վերապահուժ-  
ներով դարձյալ հրեաներին նստեցրեց ազգերի դիւխն:  
Ինչ ուղում են թող ասեն որ սկոււրան տնէրը, վոչ  
գիտություն, վոչ ճարտարաբովեստ, վոչ արդյունարե-  
րություն, վոչ առևտուր, վոչ արվեստներ, վոչ գրա-  
կանություն և վոչ նույնիսկ բարոյականություն չեն  
կարող գոյություն ունենալ առանց հրեաների: Նրանք  
են ամենախելոք, ամենաաշխատասեր, ամենատաղան-  
գավոր, ամենա... և այլն, և այլն, և այլն ազգը: Իա մի  
սովորական ազգ չե, այլ մարմնացած հանճարը մարդ-  
կության, այսպես ասած, նրա մտավոր կվինտ եսենիան:  
Սուտ ե թե հրեաները հաբստահարիչներ են, վաշխա-  
ռուներ և այլն: Իա թուլամորթների նախանձի ար-  
դյունք ե... Սուտ ե թե նրանք մաքրասեր չեն և ինչ-  
վոր հատկանիշ հոտ ունին. նրանք յեվրոպական վոր  
ազգի հետ ասես կարող են մրցել դարձածած սալունի  
քանակով:

Վերջապես, սուտ ե թե նրանք փողասեր են...

— Ներողություն, — ընդհատեց հայրենակցիս վո-  
գևորությունը շիկահեր հրեյան, — այդ մեկը սուտ չե:  
Մենք փող սիրում ենք:

— Այո, կարելի չե, բայց հայերը ձեզանից ավելի  
փողասեր են:

— Գուցի, յես հայերին լավ չիմ ճանաչում:

— Իսկ յես շատ լավ եմ ճանաչում:

Յեկ այսպէս մի ամբողջ որ ու յերեկո Արկադիյ Մարկովիչ Ալթունովը շոյեց, շողոքորթեց իր ուղեկիցներին:

Մի անգամ յերբ նա իջել եր ինչ-վոր կայարանում թեյ խմելու, միրուքավոր ու սևահեր հրեյան ինձ հարցրեց.

— Ասացեք խնդրեմ դուք հայ եք:

— Այո:

— Իսկ այդ մանրդը:

— Նույնպէս հայ ե:

— Դուք համաձայն եք նրա բոլոր գովասանքներին հրեյաների վերաբերյալ:

— Վաչ լիովին:

— Յես նույնպէս համաձայն չիմ շատ բաների հետ, — ասաց հրեյան ժպտալով:

Հասանք վերջապէս Ռոստով:

Ալթունովը հրեյաների հետ իջավ գնացքից:

Յերբ նա ինձ վողջերթ մողթիլով, ձեռս սեղմում եր, յես մի բռակն պահեցի նրան և հարցրի.

— Դուք բոլոր ազգերին գովեցիք, բոլորին ել պարսավեցիք, ասացեք խնդրեմ, դուք ինքներդ ի՞նչ եք:

— Կոսմոպոլիտ, — պատասխանեց Ալթունովը հանաքիստ ու հեռացավ:

2013 թ. Դեկտեմբեր

Թիֆլիս

## ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՎՐԱ

Մի որ առաջ Չմյուռնայից դուրս յեկած իտալական Baron Gall շողանալը կանգ առավ Ռոզոս կըզզու դեմ, ափերից բավական հեռու: Մի թեթև մակուռի վարձելով, աղջկանս հետ վնացինք կղզին դիտելու: Յերբ վերադարձանք շողենալ, հանդիպեցինք ճամբորդների մի նոր խմբի: Դա մի թուրք ընտանիք էր, բաղկացած հինգ հոգուց:

Մայրը շիկահեր էր, կապտաչյա, տակավին թարմ ու գեղեցիկ: Մեծ աղջիկը կլիներ վոչ ավելի քան տասներուկ տարեկան: Նա ել կապտաչյա յեր, բայց սևահեր: Մյուս յերկու աղջիկները կատարյալ արևելյան տիպեր էին՝ սևաչյա և թլխադեմ: Ամենից փոքրը իր մորը շատ նման մի ութ-իննը տարեկան գեղեցիկ պատանի յեր:

Առաջին իսկ ժամին ամենքս ծանոթացանք նորեկներին հետ և մինչև նավի տեղից շարժվելը մի աստիճանի բարեկամացանք, ինչպես առհասարակ լինում է ծովային ճամբորդութեան ժամանակ: Կյանքումս առաջին անգամն էյի ճամբորդում մի թուրք ընտանիքի հետ, վոր չեր խուսափում քրիստոնյա աղամարդու ծանոթութունից և ընդհակառակը, կարծես, ցանկանում էր այդ ծանոթութունը:

Մայրը, ինչպես շուտով իմացանք, այբի յեր, բացի թյուրքերենից ուրիշ լեզու չգիտեր, իսկ որիորդ-

ները բավական ազատ խոսում էին Ֆրանսերեն և իտալերեն: Մալոն մանկու լայրկյանից թե մայրը և թե աղջիկները դեն էին ձգել իրենց յերեսքողերը, և այդպես էլ մնացին մինչև Յեզիպոս: Միայն տախտակամածի վրա դռնված ժամանակ, յերբ հնովից տեսնում էին մի թյուրք կամ արար նավաստի, անմիջապես քողով ծածկում էին իրանց բերանները, և անմիջապես չքանում էին նրանց զվարթութունն ու ծիծաղը, ինչպես ծիծեռնակների ծվլոցը ազամիլերի յերեւալուն պես:

— Ի՞նչ է ձեր մոր անունը, — հարցրի յես յերեսքողայրերից յերկրորդին; վորն ամենից համար ձեռն էր:

— Զհանգար:

— Իսկ ձեր ավագ քրոջ անունը:

— Լամիյե Իմ անունը նայիլի է, փոքր քրոջս անունը Փայիզի, իսկ յեղբորս անունը Արզուլան:

— Վարտեղ եք դուք սովորել Ֆրանսերեն և իտալերեն լեզուները:

— Մեր տանը:

— Ուրեմն մասնավոր դասատուներից:

— Այո:

— Կին և յեղել ձեր դասատուն, իհարկե:

— Այո, բայց ինչո՞ւ «իհարկե», կարող էր և աղամարդ լինել:

— Իսկ յես էլ լսել եմ, վոր թուրք կնոջը արգելված է աղամարդուց դասեր վերցնել:

Սխալ է ձեր լսածը զոնե մեր վերաբերմամբ: Մենք աղամարդուց վախեցողներից չենք, ապացույց վոր յես ձեզ հետ խոսում եմ:

— Բայց ինչու ձեր յերեսը քողով ծածկում եք  
թուրք կամ արօք տեսնելիս:

— Նրանց գռեհիկ ասելությունը կամ անար-  
գանքը չգրգռելու համար: Դա մի սովորություն է,  
վորից դեռ չենք ազատվել և յես հույսով եմ, վոր շու-  
տով կադատվինք: Քրիստոնյա տղամարդկանց վերա-  
քերամամբ, ինչպես տեսնում եք, մենք ավելի համար-  
ձակ ենք:

— Ինչով բացատրել այդ:

— Մենք կարծում ենք, վոր քրիստոնյան մեր  
յերեսբացությունը անամոթության նշան չի համարիլ,  
այլ ընդհակառակը կգովի:

— Ուրեմն ձեր ընտանիքում ընդունվում են քրիս-  
տոնյա տղամարդիկ:

— Այո, պարոն, իմ հանգուցյալ հայրը շատ քրիս-  
տոնյա բարեկամներ ունեք, վորոնք հաճախ այցելում  
եյին մեզ: Մայրս և մենք դիմավորում եյինք յերես-  
բաց:

— Ներողություն, որիորդ, քանի տարեկան եք  
դուք:

— Տասնուվեց, յես յերեք տարով փոքր եմ Լա-  
միելից, իսկ փոքր քույրս տասնուչորս տարեկան է:

— Միթե ձեր մայրը չի վախճնում, վոր ձեր մեծ  
քույրը կամ թեկուզ դուք այդ հասակում կարող եք  
հափշտակվել վորևէ մի քրիստոնյա յերիտասարդով:

Նայելին նկատելի շփոթվեց, նայեց յերեսիս զըն-  
տող հայացքով և հանկարծ, խոսքը փոխելով, հարցրեց.

— Ներեցե՞ք, ձեր կարինը վճր շարքումն է:

— Վարի:

— Ուրեմն, մեր շարքում, այսինքն իմ և Լամի-  
եյի կարծիքից վոչ հեռու:

— Կարծեմ:

— Ասացեք, խնդրեմ, գիշերները վոչ մի ձայն  
չի՞ք լսում:

— Ինչու չե, լսում եմ, ալիքների շիշփոցը, մե-  
քենայի խուլ թնդյունները, յերբեմն ել ձեր արծաթա-  
հնչյուն ծիծաղը:

— Յե՛վ ուրիշ վոչի՞նչ:

— Վոչինչ:

— Մի անգամ լավ ականջ դրեք, և կլսեք, միայն  
գիշերվա կիսից հետո, յերբ ամենքը քնած են:

— Որի՞նք, դուք ինձ հետաքրքրում եք:

— Ձեր դուստրն ինձ ասաց, վոր դուք վեպեր և  
թատրոնական յերկեր եք գրում, ուրեմն դուք շահիր  
եք և ձեզ կարելի յե խոստովանել ամեն բան: Դուք  
կարող եք դձալ ուրիշների վիշտը: Կամենում եք մի  
սրտաշարժ վեպի համար նյութ ունենալ: Ահա իմ գրծ-  
քախտ քույրը, Լամիյին... Ա՛հ, ներեցեք, նախաձաշի  
վերջին դանդը հնչեց: Մայրս կանհանդատանա յեթե  
սեղանին ուշանամ: Կպտամեմ Լամիյի մասին. ձեզ կա-  
րելի յե սլատմել:

Ասաց Նայելին ու թռչկոտելով վաղեց սեղանա-  
տուն, թողնելով ինձ տարակուսանքի մեջ... Սկսվեց  
մի թեթև հողմ և շուտով փոխվեց կատարյալ փոթորկի:  
Միջերկրականի հոյակապ նավը, վոր մինչև այդ ժա-  
մանակ թվում եր անդրդվելի, նախ կորցրեց իր հա-  
վասարակշռությունը, ապա դարձավ լսողալիք կատա-  
ղի ալիքներին, վորոնք շարտում էին նրան աջ ու  
ձախ՝ ինչպես կատուն մի կտոր բամբակ: Մեր ուղե-

կիցների մեծ մասը բռնակց ծովային հիվանդութեամբ: Նախաճաշի սեղանի քով, բացի նավապետից, իր ողնա-  
կանից ու բժշկից, մնացի յես, աղջիկս, Նայիլեն և մի  
քանի ճամբորդներ: Գիշերը փոթորիկը գաղաբեց, և  
առավոտյան մեր առջև բացվեց Միջերկրականի գեղեց-  
կադուշն ափերից մեկը:

Մաքրի անուշով ծովածոցն էր իր անառաղաբող  
բլուրներով և թավշյա արոտատեղիներով: Մեր շոգե-  
նավին անթել հեռագրով հրամայված էր գուրս բերել  
ծովածոցի աղմուկ խորասուզված մի գորանավ: Ան-  
միջապես նավաստիները գործի դիմեցին այն աննման  
յեռանդով, վոր միայն ծովային մարդկանց է հատուկ:  
Մարդու իրանի հաստութեամբ պարանը փաթաթեցին  
ազգմանավի շուրջը, և մի ժամ չանցած մեքենայի զո-  
րութեամբ նավը բարձրացավ ծովի յերեսը մեր չուռած-  
ների ուղեկցութեամբ:

Հասանք Ադալիա: Առաջին անգամ յերևացին  
Կոնիայի արաքներն իրենց դեղնագուշն մետաքսյա  
չալմաներով ու ճերմակ բաճկոններով: Ադալիան Անա-  
տոլիայի ծովային բանալին է: Այն ժամանակ նրան  
ժամանակավոր գրավել էին իտալացիները: Այստե-  
ղից նրանք ոգնում էին թուրք զորքերին ու չեթա-  
ներին, մատակարարելով նրանց պարեն ու ազգա-  
մթերք:

Յեզ ինչ վոր թուրքերն ստանում էին, տարա-  
ծում էին Կոնյա, Սնդարե, Սըլվազ, մինչև Երզրում  
ու Կովկաս: Այսպիսով, ուրիմն, քաղաքակիրթ Իտա-  
լիան մասնակցում էր ուղղակի Փոքր-Ասիայի ազգա-  
քնակութեան բնաջնջման գործում: Ի՞նչ էր Իտալիայի  
այդ յերկդիմի քաղաքականութեան գաղտնի նպատա-

կը: Շահել մուսուլման աշխարհի համակրանքը՝ իր դիրքըն Արևելքում ամբացնելու համար:

\* \* \*

Մեր ուղեկիցները թվում կար մի հույն որիորդ: Նա գիտեր սքանչելի նվագել դաշնամուրի վրա: Կար և մի սպանացի ընտանիք, բաղկացած ծնողներից ու չափահաս աղջիկներից: Նրանցից մեկը նույնպես գիտեր նվագել մեծ մասամբ արևելյան յեղանակների, ի միջի այլոց, և հայերեն յերգեր: Նավապետը ամեն անգամ, ճաշից հետո, մեկին կամ մյուսին թախանձանքով սախլում ևր նվագել: Յերբեմն նա կարողանում էր ստանալ և իմ աղջկա՝ Մարգարաթի համաձայնությունը յերգելու: Այսպիսով մենք գրիթի ամեն յերեկո ունեյինք նվագահանդես կամ համերգ:

Մի յերեկո ճաշից հետո սալոն յեկալ նայելին տաղին անգամ ձեռքում մի ջութակ:

— Ո՞հ, յես այդ չգիտեյի,— գոչեց ծերունի նավապետը: Նա մի յերաժշտասեր իտալացի յեր:

Թրքուհին ու հույն որիորդը սկսեցին ինչ-վոր նվագել: Ներս մտալ կամիյնն նիհար ուսերի վրա մի շալ և լուս նստեց սալոնի մի անկյունում: Նայելնյի խորհրդավոր խոսքերի ազդեցությամբ յես տաղին անգամ ուշադրություն դարձրի նրա վրա: Նա նստած էր սովորի մեջ և, կարծես, աշխատում էր աննկատելի մնալ: Մտայլ էր նրա քնքույշ դեմքը և գունատ: Նա հիշեցնում էր արմատից նոր պոկված մի ծաղկի, վոր, կարծես ասում էր. «Մի դիպչեք ինձ, յես վրէժսուն եմ, ինչպես թիթեռ, իմ ծուխի պես թափանցիկ թևակները կթափվեն ձեր մասնների հպումից»:

Նրա յերկնագոռչն աչերը հառած եյին դեպի ան-  
որոշ տարածություն: Կարելի չեր կարծիլ, վոր նա  
սկանջ եր գնում ջութակի և դաշնամուրի հնչուունե-  
րին: Բայց դիտող անքի համար պարզ եր, վոր նա չի  
լսում, ու նրա մտքերը թափառում են այլուր: Մերթ-  
քնդ մերթ նրա նիհար ուսերը թեթևակի ցնցվում եյին,  
ու յես հեռվից զգում եյի նրա հառաչանքները:

Նրա մայրը սալոնի մյուս անկյունից գաղտնի  
դիտում եր նրան: Նա պառկած եր սթոցի վրա արևել-  
յան հեղափոխութեան մեջ և շարունակ ծխում եր յե-  
գիպտական ընտիր սիգարները վոսկեղոծ գլանակով:

Յես մտանցա այդ անթառամ ձևեղեղուհուն, վորի  
մեջ կյանքն ավելի յեր խոսում քան իր յերեք աղջիկ-  
ների մեջ միասին վերցրած:

— Մանում, ներեցեք անհամեստութեանս,—ասա-  
ցի յես թուրքերեն,—յես նկատում եմ, վոր ձեր ավադ  
գետեր առողջութեանը շատ ել ամուր չի:

Տիկինը նայեց ինձ շեշտակի ու արտասանեց.

— Եֆենդիմ, դուք չեք սխալվում:

Ապա, ծխախոտի քուլան գլխից վեր արձակելով,  
ավելացրեց:

— Այո, Լամիյին շատ թույլ կազմվածք ունի,  
բայց հոգ չե, Յեգիպտոսում նա կը կազդուրվի ավանդ  
զորութեամբ:

— Անտարակույս, խանում, անտարակույս: Ասում  
են ջերմ կլիման տկար կազմվածքի կազդուրման ամե-  
նալավ դեղն է... Մակայն...

Տիկինը չթողեց, վոր խոսքս ավարտեմ և ասաց.

— Հավանում եք Նայիլեյի նվագը:

Զգալով, վոր նա չի ուզում շարունակել Լամիեյի մասին, յես մի փոքր շփոթվեցի ու պատասխանեցի.

— Ո՛հ, աննման ե նվագում, ձեր ազդիկն ուղղակի յերոժշտական տաղանդ ե. դուք կարող եք պարծենալ նրանով:

Յես կեղծում եյի, կամենալով շոյել նրա մայրական ինքնասիրությունը: Ո՛հ, քանի-քանի անգամ եմ յես այդպես կեղծել մայրերի առջև...

Մի վայրկյան հոգեկան դոհունակության ժպիտը պայծառացրեց թրքունու դեմքը: Յեղ միայն մի վայրկյան: Նա նորին նայեց Լամիեյի կողմը, նորին տըխրեց և ասաց.

— Յեթե լսեք Լամիեյի դաշնամուր նվագելը, ավելի կը՛խանանք: Իժըպտաբար, վերջին ամիսները նա դադարել և նվագել և յես վոչ մի կերպ չեմ կարողանում համոզել նրան դաշնամուրի կափարիչը բարձրացնելու...

Նվագը դադարեց, նվագողները բարձրաձայն ծիծաղելով, դուրս թռան սալոնից:

Լամիեն հանդարտիկ վտարի յելավ և սովերի պես, մեքենայաբար հետևեց նրանց:

Մայրն ինչ վոր շնջաց քովը նստած վորդուն: Պատանին վաղեց Լամիեյի յետևից:

Մի փոքր անցած յես ևս յելա տախտակամած: Լամիեն վաղվզում եր որիորդների հետ և նույնպես աղաղակում ու ծիծաղում, սակայն յես զգում եյի, վոր այդ բոլորը նա անում և մեքենայաբար և վոր նրա ծիծաղն արվեստական և: Շուտով նա անջատվեց խմբից և հեռացավ գեղի շոգենավի ցուղը: Պատանին քայլ առ քայլ հետևում եր նրան: Յես կարողա-

ցա վորսալ հարմար վայրկյան և, Նայիլեյին մենակ տեսնելով, ասացի.

— Որիորդ, մի մոռանաք ձեր խոստումը:

— Ի՞նչ խոստում:

— Լամիեյի մասին:

Նայիլեն մի վայրկյան տատանվեց, հետո մի վըճառական շարժումն անելով, արտասանեց.

— Պարոն, Լամիեյի պատմությունը սովորական է: Նա դժբախտ սիրո մի դո՛հ է:

— Սիրահարված է:

— Այո, և նրա սիրո առարկան մի քրիստոնյա յե:

— Ո՞վ է այդ յերջանիկ քրիստոնյան:

— Մեր տնային բժիշկը, մի իտալացի:

— Դուք ասացիք դժբախտ սիրո, ուրեմն բժիշկը չի սիրում ձեր քրոջը:

— Ընդհակառակը, նա ավելի յի սիրահարված, քան Լամիեյն:

— Կիտե այդ մասին ձեր մայրը:

— Այո, պարոն: Չեք կարող յերեակայել այն որը, յերբ նա այդ մասին լսեց Լամիեյի բերնից: Ինձ թվաց, վոր յեղճ կինը պիտի մեռնի սրտի պայթյունից: Նախ նա վազբի պես հարձակվեց Լամիեյի վրա: Հավատացեք, նա կխեղդեր քրոջս, յեթե յես ու Շայիդեն չդսպելինք նրան: Ո՛հ, պարոն, Լամիեյն քաջ աղջիկ է, մի նայեք նրա թույլությանը: Նա ասաց, «Անա, սպանիր ինձ, բայց մի զրկիր յերջանկությունից, միևնույն է, յես առանց իմ սիրեցյալի չեմ կարող ապրել և չեմ ապրի»: Այն ժամանակ, մայրս սկսեց անիծել նրան, հետո ընկավ թախտի վրա և ամբողջ որը հեկեկաց: Մյուս որը բժիշկն ըստ սովորության յեկավ

մեր ասողըութունը ասուզելու: Նա դալիս եր շարա-  
թը յերկու անգամ: Մայրս, առանց յերկար բացատրու-  
թյան, արտաքսեց նրան, ասելով. «Կորկի, պիղծ քրիս-  
տոնյա, ըս վտոններն. ազականում են իմ ասն շեմքը»: Ա՛հ, պարոն, ներեցեք մորս մուկամողութունը, չի՞  
վոր նա մի ազեա թրքուհի յի:

— Այո, բայց յես դարմանում եմ, վոր այդ մո-  
լեռանդ մուկուլմանուհին անային բժիշկ և ընտրել մի  
քրիստոնյայի:

— Նա ինքը չի ընտրել, այլ հայրս: Հանգուցյա-  
լը մորս չափ մուկուանդ չեր, բայց այդ, մեր ամբողջ  
կողու վրա չկա մահմեդական բժիշկ: Ավելացրեք և  
այն, վոր բժիշկի հայրը իմ հոր ամենաընտիր բարե-  
կամներից մեկն և յեղել:

— Այժմ վերտեղ և այդ իտալացին:

— Ռոզոսում:

— Յեղ Լամիյին այդ սրից չի՞ տեսնվում նրա հետ:

— Տեսնվել և մի քանի անգամ դադանի, իմ ու-  
նությամբ:

— Ուրեմն դուք դեմ չի՞ք, վոր ձեր քույրը սիրա-  
հարվել և մի քրիստոնյայի վրա:

— Ինչո՞ւ պիտի դեմ լինեմ: Պարոն, յես դեռ ան-  
չափահաս եմ, կյանքին անժանոթ, դուցե ազեա, բայց  
մի դրքում կարդացել եմ, վոր մարդկանց իսկական  
կրոնը սերն և:

Յես չկարողացա զսպել իմ հիացումը, լսելով մի  
դեռահաս թրքուհու բերնից այդ խոսքերը և գոչեցի.

— Որիսնդ, ասարիքով դրեթե մանուկ, լսելքով  
այդչափ հասուն, դուք սքանչելի յեք:

— Շնորհակալ եմ: Գիտե՞ք, յես Լամիյին չեյի

կարեկցիլ, յեթե նա իր ընտրութեան մեջ սխալված լինելու Բժիշկը հազվագյուտ մարդ է և կարող է յերջանկացնել իր սիրով յուրաքանչյուր մի կնոջ: Նա ծեր է, տղեա է, նա բարի և ազնիվ է: Ամբողջ կողին հարգում է նրան ու սիրում: Յեթե կամենում եք իմ կարծիքը գիտենալ, կարող եմ ասել, վոր նա շատ ու շատ բարձր է իմ ջրովից: Յեվ ահա յերկուսն էլ տանջվում են, և կարող եմ հաստատել, վոր բժիշկն ազնիվ է տանջվում, քան իմ քույրը: Յերևակայեցեք, մեր ընտանիքից դուրս վաճառելու որից նա վշտից հիվանդացավ: Այն, յերեք ամիս պառկած էր անկողնում: Յեւ ամեն որ տանում էյի նրան Լամիեյի նամակները: Մինչև բանալը նա համբուրում էր նամակները ու լայրա էր յերեխայի պես:

Յես հարցրի Նայելեյին, ճիշտ է արդյոք, վոր նրանք գնում են Յեզիպտոս զբոսանքի համար: Նայելին հեղնորեն ժպտաց:

— Մայրս ամենքին այդպես է ասում, քայց ինչ զբոսանք: Նա Լամիեյին տանում է Մսիր՝ այնտեղ թաղելու համար:

— Թաղելու,— կրկնեցի յես դարձացած:

— Այո, յես այդ թաղել եմ համարում,— հառաչեց Նայելին տխուր:— Թեղճ Լամիեյ: Մայրս վճռել է Մսիրում նրան ամուսնացնել մի փառայի հետ, վորը շատ հարուստ է և ունի մեծ գիրք Յեզիպտոսի սուլթանի մոտ:

— Լամիեյն զ՞տե այդ:

— Ի հարկի:

— Նա փառային տեսնլ է:

— Այո: Այս ամառ փառան Ռոդոսումն էր և մի

քանի անգամ յեղել ե մեր տանը: Նա Լամիեյին շատ  
ե հավանում և արգեն նրա ձեռը խնդրել և մորիցս:  
— Յերիտասարգ և, թե՛ ծեր այդ փաշան:

— Հիսուն տարեկան և, իսկ Լամիեյն 19 տարե-  
կան: Բայց տարիքը դեռ վնչինչ, գլխավորն այն սոս-  
կալի զգվանքն և, վոր զդում և Լամիեյն դեպի այդ  
փաշան: Վոչ, Լամիեյն յերբեք չի համաձայնվի դավա-  
ճանել իր սիրուն: Նա զժբախտ և:

— Յերևի Յեզիպտոսի փաշան ունի և մի ուրիշ  
կին, գուցե մի քանիսը:

Նայիլեն բարձրաձայն ծիծաղեց, ցույց տալով իր  
սքանչելի ատամները:

— Դուք կարծում եք, — ասաց նա, — ամեն մի մու-  
սուլման անպատճառ հարեմ պիտի ունենա: Վնչ, մո-  
սյո, այժմ միակնությունը հետդիտեալ տարածվում և  
մեր մեջ՝ յիվրոպական քաղաքակրթության շնորհիվ:  
Փաշան այրի յե, բայց խնդիրն այդ չե: Լամիեյն չի ու-  
զում և չի կարող նրա կինը դառնալ, չի կարող, չի  
կարող, չի կարող: Նա պաշտում և իր սիրեցյալին և  
պատրաստ և զոհվել նրա սիրո համար: Նա տանջվում  
և, ամեն գիշեր պարանոցիս փաթաթվելով, ժամերով  
չալիս և: Այս գիշեր ուշադրությամբ ականջ դրեք և  
կլսեք նրա հծկլաանքը: Մայրս գիտե այդ և վախենում  
և, վոր Լամիեյն ինքնասպանութուն գործի: Նա ինձ  
և Արդուլտին պատվիրել և հսկել Լամիեյին և ահա  
մենք հերթով հետևում ենք նրան քայլ առ քայլ:

Այդ պահին մոտեցավ մեզ Լամիեյն իր յեղբոր  
հետ:

— Նայիլե, — ասաց նա թույլ ձայնով, — յես հող-

նեցի, գնում եմ կարին, մայրիկին ասա, վոր գնացի քնելու:

— Որի՞նքդ, — դարձա յես նրան, — ձեր տարիքում ներելի չե այդպես կանուխ քնել:

— Յես սիրում եմ անկողնում կարգալ, իսկ քնել մի գիտե, — արտասանեց նա գլուխը յերեքելով:

Իմ փափագն եր քանի մի բողբոջ դրադեցնել թըր-գուհուն նրա հոգին մի փոքր ճանաչելու նպատակով: Իժրախտաբար հեռվից յերևաց նրա մոր կերպարանքը, վոր դանդաղ քայլերով մոտենում եր մեզ:

Յես կարողացա միայն ասել:

— Որի՞նքդ, կարգացեք բնությունը, չկա ավելի հետաքրքրական դիրք, քան նա: Տեսեք, ի՞նչ սքանչելի յերեկո յե, — այդ լայնածավալ ծոցը իբ մարգարայա մակյերեսով և այդ նոսր ամպերի մեջ լողացող լուսինը:

— Այո, սքանչելի յերեկո յե, — ասաց Լամիյն հառաչելով, — դուք ունեք իրավունք իմ անտարբերությունը պարսովելու: Բայց, մոսյո, մարդու կյանքում չինում են պահեր, յերբ մահը նրան թվում և պեղեց-կազույնը դեղեցիկներից: Բարի գիշեր: Նայիլե, դու կարող ես մնալ մոսյոյի հետ:

Ասաց Լամիյն և անլսելի քայլերով ստվերի պես չքացավ կիսախավաբի մեջ: Մայրը հետևեց նրան:

\* \* \*

Մոտենում ենք Կիպրոս կղզուն: Ահա յերևացին նրա չոր ու ցամաք ափերը, տեղ-տեղ ճերմակ, տեղ-տեղ մոխրագույն:

— Այդ ի՞նչ շինություններ են, — հարցնում եմ

յես մի հայ վարդապետի, վոր դնում էր Կիլիկիա այն-  
տեղ ինչ-վոր դպրոց բանալու՝ մի մեծահարուստ հայի  
նսիրած գրամեներով:

— Ասում են, Լեոն վեցերորդի շինել տված բեր-  
դերն են, տեսնում եք մինչև վորտեղ ե հասել հայ  
մարդու վտաքը,— պատասխանում ե վարդապետը ազ-  
գասիրական վողկորությամբ:

Զգիտեմ հասել ե, արդյոք, հայի վտաքը մինչև  
Կիպրոս, թե դա պատմական անասպիւններից մեկն ե.  
գիտեմ, վոր այդ կղզին հայի արնագինն ե անդլիացի-  
ներին տրված: Անցյալ դարի սուս-թուրքական պա-  
տերազմից հետո Անգլիան Բերլինի վեհաժողովում  
Թյուրքիային Ռուսաստանի պահանջների դեմ պաշտ-  
պանելով, ծովը նեանց հայկական կոչված դառը ե  
իբրև վարձ սասցամ Կիպրոսը Ղլատովոյ Թյուրքիայից:  
Մի ամբողջ յերկիր, վորի յերկայնությունը յերկու  
հարյուր, իսկ չայնությունը մոտ ութսուն կիլոմետր ե:

Կիպրոսը քարտեղի վրա ունի վողի գլխի ձև: Նրա  
կնճիթը ցցված ե դեպի Ալեքսանդրիտաի ծովածոցը,  
իսկ ծոծրակը նայում ե Կրեսե կղզին:

Մեր շոգինավը կանգ առավ Լիմնոսոս նավահան-  
գասի առջև—ափերից շատ հեռու: Ծովի յերեսին յերե-  
վացին դինու տակառների յերկայն շարքերը, պարան-  
ներիով իրարու միացրած: Ափից շոգինավ փոխադրելու  
սրամիտ միջոց. մի փոքրիկ մակույկ յերկու թիավար-  
ներիով քարշ ե տալիս իր յետևից հարյուրավոր տա-  
կառներ:

Հունվարի վերջն ե, բայց յիդանակն այնքան ջերմ  
ե, վոր մարդ առանց վերարկույի անգամ շոգում էր:  
Շոգինավը սուլեց ե շարժվեց: Ահա յերևացին Տավրոսի

լեռները, առջևի շարքը վարդագուշն, յետևինը ձյունա-  
պատ: Իրիկնադեմին մտանք Մերսինի լայնածավալ  
ծոցը: Շոգենավը կանգ առավ զարձայլ ամերից հեռու,  
և ավելի հեռու քան վորև և տեղ: Մերսինի ծոցը, շատ  
ընդարձակ լինելով, վորպես նավահանգիստ անբարե-  
կարգ է: Այդտեղ Միջերկրականը միշտ փոթորկալի յե:  
Մեր գալուց յերկու շաբաթ առաջ յեղել էր մի մեծ  
փոթորիկ, տասնուհինգ առապատավոր նավեր էյին  
ծովասուլյո յեղել, տանելով մի միլիոն վոսկու արժո-  
ղությամբ ապրանքներ:

Հետևյալ առավոտ Մերսինից յեկան մեր շոգե-  
նավը մի խուճբ հայեր և ինձ ու Մարգարիտին հրա-  
վիրեցին քաղաք: Գնացինք: Ճաշից առաջ մեկ ու կես  
ժամովա պտույտը քաղաքի միակ ոթոմորիով բավա-  
կան էր, վոր տեսնելինք Մերսինն իր շրջակայքով:

Մերսինը Ադանայի հետ կապված է Բաղդադի  
յերկաթուղու մի վոտտով, վոր ընդամենը վեց ժամովա  
ճամբա յե: Զմեռվա կեսն է, յեղանակը ամառային: Բա-  
ղաքը ձախ կողմից ու կոնակից շրջապատված է ըն-  
դարձակ այգիներով, վոր բարձրանում են մինչև լեռ-  
նալանջը և կազմում մի զմայլելի պանորամ: Միլիո-  
նավոր ծառերը տքնում են արդեն հասունացած նա-  
րինջի, կիտրոնի, փոթթուզալի ու մանդարինի ծանրու-  
թյան տակ: Դեղնագուշն գնդակների այդ ովկիսանոսը  
կանաչ տերևների մեջ վոսկե խնձորների առասպելա-  
կան դրախտավայրն է հիշեցնում: Ողը տողորված է  
արբեցուցիչ բուրմուռնքով: Այս ու այնտեղ յերևում են  
ցիրուցան ձիթենիներ և բանանի ծառեր: Տների ցան-  
կապատերը կակտուսից են, իսկ պարտեզները պճնված  
բազմատեսակ ծաղիկներով:

Մասնք այգիներից մեկը: Թյուրք տերը մեզ ընդունեց արևելյան հյուրասիրությամբ: Զարմանալիս իրալիք են առհասարակ թյուրքերը ամենուրեք: Կարծես իրանց մոր արգանդում բնությունից են ստացել այդ կիրթ ձևերը և այդ դրավիչ ժպիտները: Այգիտիրոջ կինը Մարգարիտին ընծայեց յերկու սքանչելի ճյուղեր, մեկը նարինջի, մյուսը կիտրոնի: Յես հաճույքով նրա ձեռքի մեջ սեղմեցի մի քանի թյուրքական լիրաներ: Զինադադարից հետո վեց յոթ ամսվա ընթացքում յերկրի առևտուրը ութսուն տոկոսով անցել էր՝ ընդամենը յոթ հարյուր ընամանիքներից բաղկացած հայ ազգաբնակչության ձեռքը: Շրջակա դաշտերը հետզհետե թյուրքերից անցնում են հայերի ձեռքը: Ֆրանսիական իշխանությունը, վոր գրավել էր յերկիրը, նույն որերին արգելեց թյուրքերին իրանց կալվածները վաճառել հայերին:

— Փուլթ չե, — ասաց ինձ ուղեկցող հայերից մեկը, վոր ինքը նույնպես գնել էր մի քանի կալվածքներ, — վորքան կուղեն թող արգելեն, յերկիրը վաղ թե ուշ մերն և լինելու, վոչ վոք չի կարող մեզ այստեղից հեռացնել:

Այսպես եյին հավատացրել այդ միամիտ մարդկանց Պարիզում նստած հայ տղիվրոմասնիկը...

Վերադառնալով շողենավ, լսեցի, վոր կամիյեն հիվանդացել և: Թշվառ աղջիկ:

Մերսինից մինչև Ալեքսանդրիտա, վոր տասնըյերկու ժամվա ճամբա յե, անցանք գիշերով: Առավոտյան կանուխ յերևաց Տավրոսի լեռնաշղթան իր հեռավոր ճյուղնապատ լեռներով. դեպի աջ ցցվեցին Լիրանանի լեռները: Նրանք տարածվում են մինչև Բեյ-

զուլթ: Մերսին և Ալեքսանդրեստա -- յերկուսն ել հալա-  
սար իրավունքով կարող են համարվել Կիլիկիայի ծո-  
վային բանալի: Սակայն կա մի կարևոր տարբերու-  
թյուն նրանց մեջ. իբրև նավահանգիստ Ալեքսանդրես-  
տան ավելի ապահով է իր դիրքով: Իս մի ծովածոց է,  
աջ ու ձախ կողմերից բնական պարիսպներով պատ-  
սպարված: Նովերն այնտեղ միանգամայն ապահով են  
միջերկրականի վոթորիկներից:

Ալեքսանդրեստա քաղաքը տեղավորված է ցածր  
լեռների ստորոտների վրա: Նա շարված է ցորենի՝  
գարիի ու հաճառի արտերով և դրանք են միայն, վոր  
քիչ թե շատ կենդանություն են տալիս բուսականու-  
թյունից զուրկ չոր ու ցամաք շրջակայքին: Ալեքսանդ-  
րեստը չի ժողուում ճամբորդին, չի դրավում նրան այն-  
պես, ինչպես Մերսինն իր զմայլելի այգիներով ու  
ծաղկանոցներով:

Յեղանակը ցրտեց: Ձյունապատ լեռներից փչեց  
անախորժ հողմ: Տախտակամածի վրա վոչ վոք չմնաց:  
Նույնիսկ սալոնը դատարկ է, ամենքը թագնվել են  
խրանց կարխններում:

Կիպրոսից դեն՝ մինչև Բեյրութ յերկիրը Ֆրան-  
սիացիներն են գրավել, այնուհետև սկսվում է անգ-  
լիական զրավումը մինչև Յեզիպոս: Մերսինից դեն  
թյուրքերը հետզհետե տեղ են տալիս արաբներին: Ա-  
լեքսանդրեստից մի փոքր հեռու արդեն Սյուրիան է  
սկսվում: Վորջան ամայի են Միջերկրականի թյուր-  
քական ափերը, նույնքան խտաբնակ են արաբական  
ափերը: Այստեղ գյուղերն ու ավանները կաղմում են  
Ալեքսանդրեստից մինչև Բեյրութ մի անընդհատ շղ-  
թա: Արաբների աները մեծ մասամբ հողաշին են, ի

հարկ ե, տափակ տանիքներով: Նրանք փոքր են և հեռավրց մըջնաբների տպավորութիւնն են գործում: Բուսականութիւնն գրեթէ բոլորովին չկա, թե բնական և թե արվեստական: Մովսիսյա բնակչութիւնը բազմացած է մեծ մասամբ ֆելլահներէց, վորոնք կատարում են շոգենավերէց փերը և փերից շոգենավերը արանքներ տեղափոխելու տաժանակիր աշխատանքը:

Յես չեմ կարող յերեակայել ավելի հարստահարված և ավելի դաժան աշխատանք կրող մի ժողովուրդ: Ֆելահն ստանում է որական 3-4 պիաստր, նրա սընունդն և յեգիպտացորենի հացը: Աշխատում են աբեգալի ծագումից սկսած մինչև նրա մայր մանկը իսկ ձմեռը՝ մինչև ուշ գիշեր: Յեվ ջնայելով այս բոլորին, ֆելահն ամենաուրախ և ամենազվարթ մշակն է՝ գուցե ամբողջ յերկրագնդի վրա: Ամենածանր աշխատանքը կատարելիս անգամ նա շարունակ յերգում է ծիծաղում, կատակներ անում: Հաճախ ֆելլահները նավակների վրա դործի միջոցին իրարու հետ կոպամարտելով ընդհանուր քրքիջների տակ ընկնում են ծովի մեջ: Իս նրանց սովորական զբոսանքն է: Զուրն ընկնողներն յերբեք չեն բարկանում: Իռւրս գալով ծովից նրանք անմիջապես դիմում են գործի, և մի քանի բոպե անցած նրանց վողորմելի ցնցոտիները ցամաքում ու չորանում են արեգակի կիզիչ ճառագայթների տակ:

Մանուկ ու պատանի ֆելլահների համար ծովը խաղալիք է և խաղավայր: Նրանք նավակների հետ անմիջապես շրջապատում են շոգենավերը և շնաձկերի ճարպիկութեամբ լողալով, աղերսալի հայացքով նայում են վարից վեր, սպասելով, վոր ճամբորդները ծովը

նետեն պղնձյա կամ արծաթյա դրամներ, չենց վոր  
 դրամը ձգվում է, պատանիները չքանում են սուղվելով  
 ծովի հատակը: Բոպե չանցած նրանք ծովի յերեսին են:  
 Այս, վոր ամենաճարպիկն է յերկը, դուրս է գալիս դրա-  
 մը իր զարմանալի ճերմակ ատամների մեջ բռնած և  
 յերջանկութեան ժպտան յերեսին:

Գեղեցիկ և արարներ յպղնձագույն մարմնի կազ-  
 մը: Նրանք մի-մի կենդանի արձաններ են: Նրանք  
 դուրսաթեք են ինչպես ոձ և ճկուն ինչպես կապիկ:  
 Նիհար են շատ սակավ բացառութեամբ, բայց վոչ պար-  
 սիկների պես թույլ ու սակավարյուն: Նրանց դիմա-  
 դներն ունեն քաղաքակիրթ նրբութուն, իսկ աչքերի  
 արտահայտութեանը գերծ և վայրագութեանից: Շո-  
 քենավերի պողպատյա պարանների վրա նրանք մա-  
 ջրըցում են կապիկների ճարպիկութեամբ և վայր սա-  
 ուում մկնների արագութեամբ: Իրանց փխրուն նավակ-  
 ների վրա նրանք նույնն են, ինչպես ցամաքի արար-  
 ները իրենց կատաղի նժույգների վրա: Գազազած ա-  
 իքների դեմ նրանք կուլում են անսասան հանդգնու-  
 թեամբ և նրանց պղնձյա բազուկները յերբեք չեն հոգ-  
 ուում թիավարելուց:

Յերբեմն կատաղած ծովը նրանց առջև բաց է ա-  
 ուում մթին անդունդներ, ուր կարծես, պիտի չքանան,  
 բայց վայրկենական մի սուղում, և ահա նորեն ալիք-  
 ների փրփրալի բաշերի վրա յին: Յեղ լսում ես հեռ-  
 ից անասաւոր մեղամաղձատ յերգերն ու հիանում ես  
 արդե՞յակի տոկոնութեամբ՝ կյանքի պայքարում:

Հասանք Տրիպոլի, մնացինք մի քանի ժամ: Յե-  
 անակը նորին տաքացավ:

Գնում ենք Բեյրութ:

\* \* \*

Յերկու որ Լամիյին հիվանդ էր, իսկ Նայիլեն ու Ֆայիդեն շատ սակավ էյին յերևում տախտակամածի վրա:

— Տիկին, — դարձա յես նրանց մորը, վորը սալոնում շարունակ ծխում էր ու յերազում, — կարող եմ այցելել հիվանդին:

— Եվեթ, եֆենդիմ, — ասաց նա, գլուխը դանդադորեն շարժելով, — ինքս ուզում էյի ձեզ խնդրել, վոր մի վոքը հայրաբար դրազեցնենք Լամիյին: Կարևորում նա շատ է ձանձրանում:

Ապա, դառնալով իր վորդուն, պատվիրեց.

— Արդուսն, դնա Լամիյին զգուշացրու, վոր եֆենդին գալիս է իրան տեսնելու:

Իջա վարու Լամիյին նստած էր անկողնի մեջ և Նայիլեյի հետ սքամբիլ էր խաղում: Նա ինձ ընդունեց մեղմ ու սիրալիբ ժպիտն աշնանային արեխ պեա գունասա դեմքի վրա: Նա արդեն ընտելացել էր իմ կատակներին և սիրում էր նրանց, ուստի յես ասացի.

— Ո՛հ, յերես առած կոկետուհի, դուք գիտնալով, վոր սիրում եմ ձեզ, վճռել եք ինձ պատժել ձեր կեղծ հիվանդությամբ:

— Բժիշկը պատվիրել է մի քանի որ դուրս չգալ կարինից: Նստեցեք, շատ ուրախ եմ ձեր գալուն:

Յես նստեցի նրա քովև ու սկսեցի իմ սովորական կատակներով դրազեցնել նրան: Նայիլեն ինձ պաշտպանեց իր առողջ քրքիջներով: Վաչ մի խոսք, վոչ մի ակնարկ Լամիյի վշտի մասին: Գիտեյի, վոր նա ան-

սահման դադարնապահ եւ և կարող եւ վշտանալ, յիժե գուշակե, վոր յես գիտեմ իր սրախ դադարնիքը:

Մի վայրկյան միայն կատակներս ընդմիջելով ասացի.

— Ա՛հ, լավ հիշեցի, ասացեք, Լամիյի, ի՞նչ էյին նշանակում ձեր այն որվա խոսքերը. «Մարդու կյանքում լինում են պահեր, յերբ մահը թվում եւ գեղեցկագուշնը գեղեցիկներնը»: Հանուն արևի յես ձեռ խնդրում եմ այսուհետև չարտասանել այդ տեսակ խոսքեր: Յերեխան, դուք դեռ կյանքի շեմքի վրա յեք:

Լամիյին նայեց աչքերիս խորունկ հայացքով և իր թույլ ու հոգնած ձայնով արտասանեց.

— Յերբ կյանքի շեմքի վրա դեռ վտաք չդրած, տեսնում ես նրա դեմքի այլանդակ ծամածուռթյունը, ի՞նչպես չզգվես ու յերես չդարձնես նրանից:

— Բայց յես ել հմ յեղել քեզ պես յերեխա, յես ել իմ ծաղիկ հասակում տեսել եմ կյանքի ծամածուռթյունները և շատ անգամ, բայց արհամարհել եմ: Յես կոխկրտել եմ իմ ճամբի վրա բուսած ոճերն ու կարիճները և հասել եմ այս տարիքիս, ճիշտ ե մի քիչ շարժումված, բայց վոչ հուսալքված: Տեսնում եք, արես արդեն թեքվել ե դեպի իր մուռքը և դարձյալ ապրելու փափագը չի թուլացել իմ մեջ...

— Նախանձում եմ ձեզ, սակայն դուք տղամարդ եք, իսկ յես կին, բնությունը մեզ ստեղծել ե տկար ու անզոր:

— Բայց նույն բնությունը ձեզ տվել ե մի գորավոր գինք, վոր մենք չունենք:

— Վրն ե այդ դեմքը:

— Հեղությունը:

— Դուք ֆաթալիսա եք:

— Յեթի կամենաք այո: Յես հավատում եմ ճակատագրի զորութեանը: Լամիյե, հեղութեանը ավելի զորավոր ե քան ըմբոստութեանը: Հավատացեք, այն, ինչ վոր այսօր ձեզ թվում ե վողրալի ու հուսահատահան, վաղը կարող ե թվալ ծիծաղելի:

— Դուք կարծում եք:

— Համոզված եմ:

— Լամիյեն հառաչեց: Նա այլևս վոչինչ չասաց: Յես անհարմար համարեցի շարունակել նույն ուղղութեամբ: Իմ ջերմ փափազն եր հաշտեցնել կյանքի հետ այդ փխրուն եյակին, վորի յերկրային պոյութեանն ինձ յերազ եր թվում: Յես զգացի, վոր իմ առաջին փորձն անհաջող անցավ: Յես նորին գիմեցի իմ կատակների ոգնութեան և կարողացա մի ժամ Լամիյին մոռացնել տալ իր մաշող վիշտը:

Ներս մտավ այրին և տեսնելով Լամիյի ժամանակավոր զվարթութեանը, ասաց.

— Այ այդպես ե, եֆենդիմ, յերբ ուրիշների հետ ե խոսում զվարճանում ե, յերբ ինձ հետ ե, խոսել չի լինում:

Այդ վայրկյանին յես ամբողջ հողովս ատեցի այդ կնոջը:

\* \* \*

Բեյրութը Միրիայի մայրաքաղաքն ե և առևտրական կենտրոն: Բաղդատի յերկաթուղու հետ կապված ե մի կարճ ճյուղով: Նա ունի ավելի քան հարյուր հիսուն հազար բնակիչներ, վորոնց միայն մի փոքրիկ մասն ե քրիստոնեյա:

Անձրևային յեղանակը մեղ չխանգարեց կառքով յերկու յերեք ժամ պատեիլ այդ հետաքրքրական քաղաքը և սքանչանալ նրա գունազեղ տների արաբական, ճարտարապետությամբ: Լավագույն շինությունները ծովափի վրա յեն և գրեթե բոլորը փողոցից անշատված նարինջի, կիտրոնի, նռնինների պարտեզներով և պատուպարված կակտուսի ցանկապատով:

Տոն որ եր: Անգործ արարներն իրենց ճերմակ շալմաներով և լայն ու յերկայն զգեստներով զարդարում եյին փողոցների անկյուններն ու սրճարանները և ողն աղմուկով իրենց կոկորդային բարբառով, վոր չի կարելիլ ասել, թե յերաժշտական ե:

Այրի թրքուհին ուշադրությունս դարձրիլ եք արարների մի սովորության վրա, վոր յես ստուգեցի մի ճաշարանում: Իրարու հանդիպելիս նրանք միմյանց ձեռը սեղմում են զույգ ձեռներով: Յեթե բարեկամներ են, մինչև տեսակցության վերջը ձեռները չեն բաժանում, իսկ հրաժեշտի պահին յուրաքանչյուրը թեքվում և և իր աջը համբուրում. դա բարեկամական սիրտ սովորական արտահայտությունն է:

Առհասարակ արարների արտաքին նխառ ու կացը կիրթ է: Զարմանալի հպարտ ու հանդիսավոր են նրանց քայլվածքն ու շարժումները: Կարծես, գերասաններ են բնմի վրա: Այդ հանդիսավորությունը մի տեսակ ցուցադրական շուք են տալիս նրանց գույնզգույն զգեստը և ճերմակ վերաբերուն: Նրանք խոսում են բարձրաձայն, առանց կոպիտ շարժումների: Հիանալի յև արաբ ձիավորը իր ազգային զգեստով, մանավանդ յերբ արշավում և անսպասում: Գեղեցիկ

նժույզը, դարդարված թամբը և հարուստ արծաթապատ դենքը նրա հպարտություններն են:

Մի հրապարակի վրա տեսա հետևյալ խաղը: Գետնի վրա շրջանաձև ծալապատիկ նստած էյին 10-12 արարներ՝ ըստ յերևույթին բանվոր դասակարգից: Մեջտեղ ընկած էր բազուկի հաստությամբ մի յերկար պարան: Յուրաքանչյուրը խաղացողներից գետին երձգում դեղնագույն փայտի թե մետաղի չորս կտորներ: Մյուսները նայում էյին, թե ինչ ձևով են ընկել կտորները և վորոշում ձգողը տարավ խաղը թե վոչ: Նա վոր տարվում էր, հեղությամբ պարզում էր իր դոյգ՝ ձեռները հորիզոնաձև և ամբը վեր: Հակառակորդը վերցնում էր պարանը և իր ամբողջ ուժով զարկում էր նրա ձեռներին: Մի անգամ հարվածների թիվը յես համրեցի մինչև վաթսուս: Թշվառ մարդու ձեռները կարմրեցին, հետո կապտեցին և ուռան: Նա սկսեց ցավից կծկվել, նրա դեմքը գունատվեց, ազավաղվեց, բայց ժպիտը չհուացավ յերեսից, խումբը հրճվում էր բարձրաձայն ծիծաղելով և զարկողին խրախուսելով:

Ինյրութից մինչև կայֆա յեղանակը հիանալի յերձոյը հանդարտ:

Համիյեն առողջացել էր: Նայիլեն ու Ֆայիյեն թռչկոտում էյին իրենց հնչյուն ծիծաղով լեցնելով սալոնը: Հույն որիորդը շարունակ նվագում էր: Ամենքն ուրախ տրամադրության մեջ էյին: Մոտենում էյինք Յեզիպոսին:

Կայֆայից մինչև Յեսֆֆա ունեցանք փոթորիկ, վոր տևեց ամբողջ որը: Հետևյալ որը փոթորիկը դադարեց, յերբ մոտեցանք Պորտ-Սայիդին: Գիշերն անցուցինք նավահանգստում, ուսկից սկսվում է Սվեդի

հռչակավոր ջրանցքը, վոր միացնում է Միջերկրա-  
կանը Գարմիր ծովի հետ: Մի գմայլիլի պանորամ է  
ներկայացնում նավահանգիստը դիշերվա լուսերով  
Դա մի յերկրորդ Վենետիկ է և և կարող եմ պսել ավե-  
լի գեղեցիկ իր հսկայական նավերի անվերջ յերթեկոյ-  
ու անթիվ շոգեմակույկների գույնզգույն լապտերնե-  
րով ու մանավանդ իր վիթխարի պրոթեկտորներով  
վորոնք լույս են ձգում ջրանցքի վրա ավելի քան 20  
կիլոմետր տարածությամբ:

Տասնըւյոթ որ ու դիշեր Միջերկրականի ամբողջ  
յերկայնությունը կտրելով, 19-րդ որը հասանք Սլեք-  
սանդրիս և մտանք փարավոնների աշխարհը:

Լամիեյի մայրը փափաղ հայտնեց իջևանել մեզ  
մոտ՝ միևնույն հյուրանոցում...

1922 թ. սեպտեմբեր

Փարիզ

Յ Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ո Ւ Մ

Ինձ ասել եյին, վոր, չնայած ձմեռվա կեսին, Ալեքսանդրիա մտնելուս պես ստիպված պիտի լինեմ վերարկուս դին ձգել: Այդպես չեղավ. մառախուղ, անձրև, թափանցող ցուրտ. ահա ինչ տեսա առաջին որերը: Ծղմարիա և ամհնքը պնդում եյին, վոր դա մի բացառիկ ձմեռ և Յեզրպոտոսի համար, բայց չեմ կարծում, վոր այդ բացառութունը հատկապես ինձ համար եր պատրաստված: Անտարակույս յեղել են և ուրիշ նման ձմեռներ:

Մի քանի պարտավորական այցելութուններ և այնուհետև յես այլևս իմ ժամանակի տերն եյի: Ստացա հրավեր կահիրե դնալու, բայց նախ պետք և քիչ թե շատ ծանոթանալ Ալեքսանդրիային:

Գեղեցիկ և կատարյալ յեվրոպական մի ծովափնայա քաղաք, շքեղ հոյակապ տներով, լայն, հարթ և հարմար սալահատակված փողոցներով: Սակայն քաղաքի միայն ծովափնայա մասն և այդպես, մյուս մասերը խորին Ասիա, նեղ ու կեղտոտ պողոտաներով, նարխուլ տներով: Մի տարրերինակ հակապատկեր ես նկատում, տեսնելով քաղաքի յեվրոպական արվարձանում արար կանանց իրենց ճերմակ չադրաններով, փակ սեղաններով, մերկ սրունքներով ու մեռադյա զթնոցներով: Ա՛հ, այդ թթնոցները, չկարողացա տեսնել, թե

արաբուհիների քիթն ինչ ձև ունի: Սրա փոխարին  
հիացա նրանց մարմնի վերին աստիճանի կանոնավոր  
կազմով և հավասարաչափությամբ: Յեզիպտուհին ա  
ռանց բացառության բարձրահասակ է, հաղթանդամ  
Ֆիզիքայնս զորեզ: Յուրաքանչյուր մի կնոջ մեջ մի  
հլեռպատրա յես տեսնում և թվում է, վոր բավական  
է նրա մի հայացքը և պիտի անմիջապես համիշտակ  
վես ու չոքես նրա առջև:

Զարմանալի ույժ ունեն արաբ բանվորուհու գը  
լուխն ու պարանոցը: Առանց մազաչափ ընկճվելու  
արաբուհին յերբեմն իր գլխի վրա տանում է 70-80  
կիլոգրամ ծանրություն, միշտ բարձրաձայն խոսելով  
ծիծաղելով ու զվարճանալով:

Զավանեցի յես արաբական լեզուն գոնե այնպես  
ինչպես խոսում է նա փողոցներում ու սրճարաննե  
րում: Այդ լեզուն այնքան ռնգային հնչյուններ ունի,  
վոր յերբեմն թվում է, թի գորտային կոկոսոց ես լս  
սում: Ըստ յերևույթին արաբներն այնքան դանդա  
ղաշարժ ու պզիրզ չեն, վորքան մյուս արևելցիները  
Գոնե, նայելով նրանց քայլվածքին, խոսելու յեղանա  
կին, զգում ես, վոր մուսուլման ազգերի մեջ ամենա  
աշխույժ տարրն արաբն է և սկսում ես կասկածել  
մյուս մյուսուլմանների ապագայի մասին:

Արաբ տղամարդը նույնչափ պարթև ու առողջ է,  
վորչափ արաբուհին: Իր յերկայն ու լայնաքղանց ըզ  
գեստի շնորհիվ, նա բնականից ավելի բարձրահա  
սակ է թվում:

Սրճարանները միշտ լեցուն են: Նարգիլեն այս  
տեղ ևս ունի նույն հարգանքը, ինչ վոր Պոլսում և  
Զմյուռնիայում: Զգիտեմ վորքան ճիշտ է, ինձ առա-

ցին, վոր Յեզիպտոսի արաքները չունեն միջին բարեկեցութեան դասակարգ. մեծամասնութեանը բաղկացած է Ֆելլաներից և առհասարակ չքավոր բանվորներից, իսկ յերկրի անշարժ և շարժական հարստութեանը մի շնչին փոքրամասնութեան ձեռքումն է:

— Կըկամենայի՞ք, արդոք, տեսնել իմ ազգայնական մեծահարուստ մի արարի տունը և ծանոթանալ նրա նիստ ու կացին, — դարձավ մեզ մի որ Լամիյեյէ մայրը, վոր ամեն որ իր դավակների հետ գալիս էր մեզ այցելութեան:

— Ուրախութեամբ, — ասացինք յես ու աղջիկս: Հետեյալ որը Ռամլեյումն կ'իյնք, վոր քաղաքի ամենահարուստ արվարձանն է, ի՞նչ շքեղ ապարանք: Մի սքանչելի պարտիզի մեջ մեզ ընդունեցին չորս չափահաս աղջիկներ և մի ղեղեցիկ յերիտասարդ՝ սաթի պես սև ու պսպղուն աչքերով: Մեծահարուստ տան տիրոջ դավակներն էյին: Մեզ հրավիրեցին յեվրոպական վոճով ու ճաշակով կահավորված մի ընդարձակ սալոն, ուր բացի գորգերից վոչինչ չկար արարական: Յեվրոպական յերեսց և ամբողջ ընտանիքի նիստ ու կացը, սկսած մեծերից մինչև փոքրերը: Մինչև անգամ մատուցված սուրճը արարական չեր, այլ ֆրանսիական: Ամենքը խոսում էյին մաքուր ֆրանսերեն և պարզ եր, վոր յեվրոպական կուլտուրայի յուրացումը մի տեսակ հպարտութեան էր իրենց համար: Հետագայում յես յեղա և ուրիշ մի քանի ընտանիքներում: Միևնույն յեվրոպականութեանը, թե Այեք-սանդրիայում և թե Կահիրում: Ինձ ասացին, վոր իրենց ազգային ավանդութեաններն ու նիստ ու կացը պահպանող արաքներն ընդհանրապես խուսափում են

քրիստոնյաների ծանոթությունից և հաղվագյուտ դեպքերու մեջ են նրանց ընդունում իրենց ընտանիքները:

Հրավիրվեցի մի հայկական հասարակական յերեկույթի, վոր կազմակերպված եր գաղթական վորքերի ոգտին: Գնացի իմ վաղեմի բարեկամ ուսուսանայ Հովհաննես Մութաֆյանի հետ: Ընդարձակ սրահը լեցուն եր ըսգմությամբ: Բեմ յելավ մի պարոն և ասաց, թե և ինքը պարտաված և շատ կարևոր գործերով, բայց վորովհետև շատ և սիրում ազգը, հանձն և առել յերեկույթը նախագահել:

— Ո՞վ և այդ մարդը, — հարցրի յես ուղեկցիս:—

— Մի հարստացած գաղնակցական:

— Ինչպիսի և հարստացել:

— Իբր թե փաստաբանությամբ:

Սկսեց նախագահն իր ճառը սովակալի հայհոյանքներով յիվրոպական պետությունների հասցեյին: Նա ասաց, աղադակելով, թե յեվրոպան հիմար և, վոր խնայում և թյուրքերին և բնաջինջ չի անում նրանց: Աուգիտորիան ծափահարեց հոկտորին և նա հուզված ու քրտնած նստեց նախագահական բաղկաթուռի վրա, ձգելով մեր ոթյակի կողմը մի հաղթական հայացք:

Յերկրորդ մի հոկտոր ուսմկավար եր: Նա խոսեց ավելի հանգիստ ու համեստ: Նրան և ծափահարեցին: Յերեկույթը վերջացավ նվագածությամբ և յերգեցողությամբ: Ինձ համար հետաքրքրական եր դիտել սրահի հասարակությունը և տեսնել, թե վորքան հայը ընդունակ և յուրացնելու յեվրոպական նիստն ու կացը: Չե վոր այդ ըսգմությունը բաղկացած եր Փոքր Ասիայի և Կիլիկիայի գյուղացի գաղթականներից: Նրա արտաքինը վաղուց արդեն յիվրոպական և, բայց հո-

դին տակավին դեզերում և մայր հայրենիքում և այդ  
 յերևում և նրա դեմքի արտահայտությունից ու յեր-  
 կարատև հառաչանքներից: Տխուր ու մտադրադլրջու-  
 թյամբ նա լսում և յուրաքանչյուր հեծտորի և յուրա-  
 քանչյուր մի յերգ և բոլորին ծափահարում, և ով ա-  
 վելի բարձր և բարբառում, նա և զբավում ամենա-  
 շերմ ծափահարությունները...

Յեզիպտահայր յեռանդուն և, աշխատասեր, լրջ-  
 միտ, ինչպես ամենուրեք բոլոր գաղթական թրքահա-  
 յերը: Ինձ թվում և, վոր աշխարհի յերեսին վոչ մի ցեղ  
 այնքան ընդունակ չե արագ կարգավորելու իր նյու-  
 թական վիճակը ոտար յերկնքիսակ, վորքան հայը:  
 Այս և պատճառը վոր նա գաղթելուց չի վախենում և  
 իր բնակավայրից հեռանում և վոչ առանձին գժվարու-  
 թյամբ:

Իմ այցելության ժամանակ, այն և 1920 թվա-  
 կանին, յեզիպտահայությունը բաղկացած եր վոչ ա-  
 վելի քան 20.000 հոգուց: Այժմ, Կիլիկիան պարպվե-  
 լուց հետո, այդ թիվը հասնում և մինչև 40.000-ի:  
 Ջբաղվում են նրանք գլխավորապես վաճառականու-  
 թյամբ, կային և բաղմաթիվ արհեստավորներ: Իմ ժա-  
 մանակ բանվորների թիվը շատ փոքր եր, հավանական  
 և, վոր ներկայումս նրանք կազմում են գաղութի մե-  
 ծամասնությունը:

Հայերի վաճառականության գլխավոր առարկա-  
 ներն են ծխախոտն ու բամբակը: Յեզիպտոսի ծխա-  
 խոտի արդյունաբերությունը յերեք քառորդով հայերի  
 ձեռքումն և, իսկ բամբակի արդյունաբերության մեջ  
 նրանք տակավին զիչում են արարներին, հույներին  
 և հրեյաներին:

Մտտավորապես յեզրիպտահայր առաջադիմում ե  
 այնչափ, վորչափ հանգամանքները թույլ են տալիս:  
 Հայրենիքից բերած նրա ըարոյական պատկերը գուցե  
 մնար անտղարտ, յեթե գաղութը պառակտված չլիներ  
 կուսակցություններով: Դաշնակցական, հնչակյան, ռամ-  
 կավար իրարու հետ մրցելով, բավականաչափ ապա-  
 կաննել են յեզրիպտահայի բարոյականը: Թեև իմ ժա-  
 մանակ այդ մրցումը այնքան կատաղի չի, վորքան  
 այժմ, ըայց և այնպես ամեն կերպ աղճատում եյին  
 հայի հոգին: Հրատարակվում եյին յերկու լրագիրներ,  
 մեկը Կահիրում «Հուսարբեր» անունով, դաշնակցական  
 ուղղությամբ, մյուսը Ալեքսանդրիայում «Արև» անու-  
 նով ռամկավար ուղղությամբ: Յե՛վ յերկու խմբակների  
 մրցումը յերբևմն հասնում եր մինչև փողոցային բը-  
 ոռնցքահարության:

Ալեքսանդրիայից մինչև Կահիրեի հինգ ժամվա ճամ-  
 բա յե, գեղեցիկ արդավանդ դաշտերով, վորոնք վոռոգ-  
 վում են Նեղոսի վարարման ժամանակ: Ինչ սիրուն ե  
 անապատի այս լայնածավալ ոռոգիսն իր մեղմ բուսա-  
 կանությամբ, դալարազարդ դաշտերով, մանավանդ իր  
 բարձրագագաթ արմավենիներով:

Կահիրեյի առաջնակարգ պանդոկներից մեկում  
 մեզ համար պահված եյին յերկու լուսառատ և ընդար-  
 ձակ սենյակներ:

Մի քանի պարտավորական այցերից և փոխայ-  
 ցերից հետո շտապեցինք դեպի հոչակավոր բուրգերն  
 ու սֆինքսը: Մեզ ուղեկցում եր մի համակրելի յերի-  
 տասարդ, վորի անունը դժբախտաբար մոռացել եմ:  
 Իմ արամաղրությունն առաջին այցիս մի փոքր հեղա-  
 շրջվեց: Յես ավելի եյի սպասում բուրգերի տպավո-

բությունից, քան ստացա և գուցե ավելի ստանայի, յեթե միտքս չթունավորվեր մի պատմական ճշմարտությամբ, այն է, վոր միայն Ռամզես յերկրորդի բուրգի վրա տասնյակ տարիներ տաժանակիր աշխատանք եկրել 100.000 մարդ, վորոնցից 30.000-ը զոհվել են մեծ փարավոնի իշխանական քմահաճույքին: Հետևանքը 138 մետր բարձրությամբ մի հոյակաօլ կոթող՝ թեև սքանչելի իր վեհությամբ ու գեղեցկությամբ, բայց վողբերգական իր ճակատագրով: Սֆինքսը: Դժվար է բառերով արտահայտել նրա շքեղությունը: Միայն ավագ, նրա յերեսի մի մասը ջարդված է և արաբ պատմաբանները պնդում են, վոր այդ վանդալիզմը կատարել է մեծն Նապոլեոնի մի ուսմբ: Այցելեցինք և մի ստորյերկրյա սլալատ, վորի հարստությունը կողոպտել են անգլիացիները, ինչպես և կողոպտել են ամբողջ Յեզիպոսը: Բացի Ռամզեսի բուրգից կան և ուրիշ յերկու բուրգեր, իսկ այնտեղ՝ հետու անապատի վրա յերևում են յերեք ուրիշ բուրգերի գագաթները: Արաբ առաջնորդները մեզ առաջարկեցին մտնել Ռամզեսի բուրգի ներսը: Բայց Ջհանգար խանումը ինձ զգուշացրել էր չանել այդ բանը: Նա ասում էր, վոր ինքը մի քանի անգամ փորձել էր մտնել և կես ճամբից դուրս ելին բերել նրա անշնչացած մարմինը, այնքան ողը հեղձուցիչ է այնտեղ:

Չարմանալի համառ և ձանձրալի յեն արաբ ուղտապաններն ու իշապանները, վորոնք ծառայում են տուրխտներին: Անհնարին և ազատվել նրանց անվերջ թախանձանքից՝ անպատճառ հեծյալ բարձրանալ դեպի բուրգերի ստորոտը: Յեթե չես ուզում ուղտ կամ եղ հեծնել, ստիպված ես զլուխդ ազատելու համար մի բռն

գնել, իսկ այդ բանն ուրիշ վոչինչ ե յեթե վոչ վորևե  
քարի մի կտոր: Նույնչափ ձանձրալի յեն և լուսանկա-  
րիչները այն տարբերությամբ, վոր նրանց վերաբեր-  
մամբ չեն պատմվում այնպիսի կեղտոտ բաներ, ինչ  
վոր պատմվում են ուղտապանների և իշապանների  
մասին: Մակայն այդ մասին թող խոսեն այլասեռված  
անգլիացի լորդերն ու լեդիները...

Արաբ անցյալի կոթողները կահիրեյի մզկիթներն  
են: Ի՞նչ ճարտարապետական հրաշալիքներ և ի՞նչ նըր-  
քություն ճաշակի: Հետաքրքրականը սակայն այն է,  
վոր այդ մզկիթները շինվել են վոչ արաբների, այլ  
քրիստոնյա ճարտարապետների, այն է՝ ղպտիների ձեռ-  
քով: Առհասարակ արաբ արվեստները շատ բան են  
պարտական այդ ցեղին: Պատմությունն ասում է, յերբ  
Մահամմեդը, Մեկկա վերադառնալով, կամեցավ Գայ-  
շեների աղոթարանի տեղ իր առաջին մզկիթը կառու-  
ցանել, չգտավ վոչ ճարտարապետ, վոչ արհեստավոր-  
ներ և վոչ շինության նյութեր: Բաղդի բերմամբ այդ  
միջոցին կարմիր ծովով անցնելիս և լինում մի նավ՝  
բեռնավորված մի ինչ վոր ավերված քրիստոնյա տա-  
ճարի նյութերով: Նավի վրա լինում է մի ղպտի ճար-  
տարապետ: Մահամմեդը հրամայում է բռնել նավը, և  
տեղ այդ նյութից և այդ ղպտիի ձեռքով է կառուց-  
ված տաղիքն մահմեդական մզկիթը\*: Յեզիպտոսի ու  
Սպանիայի բոլոր արաբ հրաշակերտների կառուցման  
մեջ դեկավար դերը ղպտի ճարտարապետներին և պատ-  
կանում: Յեվ այժմ այդ տաղանդավոր ազգի զավակ-

\* Յես ճարտարապետ Գարս Բայանի Արաբական արվեստը՝  
գիրքը:

ները սոսկ պահապաններ են կահիրեյի և Ելուքսորի թանգարաններում:

Յերբ ասում են, վոր անգլիացիները կողոպտում են Յեզիպատսը, հավատացեք, վոր այդ ճիշտ է: Ձկամի պատմական անկյուն, վոր նրանք ավերած չլինեն կողոպտելու նպատակով: Բրիթիշ Մյուզեյի ընդարձակ սենյակները լեցուն են Յեզիպատսից տարված թանգարժեք իրերով: Միայն վերջին ժամանակները յեզիպատական կառավարությունը խելքի յեկավ և արգելից նոր պեղումների արդյունքները յերկրից դուրս տանել:

Լամիյեն որ-որի վրա մոմի պես հալվում է: Նայիլին լալիս է նրա մասին խոսելիս: Ձհանդար խոսումը չափազանց մտադրաղ է: Յերեկ նրան չի հաջողվում լիովին հաղթահարել իր դատրի կամօքը: Մայրու զավակներ շարունակում են մեղ այցելել և մենք հաճախ միասին հնք թափառում, յերբ Ալեքսանդրիայում ենք: Մոլեռանդ արաքները կատաղի հայացքներ են ձգում մեղ վրա, տեսնելով թրքուհիներին քրիստոնյա տղամարդի հետ:

Այցելեցինք Կահիրեյի նշանավոր կենդանաբանական և բուսաբանական այգիները: Մի բարձր ծառի մոտով անցնելիս, ինձ թվաց, վոր լսում եմ բազմաթիվ մարդկային ձայներ և յերգեհանության պես մի բան: Նայեցի աջ ու ձախ վոչինչ չտեսա: Ձայները դադարեցին և փոքր ինչ անցած, նորեն կրկնվեցին: Հայտնըվեց, վոր նրանք գալիս են այդ մոտ 20 մետր բարձրություն ունեցող ծառից: Յերբ մի թիթև հողմ է անցնում, ծառի ճյուղերի միջով, նրա յերկայն, բարակ,

կլոր, ասեղնաձև տերևները, իրարու շփվելով, մի տեսակ նվաղահանդիսի պատրանք են տալիս: Զգիտե՛մ վոր դրքում յես վաղուց էյի կարդացել այդ ծառի մասին:

Այցելեցինք Հելիոպոլիսը: Դա մի նորաշեն գեղեցիկ քաղաք է Կահիրեյից 25 կիլոմետր հեռու: Այդ քաղաքը շինել է մի յիվրոպական ընկերություն Պոլոս Նուբար փառայի խողոր մասնակցությամբ: Բաղկացած է նա արաբական ճաշակի վիլլաներից: Կա տուրիստների համար շինված մի հյուրանոց, վոր իր մեծությամբ և շքեղությամբ համաշխարհային համբավ է վայելում: Վերադարձանք Կահիրե ուշ յերեկո, և յես պատեհություն ունեցա վայելելու անապատի իրիկնային գեղեցիկությունը: Բյուրավոր արմավենիների սև սիլուետները փիրուզայի պես կապույտ յերկնքի վրա գծվել էյին վորպես յիթերային ուրվականներ: Արեգակի վերջին շողերը արյան չափ թանձր կարմիր էյին: Զննիտուը շոշափում էր արմավենիների պսակաձև գագաթները և մթնոլորտը լցնում մեղմ յերաժշտական սոսափյունով: Վոչ մի տեղ արևը մայր մանելիս յերկիր ու յերկինք այնքան բազմերանգ չի զգեստավորում, վորքան այդտեղ: Տեսարանը այնքան զմայլելի յն, վոր մարդ խորին ցավակցությամբ է բաժանվում նրանից: Բնությունը ցերեկը անապատը մերկացնելով, գիշերը զարդարում է նրան իր ամբողջ շոայլությամբ: Յե՛վ այսպես, մարդը վոչ մի տեղ զրկված չն նրա աքանչելի ժպիտից:

\* \* \*

— Մի կործանեք ձեր դավակիւն, — սասցի յես մի որ Զհանդաբ խանուսմին, խորապես աղղված Լամիյեյի որ որի վրա ավելի ու ավելի մռայլվող տրամադրությունից:

— Ի՞նչ եք ուզում ասել, — գոչեց այրին զսացված:

— Ա՛յն, վոր դուք զուր եք աշխատում ձեր աղջկա մեջ սպանել ամենազոր սիրո զգացումը: Նա սիրում է մի քրիստոնյայի, թողեք սիրե, մի բռնաբարեք ընտելթյան որենքը:

— Այդ ո՞վ սասց ձեզ, միթե ինքք Լամիյեն:

— Քավլիցի: Լամիյեն յերբեք ինձ հետ չի խոսել իր սիրո մասին:

— Ուրեմն, Նայիլեն է պատմել:

— Այո:

— Յես իմ աղջկա բաղդավորությունն եմ ցանկանում:

— Նրա բաղդավորությունը հենց այդ սիրո մեջ է, իսկ դուք նրան դիմադրում եք:

Որիորդները բացակա եյին: Վոչ վոք չեր խանգարում մեր խոսակցությունը և մենք վիճաբանում էյինք յերկարորեն: Հարկավ, կրոնների տարբերության և դրանից առաջացող անհեթեթությունների մասին չեյի խոսում: Գիտեյի, վոր տասնյակ զրույցներով և հազարավոր փաստերով չեյի կարող փոխել մի մուսուլման կնոջ դարավոր հավատամքը կամ նույնիսկ ազդել նրա վրա: Յես խոսում եյի միայն Լամի-

եյի որ որի վրա քայքայվող և հյուժովող առողջութեան մասին: Այս եր իմ զորավոր զինքը:

— Ի ուք ինձ ասում եյիք, վոր Լամիյնն Յեզիպտոսում կրկազդուրվի, — ասացի յես, — այդ յես չեմ տեսնում: Ընդհակառակը, ահա յերկու ամիս ե այստեղ եմք, և խեղճ աղջիկը նիհարել ու զժգունել ե ավիլի, քան եք ծովի վրա:

— Յես ել եմ այդ նկատում, — արտասանեց այրին, խորը հառաչելով:

— Յեվ այնուամենայնիվ դուք ուզում եք զոհել ձեր զավակին մի ծերունու քմահաճույքին:

— Փաշան ծեր չե, հիսուն տարին տղամարդու համար ծերութուն չե: Փաշան հարուստ ե, նա խոշոր դիրք ունի սուլթանի մոտ, նա հարգված ե ամենքից:

— Արաքնեքը շուտ են թառամում: Տասը տարուց հետո փաշան կզառամի և կանզորանա, այն ժամանակ, յերբ Լամիյն կլինի քսան և ութ տարեկան: Տարիների այս տարբերութունը սոսկալի յե: Կնոջ իսկական ցանկութունները ճիշտ յերեսնին մոտեցալիս են զարգանում: Հիշեցեք ձեր անցյալը, և դուք կհասկանաք, թե ինչ եմ ուզում ասել: Այլևս մի կողմ եմ ձգում սիրո և ասելութեան խնդիրը:

Այրին զգալի չափով ազդվեց իմ խոսքերից, լռեց, գլուխը թեքելով կրծքին և ասպ մի վճռական շարժումն անելով, արտասանեց.

— Թողեք տեսնեմ, ալլահն ինչ ուզի ցույց կտա ինձ:

Յես վոչինչ չավելացրի, թողնելով, վոր իմ ձգած սերմն ամբանա նրա հոգու մեջ:

Շարունակում եյինք թափառել մերթ Կահիրեյի,

մերթ Ալեքսանդրիայի փողոցները: Լյուքսոր գնալու միջոցներ հունեյի: Իմ գրպանն անդոր երայդ շքեղությունն ինձ տալու: Գահ եյի նրանով իսկ, վոր կարողանում եյի ընթացիկ ծախքերս ծածկել, շնորհիվ թատերասերների, վորոնք մի քանի անգամ խաղացին իմ պիեսները Ալեքսանդրիայում և Կահիրեյում, միևնույն ժամանակ առիթ տալով ինձ շփվել յեգիպտահայ դադուկի հետ:

Յեվրոպական արվարձաններն ինձ չեյին հետաքրքրում: Սիրում եյի դեզերել յերկու քաղաքների արևելյան մասերում: Այդտեղ ժամերով դիտում եյի արար մանկանց աշխույժ վազքը նեղ ու կեղտոտ փողոցներում, լսել դերվիշների յերգը սրճարանների առջև, հիանալ նրանց խրոխտ ու ազդու ձայնով: Վորքան շատ եյին այդտեղ մուրացկանները, վորոնց ցնցոտիների հակապատկերն եյին ներկայացնում աջ ու ձախ սլացող սթոմոքիլներն ու կառքերը: Գրեթե ամեն որ հանդիպում եյի մահվան հուղարկավորության, լսում եյի վարձկան կանանց օրվեստական հեկեկանքները, տեսնում եյի նրանց կապույտ ներկված յերեսներն ու կրճքերը, վորոնք իբր թե կապտել եյին ձեռների հարվածներից: Այս ու այնտեղ յերիտասարդ կանայք ծալապատիկ նստած իրանց սուր ատամներով ծամում եյին շաքարի յեղեղը և միշտ բարձրաձայն քրքջում: Յեվ դրանց կից տեսնում եյի յեվրոպական շիկով հագնված բեյերին, վոր այնքան սիրում եյին ծամոն ծամել և խոսել անգլիյերեն ու Ֆրանսերեն:

Պատմում եյին, վոր մի քանի ամիս առաջ յեվրոպացին չէր կարող յերևալ մյուսուլմանների արվարձաններում, վոր յերևացողին հալածում եյին քարերով

և յերբնմն սպանում էյին: Այժմ այդ թշնամությունը  
սանձահարվել էր, այժմ, յերբ անդլիացիները յերկրի  
խորքերում, հետաքրքրվող աչքերից հեռու՝ գնդացի-  
ներով կոտորել էյին մոտ տասը հազար մարդ: Սա-  
կայն ըմբոստությունը տակավին շարունակվում էր,  
միայն խաղաղ ցույցերով: Ամեն ուրբաթ որ իրենց  
կրոնական ծեսերը կատարելուց հետո, արաբները խըմ-  
բովին դուրս էյին գալիս մզկիթներից և անցնում  
էյին յեվրոպական արվարձանները, յերգելով իրենց  
հայրենասիրական յերգերը: Նրանց առաջնորդում էյին  
հոգևորականները: Այդ որերը անդլիացիները գլխա-  
վոր փողոցների անկյուններում գնում էյին իրենց  
գնդացիները: Բավական էր խաղաղ ցույցը փոխվեր  
գործնականի, և ահա նորեն պիտի հոսեր բռնաբար-  
ված ազատասիրության արյունը: Իմ ժամանակ, այդ  
չպատահեց, բայց պարզ էր, վոր մի օր ամբողջ արաբ  
ցեղը պիտի կատաղի բռնակալները դեմ և տապալե  
նրանց:

\* \* \*

— Գիտե՞ք,—ասաց ինձ մի որ Նայիլեն,—կարող  
եմ ձեզ մի ուրախ լուր հաղորդել. Լամիյի ամուս-  
նությունը փառայի հետ չաջողվեց:

— Ինչո՞ւ,—հարցրի յես, անկեղծորեն ուրախա-  
նալով:

— Վորովհետև այս անգամ մայրս ել չհավանեց  
փառային: Թե ինչու—չի տսում: Այժմ մենք վերա-  
դառնում ենք Ռոդոս, և յես հույսով եմ, վոր Լամիյե-

յի սերը մի որ, վերջապես, պիտի հաղթե մորս մոլե-  
ռանդութունն ու կամակորութունը:

Յերկու ու կես ամիս Յեզիպտոսում մնալուց հե-  
տո, Լլոյդ Թրիսթրինո ընկերութեան „Nelouan“ շոգե-  
նավով ուղևորվեցինք դեպի Նապոլի: Վորոշել էյինք,  
Ամերիկա գնալուց առաջ, մի առ ժամանակ հանգստա-  
նալ Իտալիայում:

Բարձրանալով շոգենավի վրա, տեսա մի հետա-  
քըրքրական տեսարան: Վարը՝ կամուրջը լեցվել էր ա-  
րաբների բազմութեամբ: Մի ինչ վոր բարձրահասակ  
հաշմանդամ, ըստ յերևույթին հոգևորական, կենտրո-  
նում կանգնած, ճառ էր արտասանում, հայացքը դարձ-  
րած դեպի վեր, նավի առաջին կարգի տախտակամա-  
ծը: Այդտեղ խմբված էր արաբ ճամբորդների մի բազ-  
մութուն: Չգիտեմ ինչ էր ասում հետորը, բայց յու-  
րաքանչյուր մի քանի դարձվածներից հետո բարձրա-  
ձայն գոռում էր Ֆրանսերեն. «Կեցցե Փրանսիան, կեց-  
ցե նրա նավատորմիդը»: Ամբոխը կատաղի ծափահա-  
րում էր նրան:

Տախտակամածի բազմութունը աղաղակում էր.  
«Թող կորչի Անգլիան»: Այս գոչունին չէր ձայնակ-  
ցում վարի բազմութունը, այլ ընդհակառակը, կար-  
ծես, շիրթվում էր: Ինձ ասացին, վոր ճառախոսի  
խոսքը Յեզիպտոսի ազատագրութեան մասին է, վոր  
տախտակամածի բազմութունը, լինելով իտալական  
շոգենավի վրա, կարողանում է գոչել «կորչի Անգլիան»,  
իսկ վարի բազմութունը, թեև համաձայն է այդ գո-  
չյուններին, բայց վախենում է ձայնակցել:

Շոգենավը հանդարտիկ շարժվեց, սկսեց հեռա-  
նալ նավահանգստից:

— Բարի ճամբա, բարի ճամբա,— լսեցի հեռվից վողջերթի յեկած հայերի ձայները: Յեվ նրանց ճեմակ թաշկինակները հետզհետե փոքրանալով, չքացան ողի մեջ:

— Մնաս բարով փարավոնների աշխարհ, ջո քսքանչելի յերկնքով, ջո հավիտենական դարունով: Մընաք բարև բուրդեր, ձեր գոռոզ զազաթներով: Յեվ դու, անմահ սֆինքս, ջո խորհրդավորությամբ:

Կյանքիս լավագույն պահերից մեկն են յեղել այդ տասը շաբաթները այնքան հյուրասեր մի հասարակության մեջ և այնքան գրավիչ մի յերկնքի տակ:

Անցել էյինք Միջերկրականի ամբողջ յերկարությունը, այժմ կտրում էյինք նրա լայնությունը: Շոգենավը մեծ էր և մաքուր ու գեղեցիկ կահավորված: Մեր ուղեկիցների մեջ կային մի խումբ իտալացիներ: Ոպերային յերգչուհի ու յերգիչներ էյին, Կահիրում գաստրոլներ էյին ունեցել, այժմ վերադառնում էյին Իտալիա: Վորքան հաճելի էյին նրանք, յերբ յերգում էյին ու նվագում, նույնքան անախորժ էյին իբրև ուղեկիցներ: Հույների չափ աղմկարար. նրանք չգիտեյին հարգել ուրիշների հոգեկան անդորրությունն ու քղավում էյին իրենց կոկորդի ամբողջ ուժով: Այլ էյին բելգիացիները, վորոնց թվումն էր աշխարհահռչակ Ղութակահար Տոմսոնը, վոր մի քանի անգամ նվագեց ճամբորդների համար:

Յերեք որվա հանգիստ ծովագնացությունից հետո հասանք Բրինդիզի, ուր յերկաթուղի առինք դեպի Նապոլի: Կյանքումս առաջին անգամ Իտալիան տեսել էյի 1910 թվականին, այն էլ անցողիկ և նրա մի մասը միայն— Վենետիկն ու Միլանը: Այժմ, տասը

տարի անցած, վորոշել եյի այցելել Նապոլի, Հռոմ,  
և յեթե ժամանակը ներեր, Յլորենցիան:

Գարուն եր: Անցնում եյինք խաղողի ծաղկազարդ  
այգիների միջով, վորոնք տարածվում եյին անվերջ  
շարքերով: Կարծես յերկրի ամբողջ բուսականութունը  
քաղկացած է միայն խաղողի վորդերից և ձիթենիներ-  
ցից:

Նապոլի հասանք զատկի որը, գիշերով:

Մայիս 1922 թ.

Պարիզ.



## Յ Ա Ն Կ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	—	—	5
ՍՐՃԱՐԱՆԻ ՀԱՃԱԽՈՐԳԸ	—	—	7
ԳՐԱԶ	—	—	23
ԱՄԵՆՍԶՈՐԸ	—	—	29
ՍՏԱԽՈՍԸ	—	—	43
ԱԿՈՑԻ ՏՈՆԱԾԱՌԸ	—	—	49
ԿՅԱՆՔԻ ԺՊԻՏԸ	—	—	64
ՎՈՍԿԻ ԳՐԶԻԴ ՄԱՏԱՂ	—	—	69
ԿՈՍՄՈՊՈԼԻՏԸ	—	—	75
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՎՐԱ	—	—	115
ՅԵԳԻՊՏՈՍՈՒՄ	—	—	140





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045672

ԳԻՆԸ 1 Բ. 30 Կ.

Ширванзаде

Сборник мельких рассказов

Книгоиздательство „Гермес“  
Эривань, ул. Терян 4.





[504.]

A 8525